ԱԶԴԱԳԻՐ

«ՍՈԼԻՍ» ՓԲԸ
Թողարկողի ֆիրմային անվանումը

փակ բաժնետիրական ընկերություն
Կազմակերպա-իրավական ձևը

ՀՀ, Երևան 0010, Վ. Սարգսյան փ. 10 տ 98
Հեռ.՝ +374 (60) 440118
Էլ. փոստ՝ - ir@solis.am
Կայք՝ - www.Solis.am

«Ամերիաբանկ» ՓԲԸ
Գլխավոր տեղաբաշխողի անվանումը

փակ բաժնետիրական ընկերություն
Կազմակերպա-իրավական ձևը

ՀՀ, ք. Երևան 0010, Վ. Սարգսյան 2
Հեռ.՝ (+37410) 56 11 11
Էլ.-փոստ՝ info@ameriabank.am
Կայք՝ www.ameriabank.am

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:

Արժեթղթերի տեսակը՝	անվանական, արժեկտրոնային պարտատոմս (այսուհետ՝ Պարտատոմս)
Արժեթղթերի ձևը՝	ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը՝	20,000 (քսան հազար) հատ
Արժեթղթերի անվանական արժեքը՝	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար
Արժեթղթերի թողարկման ծավալը՝	2,000,000 (երկու միլիոն) ԱՄՆ դոլար
Արժեկտրոնը՝	8% (ութ տոկոս)
Շրջանառության ժամկետը՝	48 (քառասունութ) ամիս

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ 4

ՄԱՍ 1 ԱՄՓՈՓԱԹԵՐԹ 5

1.1 Տեղեկատվություն թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ 5
1.2 Թողարկողին և Պարտատոմսերին առնչվող ռիսկերը 8
1.3 Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները 11
1.4 Թողարկողի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին տեղեկություններ 12
1.5 Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և խոշոր մասնակիցները 12
1.6 Առաջարկվող արժեթղթերի հիմնական վիճակագրական տվյալները 13
1.7 Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը 14
1.8 Ամփոփ ֆինանսական տվյալներ 14

ՄԱՍ 2 ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 18

2.1 Ռիսկային գործոններ 18
2.2 Հիմնական տեղեկատվություն 19
2.3 Տեղեկատվություն՝ կապված առաջարկվող (կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող) արժեթղթերի հետ 20
2.4 Առաջարկի ժամկետները և պայմանները 30
2.5 Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը 40
2.6 Լրացուցիչ տեղեկատվություն 40
2.7 Պարտավորություններ և սահմանափակումներ 41
2.8 Պարտավորությունների չկատարման դեպք (Event of Default) 43

ՄԱՍ 3 ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 46

3.1 Անկախ աուդիտորներ 46
3.2 Ռիսկային գործոններ 46
3.3 Տեղեկատվություն թողարկողի մասին 49
3.4 Բիզնեսի նկարագիրը 52
3.5 Թողարկողի կառուցվածքը 59
3.6 Թողարկողի հիմնական միջոցները 61
3.7 Զարգացման վերջին միտումները 63
3.8 Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը 64
3.9 Թողարկողի կառավարման մարմինները և անդամները 65
3.10 Կառավարման մարմինների գործունեությունը 71

3.11 Հսկող անձինք 72
3.12 Տեղեկատվություն թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին 72
3.13 Լրացուցիչ տեղեկատվություն 73
3.14 Էական պայմանագրերը 74
3.15 Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը 74
3.16 Այլ տեղեկատվություն 74

ՄԱՍ 4 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 76
4.1 ՀԱՎԵԼՎԱԾ 1: Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը 76
4.2 ՀԱՎԵԼՎԱԾ 2: Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը 78
4.3 ՀԱՎԵԼՎԱԾ 3: Սահմանումներ 79
4.4 ՀԱՎԵԼՎԱԾ 4: Ֆինանսական հաշվետվություններ 80

Docusign Envelope ID: DFA451D3-BBAA-82F9-8342-0DD344648B08

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը»:

Ստորագրող անձինք՝

(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Անուշավան Սիմոնյան	Խորհրդի նախագահ		
Կարեն Արաբյան	Խորհրդի անդամ / Գլխավոր տնօրեն	DocuSigned by: 7781F4D09BF5417C...	5/18/2026
Գրիգոր Վարդանյան	Խորհրդի անդամ	Signed by: 62A190F8A902488...	5/18/2026
Գագիկ Ստեփանյան	Ֆինանսական տնօրեն	Signed by: Gagik Stepanyan	5/18/2026
Լուսինե Կարապետյան	Գլխավոր հաշվապահ	Signed by: Lusine Karapetyan	5/18/2026
«Ամերիաբանկ» ՓԲԸ՝ ի դեմս Շուշանիկ Հովսեփյանի	Տեղաբաշխող		5/18/2026

Ստորագրությունները հավաստում եմ՝

(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Կարեն Արաբյան	Գլխավոր Տնօրեն	DocuSigned by: 7781F4D09BF5417C...	5/18/2026

Կ.Տ.

ՄԱՍ 1ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձինք ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում են քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է սույն ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել սույն ազդագիրը (այսուհետ՝ նաև Ազդագիր) և վերջինիս կից ներկայացվող փաստաթղթերն էլեկտրոնային տարբերակով www.Solis.am և www.ameriabank.am կայքերից:

1.1 Տեղեկատվություն թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ

1.1.1 *Թողարկողի տվյալները և կապի միջոցները*

Լրիվ ֆիրմային անվանում	
Հայերեն՝	«ՍՈԼԻՍ» փակ բաժնետիրական ընկերություն
Ռուսերեն՝	Закрытое акционерное общество “Солис”
Անգլերեն՝	“SOLIS” closed joint-stock company
Կրճատ ֆիրմային անվանում	
Հայերեն՝	«ՍՈԼԻՍ» ՓԲԸ
Ռուսերեն՝	ЗАО “Солис”
Անգլերեն՝	“SOLIS” CJSC
Պետական գրանցման վայր՝	ՀՀ, Երևան 0010, Վ. Սարգսյան փ. 10 տ98
Պետական գրանցման համար՝	273.120.04865
Գործունեության վայր՝	ՀՀ, Երևան 0010, Վ. Սարգսյան փ. 10 տ98
Կապի միջոցներ՝	Հեռ.՝ +374 (60) 440118 Էլ. փոստ՝ ir@solis.am Կայք՝ - www.Solis.am

Թողարկողին առնչվող հարցերի առաջացման դեպքում կարելի է կապ հաստատել հետևյալ տարբերակներով. էլ. փոստ՝ ir@solis.am, հեռ՝ +374 (60) 440118:

1.1.2 *Թողարկողի համառոտ պատմությունը և ռազմավարությունը*

«ՍՈԼԻՍ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև «Ընկերություն», «Թողարկող», «Խումբ» կամ «ՍՈԼԻՍ») հանդիսանում է «Սոլիս» ՍՊԸ-ի իրավահաջորդը, որը հիմնադրվել է 2017 թվականին: Ընկերության ռազմավարությունն է կառուցել, տիրապետել և շահագործել արևային էներգետիկայի երկարաժամկետ ենթակառուցվածքներ՝ նպաստելով Հայաստանի էներգետիկ անվտանգության ամրապնդմանը և ապահովելով հուսալի ու մաքուր էլեկտրաէներգիայի մատակարարում՝ ինստիտուցիոնալ սեփականության և մասնագիտական կառավարման միջոցով:

Միևնույն ժամանակ, Ընկերությունը նպատակ ունի ուսումնասիրել և իրականացնել էլեկտրաէներգիայի կուտակման համակարգերի (battery storage) կառուցման հնարավորություններ՝ համակարգի ճկունության և կայունության բարձրացման, վերականգնվող էներգիայի արդյունավետ ինտեգրման, ինչպես նաև էլեկտրաէներգիայի արտադրության և սպառման հավասարակշռման ապահովման նպատակով:

Պորտֆելի արևային ֆոտովոլտային էլեկտրակայանների շահագործումը թույլ է տալիս տարեկան արտադրել շուրջ 64 ԳՎտժ մաքուր էլեկտրաէներգիա, որը բավարար է մոտ 23,500 տնային տնտեսությունների տարեկան էլեկտրաէներգիայի պահանջարկը ապահովելու համար:

Արևային էլեկտրակայանների շահագործման արդյունքում տարեկան հնարավոր է կրճատել մոտ 27,750 տոննա CO_2 արտանետումներ, ինչը էական ներդրում է կլիմայի փոփոխության դեմ պայքարում և շրջակա միջավայրի պահպանության գործում:

Ներկայումս ընկերության արևային ֆոտովոլտային կայանների պորտֆելի հզորությունը կազմում է 34 ՄՎտ՝ տեղակայված ՀՀ տարբեր մարզերում:

Ընկերությունը շահագործում է ֆոտովոլտային արևային էլեկտրակայան ՀՀ Արագածոտնի մարզի Պարտիզակ համայնքում: Նախագծի տեղակայված հզորությունը կազմում է 4 ՄՎտ: Նախագիծը շահագործման է հանձնվել 2021 թվականին և ունի օրենքով երաշխավորված էլեկտրաէներգիայի գնման 20 տարվա պայմանագիր:

2022 թվականի հունիսից ՍՈԼԻՍ-ը հանդիսանում է «Դաս Էնտերիա Զոլարքրաֆթվերք» ՓԲԸ-ի 100% բաժնետերը, որը շահագործում է 2 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայան ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում: 2023 թվականի հոկտեմբերից Ընկերությունը հանդիսանում է նաև «Սոլար Ֆարմ» ՍՊԸ-ի 100% բաժնետերը, որը շահագործում է 5 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայան ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում:

2024 թվականի մայիսից Ընկերությունը հանդիսանում է «Մոդուլ-Սան» ՍՊԸ-ի և «Մեծ Մասրիկ» ՍՊԸ-ի 100% բաժնետերը: «Մոդուլ-Սան» ՍՊԸ-ն շահագործում է 3 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայան ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքում: «Մեծ Մասրիկ» ՍՊԸ-ի ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս

համայնքում տեղակայված 5 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայանը նախատեսվում է շահագործման հանձնել 2026 թվականի մայիսին:
2024 թվականի մայիսից Ընկերությունը հանդիսանում է նաև «Սաներջի» ՍՊԸ-ի 100% բաժնետերը, որը շահագործում է 5 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայան ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքում:
2025 թվականի հունվարից «Սոլար Ֆարմ» ՍՊԸ-ն սկսել է «Սոլար Ֆարմ 2» անվանումով երկրորդ՝ 5 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային էլեկտրակայանի շահագործումը:
2026 թվականի փետրվարից Ընկերությունը հանդիսանում է նաև «Սոլար-5» ՍՊԸ-ի 100% բաժնետերը, որը շահագործում է 5 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայան ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում:
Խմբի միակ բաժնետերը և վերջնական վերահսկող անձը «ԵՄ-Հայաստան ՓՄՁ հիմնադրամն» է:
Ընկերության գործունեությունը հիմնված է ինստիտուցիոնալ կառավարման, տեխնիկական հուսալիության և արդյունավետ շահագործման սկզբունքների վրա՝ նպատակ ունենալով ձևավորել երկարաժամկետ և մասշտաբավորվող վերականգնվող էներգետիկ ենթակառուցվածք: Ընկերության ռազմավարությունը միտված է Հայաստանի էներգետիկ անվտանգության ամրապնդմանը և մաքուր էլեկտրաէներգիայի շարունակական մատակարարմանը՝ հավասարակշռելով երաշխավորված կայունությունն ու շուկայական հնարավորությունները:
Խմբի կայանների մի մասը ֆինանսավորվել է «Գերմանա-հայկական հիմնադրամ»-ի կողմից՝ գերմանական Kreditanstalt fuer Wiederaufbau (KFW) բանկից հատկացված միջոցների հաշվին, ինչը վկայում է միջազգային ստանդարտներին համապատասխանության մասին:

1.1.3 *Թողարկողի կանոնադրական կապիտալը և դրա կառուցվածքը*

Ընկերության կանոնադրական կապիտալն առ 31.12.2025թ. կազմել է 1,995,912,604.3 ՀՀ դրամ, որը բաղկացած է 1 (մեկ) հատ տեղաբաշխված բաժնետոմսից՝ 1,995,912,604.3 ՀՀ դրամ անվանական արժեքով: Թողարկողի բաժնետերերի ցանկը (ներառյալ բաժնեմասերի չափերը) ներկայացված է Ազդագրի 3.5.1 գլխում:

1.1.4 *Թողարկողի բիզնեսի նկարագիրը*

Թողարկողը հանդիսանում է վերականգնվող էներգետիկայի ոլորտում գործող ընկերություն, որի հիմնական գործունեությունը ֆոտովոլտային արևային էլեկտրակայանների կառուցումը, տիրապետումը և շահագործումն է ՀՀ տարածքում:
Ընկերության ակտիվների պորտֆելը ձևավորված է ինչպես երկարաժամկետ պայմանագրերով ապահովված (PPA), այնպես էլ ազատ շուկայի պայմաններում գործող էլեկտրակայաններից, ինչը թույլ է տալիս համադրել կանխատեսելի

դրամական հոսքերը շուկայական գների փոփոխությունից բխող եկամտաբերության հնարավորությունների հետ:
Պորտֆելի պայմանագրերով ապահովված հատվածը ներառում է ֆոտովոլտային արևային էլեկտրակայաններ, որոնք գործում են օրենքով երաշխավորված 20 տարի ժամկետով էլեկտրաէներգիայի գնման պայմանագրերի հիման վրա:
Դրանց մեջ ներառված են «Սոլիս», «Դաս Էնտերիա Զոլարքրաֆթվերք», «Մոդուլ-Սան», «Սոլար-5» ընկերությունների և «Սոլար Ֆարմ» ընկերության «Սոլար Ֆարմ» կայանը: Նշված կայանները կազմում են Ընկերության եկամուտների կայուն և կանխատեսելի հիմքը:
Միևնույն ժամանակ, Ընկերության պորտֆելի շուկայական հատվածը ներառում է ազատ շուկայի պայմաններում գործող ֆոտովոլտային արևային էլեկտրակայաններ, մասնավորապես՝ «Սաներջի» ընկերության «Գառնի 1», «Սոլար Ֆարմ» ընկերության «Սոլար Ֆարմ 2» և «Մեծ Մասրիկ» ընկերության «Արև» արևային կայանը: Այս ակտիվները ուղղված են Հայաստանի էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման պայմաններում լրացուցիչ արժեքի ստեղծմանը և եկամտաբերության բարձրացմանը:Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը

Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը ներկայացված է **Հավելված 2-ում**:

1.1.5 *Թողարկողի խմբի կառուցվածքը*

Թողարկողի խմբի կառուցվածքը հասանելի է Ազդագրի 3.5.1 գլխում:

1.1.6 *Ակտիվների որակը*

2025թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Թողարկողի ընդհանուր ակտիվների մեծությունը կազմել է 8,876 մլն ՀՀ դրամ: Նույն պահի դրությամբ կապիտալի համարժեքության գործակիցը (ընդհանուր կապիտալի հարաբերությունն ընդհանուր ակտիվներին) կազմել է 42.9%:

1.2 Թողարկողին և Պարտատոմսերին առնչվող ռիսկերը

1.2.1 *Թողարկողին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը*

Մրցակցության ռիսկ: Թեև ՀՀ-ում վերականգնվող էներգետիկայի, մասնավորապես՝ արևային էներգետիկայի շուկան բնութագրվում է աճող մրցակցությամբ, երաշխավորված վաճառք ունեցող կայանները գործնականում մրցակցության էական ռիսկ չեն կրում:
Ազատ շուկայում գործող կայանների դեպքում մրցակցության ռիսկը, թեև առկա է, չի վերաբերում էլեկտրաէներգիայի իրացմանը, այլ վերաբերում է դրա վաճառքի գնին: Ներկայում գործող կարգավորումների համաձայն՝ արտադրված ամբողջ ծավալը ենթակա է վաճառքի, հետևաբար էլեկտրաէներգիան չվաճառելու ռիսկը գործնականում բացակայում է, և ենթադրվում է, որ արտադրված էլեկտրաէներգիան ամբողջությամբ կիրացվի: Մրցակցությունը դրսևորվում է միայն գնային

տատանումների տեսքով, որոնք պայմանավորված են առաջարկի և պահանջարկի փոփոխություններով ազատ շուկայում:

Վարկային ռիսկ: Ընկերությունն ունի պարտքային բեռ՝ ներգրավված վարկերի տեսքով, որոնց սպասարկումը կատարվում է ընթացիկ գործունեությունից ձևավորվող դրամական հոսքերի հաշվին: Արևային էլեկտրակայանների շահագործման ընթացքում առաջացող հնարավոր տեխնիկական խափանումները և ազատ շուկայում գնային տատանումները կարող են բացասաբար անդրադառնալ Ընկերության դրամական հոսքերի վրա և սահմանափակել վարկային պարտավորությունների պատշաճ և ժամանակին սպասարկման կարողությունը, ինչը կարող է հանգեցնել ֆինանսական վիճակի վատթարացման կամ լրացուցիչ ֆինանսավորման անհրաժեշտության:

Տնտեսական, քաղաքական և սոցիալական ռիսկեր: Արևային էներգետիկայի ոլորտում գործունեության հաջողությունը սերտորեն կապված է ՀՀ-ում ընդհանուր տնտեսական, քաղաքական և սոցիալական զարգացումների հետ: Տնտեսական աճի դանդաղումը, ֆինանսական շուկաների անկայունությունը, պետական ծախսերի կրճատումը կամ քաղաքական անորոշությունները կարող են բացասաբար անդրադառնալ ներդրումային միջավայրի, էներգետիկ ոլորտի զարգացման ծրագրերի և էլեկտրաէներգիայի պահանջարկի վրա:
Սոցիալական կամ արտակարգ իրավիճակները (այդ թվում՝ռազմական կամ այլ ֆորսմաժորային զարգացումներ) կարող են խաթարել շինարարական կամ շահագործման գործընթացները, սարքավորումների մատակարարումները և ֆինանսավորման հասանելիությունը, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Ոլորտի կարգավորման դաշտի փոփոխությունների հետ կապված ռիսկ: Արևային էներգետիկայի ոլորտը ՀՀ-ում կարգավորվող ոլորտ է և ենթակա է պետական մարմինների վերահսկողության: Ընկերության գործունեությունը կախված է գործող օրենսդրությունից, լիցենզավորման պայմաններից, սակագնային քաղաքականությունից, ինչպես նաև վերականգնվող էներգետիկայի ոլորտում կիրառվող պետական աջակցության մեխանիզմներից:
Օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի փոփոխությունները, սակագների վերանայումը, էլեկտրաէներգիայի պարտադիր գնման պայմանների փոփոխությունը կամ պետական քաղաքականության առաջնահերթությունների վերանայումը կարող են բացասաբար անդրադառնալ Ընկերության գործունեության արդյունքների, եկամուտների կանխատեսելիության և շահութաբերության վրա:
Նման փոփոխությունները կարող են էական ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական արդյունքների, դրամական հոսքերի և ներդրումային ծրագրերի իրագործման վրա:

Բնական աղետների ռիսկ: Արևային էլեկտրակայանների գործունեությունը ենթակա է բնական և կլիմայական գործոնների ազդեցությանը: Երկրաշարժերը, կարկուտը, ուժեղ քամիները, հրդեհները, կամ այլ բնական աղետներ կարող են վնասել կայանների ենթակառուցվածքները, սարքավորումները և էլեկտրական ցանցին միացման համակարգերը:
Նման դեպքերը կարող են հանգեցնել էլեկտրաէներգիայի արտադրության ժամանակավոր կամ երկարատև դադարեցման, վերականգնման և վերանորոգման լրացուցիչ ծախսերի, ինչպես նաև եկամուտների կրճատման:
Այնուամենայնիվ, նմանատիպ ռիսկերի բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով՝ Խմբի բոլոր ընկերություններն ու դրանց պատկանող արևային կայանները փաստացի ունեն ապահովագրություն համապատասխան ռիսկերի նկատմամբ:

1.2.2 *Պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը*

Տոկոսադրույքի ռիսկ: Շուկայում Պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն տոկոսադրույքների բարձրացումը, այլ հավասար պայմաններում, հանգեցնում է Պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

Շուկայական ռիսկ: Երկրորդային շուկայում Պարտատոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող են նվազել ներքին/միջազգային տնտեսություններում տնտեսական ընթացիկ ցուցանիշների և դրանց փոփոխությունների սպասումների հետ կապված: Ներդրողը պետք է հաշվի առնի, որ Պարտատոմսերի գները շուկայում կարող են ժամանակի ընթացքում իջնել կամ բարձրանալ:

Վերաներդրման ռիսկ: Վերաներդրման ռիսկը պայմանավորված է Պարտատոմսերից պարբերաբար ստացվող արժեկտրոնային եկամուտների առնվազն համարժեք եկամտաբերությամբ (ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությամբ) ներդրում կատարելու հնարավորության բացակայությամբ:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները Պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում Թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում Թողարկողի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման, արժեկտրոնային վճարումներ իրականացնելու կամ Պարտատոմսերն իրենց անվանական արժեքով մարման անհնարինության և հավանական սնանկացման հետ:

Արտարժութային ռիսկ: Արտարժութային ռիսկն առկա է այն ներդրողների մոտ, ովքեր, իրենց դրամական միջոցները, Պարտատոմսերում ներդնելու նպատակով, պետք է փոխարկեն մի արժույթից մեկ այլ արժույթի:

Իրացվելիության ռիսկ: Թողարկողը չի կարող երաշխավորել, որ Պարտատոմսերի շրջանառության ողջ ժամկետի ընթացքում ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել Պարտատոմսերը երկրորդային շուկայում (կարգավորվող շուկայում) իրենց համար տնտեսապես շահավետ գնով:

Գնաճի կամ գնողունակության ռիսկ: ՀՀ-ում գնաճի առկայության պարագայում, Թողարկողի կողմից Պարտատոմսերի դիմաց առաջարկվող անվանական արժեկտրոնային եկամտաբերությունը գնահատելիս ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրական եկամտաբերությունը կարող է լինել անվանական արժեկտրոնային եկամտաբերությունից ավելի ցածր:

1.3 Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

Ընկերության տնտեսական գործունեության զարգացման հիմնական ուղղությունը վերականգնվող էներգետիկայի ոլորտում ակտիվների պորտֆելի ընդլայնումն է և երկարաժամկետ, կանխատեսելի եկամուտների ապահովումը: Այդ համատեքստում Ընկերությունը 2026 թվականին ձեռք է բերել ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում տեղակայված 5 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայան շահագործող «ՍՈԼԱՐ-5» ՍՊԸ-ն: Նշված կայանը ունի 20 տարվա ժամկետով էլեկտրաէներգիայի գնման պայմանագիր (PPA), ինչը ակնկալվում է, որ դրական ազդեցություն կունենա Թողարկողի եկամուտների կայունության և ֆինանսական ցուցանիշների վրա:

- 2025 թվականին Ընկերության ընդհանուր հասույթը կազմել է շուրջ 878 մլն ՀՀ դրամ, որի աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 80%:
- 2025 թվականին Ընկերության EBITDA ցուցանիշը (հաշվարկված Ազդագրի 2.7.1 ենթագլխով սահմանված կարգով) կազմել է շուրջ 700 մլն ՀՀ դրամ, որի աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 99%:
- EBITDA ցուցանիշի մարժան կազմել է շուրջ 80%:
- 2025 թվականին Ընկերության զուտ շահույթը կազմել է շուրջ 293 մլն ՀՀ դրամ, որի աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 993%:
- Զուտ շահույթի մարժան կազմել է շուրջ 33%:

Հաշվետու ժամանակահատվածում Թողարկողի գործունեության վրա էական բացասական ազդեցություն ունեցող գործոններ չեն արձանագրվել: Ընկերության նկատմամբ դատական հայցեր կամ դատական գործընթացներ չեն իրականացվում:

Թողարկողը գործում է գործող օրենսդրության պահանջներին համապատասխան, ունի անհրաժեշտ լիցենզիաներ իր գործունեությունն իրականացնելու համար:

Սպասվող կազմակերպական կամ կառավարչական փոփոխություններ, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Թողարկողի ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա, ներկայումս չեն նախատեսվում:

1.4 Թողարկողի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին տեղեկություններ

Թողարկողի 2023թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է «ՖԻՆՍ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ-ն: Վերջինս 2022 թ. մայիսի 27-ին գրանցվել է Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների ռեեստրում և հիմնական գրանցման գրառման համարն է 1 22 0700:

Հասցե՝ ք. Երևան, Պարոնյան 9 բն. 12

հեռ.՝ +374 60 525 025
կայք՝ https://fins.am/

Թողարկողի 2024թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն: 2025թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտը նույնպես իրականացնում է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն: Վերջինս 2020թ. դեկտեմբերի 28-ին գրանցվել է Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների ռեեստրում և հիմնական գրանցման գրառման համարն է 2 20 0077:
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0015, Գրիգոր Լուսավորչի 9
հեռ.՝ +374 10 50 09 64/61
կայք՝ www.grantthornton.am

1.5 Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և խոշոր մասնակիցները

Թողարկողի կառավարման մարմիններն են՝ Ընկերության ընդհանուր ժողովը (այսուհետ Ընդհանուր Ժողով), Տնօրենների խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) և գործադիր մարմինը՝ Գլխավոր տնօրենը:

Թողարկողի մասնակիցներն են՝

Մասնակից	Բաժնեմաս (ՀՀ դրամ)	Բաժնեմաս (%)
ԵՄ- Հայաստան ՓՄՁ հիմնադրամ	1,995,912,604.30	100%

Թողարկողի գործադիր մարմնի կառուցվածքը՝

Անունը, ազգանունը	Պաշտոնը	Փորձառությունը ոլորտում
Կարեն Արաբյան	Գլխավոր տնօրեն	20 և ավելի տարի

Թողարկողի աշխատակիցների ընդհանուր թիվն առ 31.12.2025թ. 7 է:

1.6 Առաջարկվող արժեթղթերի հիմնական վիճակագրական տվյալները

Թողարկվող Պարտատոմսերն անվանական ոչ փաստաթղթային են, բաժանելի և փոխարկելի չեն:

Պարտատոմսերի դիմաց տոկոսային եկամուտը վճարվելու է արժեկտրոնների տեսքով:

Պարտատոմսերի թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը կազմում է 2,000,000 (երկու միլիոն) ԱՄՆ դոլար: Թողարկվող և տեղաբաշխվող (վաճառվող) Պարտատոմսերի քանակը 20,000 (քսան հազար) հատ է: Մեկ Պարտատոմսի անվանական արժեքը կազմում է 100 (հարյուր) ԱՄՆ դոլար:

Թողարկման արժույթը ԱՄՆ դոլարն է:

Պարտատոմսերը տեղաբաշխվելու և մարվելու են ԱՄՆ դոլարով:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտը հաշվարկվելու և վճարվելու է ԱՄՆ դոլարով:

Պարտատոմսերի դիմաց հաշվարկվելու և վճարվելու է արժեկտրոնային անվանական եկամուտ, որի տարեկան մեծությունը, արտահայտված որպես տոկոս Պարտատոմսի անվանական արժեքից (տարեկան արժեկտրոնային եկամտաբերություն), կազմում է 8% (ութ տոկոս):

Պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային անվանական եկամուտը վճարվելու է եռամսյակային պարբերականությամբ՝ Պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային եկամտաբերության 1/4 (մեկ չորրորդ) չափով:

Արժեկտրոնների հաշվարկման օր է համարվելու Պարտատոմսերի տեղաբաշխումը սկսելու օրվան հաջորդող 3-րդ, 6-րդ, 9-րդ, 12-րդ, 15-րդ, 18-րդ, 21-րդ, 24-րդ, 27-րդ, 30-րդ, 33-րդ, 36-րդ, 39-րդ, 42-րդ, 45-րդ և 48-րդ ամիսների համապատասխան օրերը:

Պարտատոմսերի վաղաժամկետ մարման հնարավորություն (թողարկողի կամ ներդրողի նախաձեռնությամբ (քոլ օպցիոն, փութ օպցիոն)) նախատեսված չէ:

Ընկերությունը Պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված միջոցները ուղղելու է կապիտալ ծախսերին և գործունեության ընդլայնմանը և/կամ վարկային պարտավորությունների վերաֆինանսավորմանը: Նախատեսվում է

ներգրավված միջոցների մոտ 75%-ն ուղղել գործող վարկերի վերաֆինանսավորմանը, իսկ մոտ 25%-ը՝ կապիտալ ծախսերին և գործունեության ընդլայնմանը:

1.7 Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը

Պարտատոմսերը տեղաբաշխվելու են ֆոնդային բորսայից դուրս, ուղիղ վաճառքի միջոցով:

Պարտատոմսերի տեղաբաշխումը սկսվելու է Ազդագիրը գրանցելու մասին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ նաև՝ ՀՀ ԿԲ) նախագահի որոշման օրվան հաջորդող 10-րդ (տասներորդ) աշխատանքային օրը և ավարտվելու է տեղաբաշխման սկիզբը համարվող օրվան հաջորդող 40-րդ (քառասուներորդ) աշխատանքային օրը (կամ ավելի վաղ, եթե Պարտատոմսերն ամբողջությամբ վաճառվեն ավելի կարճ ժամկետում):

1.8 Ամփոփ ֆինանսական տվյալներ

1.8.1 *ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ*

հազ. դրամ

Ցուցանիշի անվանումը	2025թ. (Աուդիտ անցած)	2024թ. (Աուդիտ անցած)	2023թ. (Աուդիտ անցած)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	877,904	487,422	266,100
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	(239,940)	(181,141)	(79,565)
Համախառն շահույթ (վնաս)	**637,964**	**306,281**	**186,535**
Իրացման ծախսեր	(21,320)	(25,630)	(11,281)
Վարչական ծախսեր	(111,880)	(66,042)	(22,288)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	**504,764**	**214,609**	**152,966**
Գործառնական այլ եկամուտներ	0	0	0
Գործառնական այլ ծախսեր	0	0	0
Գործառնական շահույթ (վնաս)	**504,764**	**214,609**	**152,966**
Ֆինանսական ծախսեր	(194,323)	(179,203)	(153,958)
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս)	0	0	0
Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից շահույթ (վնաս)	0	0	0
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)	33,826	0	0
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	**344,267**	**35,406**	**(992)**
Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս)	0	0	0
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	**344,267**	**35,406**	**(992)**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	(50,904)	(8,575)	16,564
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	**293,363**	**26,831**	**15,572**

1.8.2 ԱՄՓՈՓ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

հազ. դրամ

Ցուցանիշի անվանումը	2025թ. (Աուդիտ անցած)	2024թ. (Աուդիտ անցած)	2023թ. (Աուդիտ անցած)
Հիմնական միջոցներ	7,384,447	6,429,464	3,486,060
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	0	0	0
Ոչ նյութական ակտիվներ	575,792	592,077	462,114
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	0	0	0
Տրված Կանխավճարներ	113,996	404,777	392,242
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	0	0	0
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	1,682	1,469	1,218
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	**8,075,917**	**7,427,787**	**4,341,634**
Պաշարներ	17,400	0	0
Տրված ընթացիկ կանխավճարներ	0	0	0
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	71,614	44,786	27,249
Այլ դեբիտորական պարտքեր	118,212	267,807	69,804
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	0	0	0
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	570,385	333,835	526,077
Այլ ընթացիկ ակտիվներ	12,431	3,036	71
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	**790,042**	**649,464**	**623,201**
Ընդամենը ակտիվներ	**8,865,959**	**8,077,251**	**4,964,835**
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	1,995,913	300,001	300,001
Էմիսիոն եկամուտ	1,125,188	0	0
Կուտակված շահույթ	637,622	344,259	317,428
Պահուստային կապիտալ	0	0	0
Սեփական կապիտալի այլ տարրեր	39,675	2,821,100	1,337,122
Ընդամենը սեփական կապիտալ	**3,798,398**	**3,465,360**	**1,954,551**
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	4,340,661	3,785,279	2,705,500
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	219,755	150,929	53,599
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	**4,560,416**	**3,936,208**	**2,759,099**
Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	367,511	418,056	185,177
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	6,152	210,951	62,220
Ստացված ընթացիկ կանխավճարներ	0	8,857	0
Այլ կրեդիտորական պարտքեր	129,659	35,573	2,282
Այլ ընթացիկ պարտավորություններ	3,823	2,246	1,506
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	**507,145**	**675,683**	**251,185**
Ընդամենը պարտավորություններ	**5,067,561**	**4,611,891**	**3,010,284**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	**8,865,959**	**8,077,251**	**4,964,835**

1.8.3 ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ

հազ.դրամ

Ցուցանիշի անվանումը	2025թ. (Աուդիտ անցած)	2024թ. (Աուդիտ անցած)	2023թ. (Աուդիտ անցած)
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին	333,835	526,077	47,434
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	410,697	104,631	82,089
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(541,104)	(2,374,539)	(744,263)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	366,393	2,089,789	1,136,313

Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	564	(12,123)	4,504
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	570,385	333,835	526,077

1.8.1 *ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ*

Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ներկայացված են Հավելված 1-ում:

Ցուցանիշի անվանումը	2025թ.	2024թ.	2023թ.
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	293,363,000	26,831,000	15,572,000
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	8.1%	1.0%	1.2%
Ակտիվների շահութաբերություն (ROA)	3.5%	0.4%	0.4%
Զուտ շահույթի մարժա (NPM)	33.4%	5.5%	5.9%
Կապիտալի համարժեքության գործակից	0.43	0.43	0.39
Ֆինանսական կախվածության գործակից	1.33	1.33	1.54
Բացարձակ իրացվելիության գործակից	1.12	0.49	2.09
Ընթացիկ իրացվելիության գործակից	1.50	0.96	2.48
Ընդհանուր իրացվելիության գործակից	1.56	0.96	2.48
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	15.1	13.5	13.9
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	24.2	27.0	26.2
Պաշարների շրջանառելիության գործակից*	-	-	-
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով*	-	-	-
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	2.2	1.3	2.5
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	165	275	146

**Կիրառելի չեն: Ոլորտի ընկերությունները իրենց բնույթով չեն ունենում ապրանքային պաշարներ, և հետևաբար նման գործակիցներ չեն հաշվարկվում:*

<u>ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ</u>

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

(ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՍՈՎ) ԿՐՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԵԹԵ ԱՅՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ Է ԱԶԴԱԳՐԻ ՄՅՈՒՍ ՄԱՍԵՐԻ ՀԵՏ ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

ՄԱՍ 2 ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2.1 Ռիսկային գործոններ

Տոկոսադրույքի ռիսկ: Տնտեսությունում տոկոսադրույքների փոփոխությունը կարող է հանգեցնել ներդրողների կողմից Պարտատոմսերի նկատմամբ եկամտաբերության ցուցանիշի վերանայման: Ընդ որում, երկրորդային շուկայում Պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն տոկոսադրույքների բարձրացումն, այլ հավասար պայմաններում, հանգեցնում է Պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

Շուկայական ռիսկ: Երկրորդային շուկայում Պարտատոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող են (կարճաժամկետ կամ երկարաժամկետ ժամանակամիջոցում) նվազել ներքին և միջազգային տնտեսություններում տնտեսական ընթացիկ ցուցանիշների և դրանց փոփոխությունների սպասումների հետ կապված: Ներդրողը պետք է հաշվի առնի, որ Պարտատոմսերի գները շուկայում կարող են տատանվել և ժամանակի ընթացքում կարող են իջնել կամ բարձրանալ: Միևնույն ժամանակ ներդրողը պետք է հաշվի առնի, որ, անկախ շուկայում գների փոփոխություններից և սպասումներից, Թողարկողի կողմից վճարվող արժեկտրոնների և Պարտատոմսի մարման գումարային մեծություններն, արտահայտված թողարկման արժույթով, չեն փոփոխվում:

Վերաներդրման ռիսկ: Այն բոլոր ներդրողները, որոնք Պարտատոմսերը ձեռք կբերեն դրանք մինչև մարումը պահելու և ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությունն ապահովելու ու ստանալու համար, պետք է նկատի ունենան, որ իրենց վրա են վերցնում վերաներդրման ռիսկ, որը պայմանավորված է Պարտատոմսերից պարբերաբար ստացվող արժեկտրոնային եկամուտներն առնվազն համարժեք եկամտաբերությամբ (ձեռք բերման/գնման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությամբ) ներդնելու հնարավորությունների հավանական բացակայությամբ:

Վարկային (դեֆոլտի) ռիսկ: Ներդրողները Պարտատոմսերը ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում Թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում Թողարկողի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման, արժեկտրոնային վճարումներ իրականացնելու կամ Պարտատոմսերն իրենց անվանական արժեքով մարելու անհնարինության և հավանական սնանկացման հետ:

Արտարժութային ռիսկ: Պարտատոմսերն արտահայտված են ԱՄՆ դոլարով, և հետևապես, նեդրումները և ներդրումների ետ ստացումը (Պարտատոմսերի ձեռք բերման և Պարտատոմսերի մարման դիմաց ստացվող գումարներ) իրականացվելու են ԱՄՆ դոլարով: Ուստի, այս իմաստով արտարժութային ռիսկն առկա է այն ներդրողների մոտ, ովքեր իրենց դրամական միջոցները Պարտատոմսերում ներդնելու նպատակով պետք է փոխարկեն մի արժույթից մեկ այլ արժույթի:

Իրացվելիության ռիսկ: Թողարկողը Պարտատոմսերը ցուցակելու և/կամ առևտրին թույլատրելու նպատակով դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ (այսուհետ նաև Բորսա կամ Ֆոնդային բորսա), ինչպես նաև երկրորդային շուկայում Պարտատոմսերի իրացվելիությունն ապահովելու համար ներգրավելու է շուկա ստեղծող/ներ: Այնուամենայնիվ, Թողարկողը չի կարող երաշխավորել, որ Պարտատոմսերի շրջանառության ողջ ժամկետի ընթացքում ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել Պարտատոմսերը երկրորդային շուկայում իրենց համար տնտեսապես շահավետ գնով և ծավալով:

Գնաճի կամ գնողունակության ռիսկ: Գնաճի առկայության պարագայում, Թողարկողի կողմից Պարտատոմսերի դիմաց առաջարկվող անվանական արժեկտրոնային եկամտաբերությունը գնահատելիս ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրական եկամտաբերությունը կարող է լինել անվանական արժեկտրոնային եկամտաբերությունից ավելի ցածր (գնաճի չափով):

2.2 Հիմնական տեղեկատվություն

Ընկերությունը Պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված միջոցները ուղղելու է կապիտալ ներդրումների իրականացմանը և/կամ վարկային պարտավորությունների վերաֆինանսավորմանը: Նախատեսվում է ներգրավված միջոցների մոտ 75%-ն ուղղել գործող վարկերի վերաֆինանսավորմանը, իսկ մոտ 25%-ը՝ կապիտալ ծախսերին և գործունեության ընդլայնմանը: Թողարկողը հավաստիացնում է, որ Պարտատոմսերի տեղաբաշխումից ներգրավված միջոցները որևէ կերպ չի օգտագործի կամ փոխառություն տրամադրի կամ այլ կերպ հասանելի դարձնի որևէ այլ անձի, որպեսզի՝ (ա) ուղղակիորեն կամ անուղղակիորեն ֆինանսավորի որևէ անձի հետ ցանկացած գործունեություն կամ բիզնես, որը նման ֆինանսավորման պահին կհանդիսանա ԱՄՆ կառավարության, ՄԱԿ-ի, Եվրոպական Միության (կամ նրա անդամ պետություններից որևէ մեկի), Միացյալ Թագավորության, Շվեյցարիայի, Կանադայի, Ճապոնիայի կամ նշվածներից որևէ մեկի կառավարական հաստատությունների և գործակալությունների կողմից կիրառվող որևէ պատժամիջոցի կամ սահմանափակող միջոցների (այսուհետ՝ Պատժամիջոցներ) առարկա կամ թիրախ, (բ) ուղղակիորեն կամ անուղղակիորեն ֆինանսավորի որևէ երկրում/տարածքում կամ երկիրը/տարածքը ներառող կամ երկրի/տարածքի կողմից ցանկացած գործունեություն կամ բիզնես, որը հանդիսանում է երկրի/տարածքի նկատմամբ կիրառվող Պատժամիջոցների առարկա կամ թիրախ, կամ (գ) որևէ այլ ձևով հանգեցնի որևէ անձի (ներառյալ Ազդագրի ներքո Պարտատոմսերի տեղաբաշխմանը մասնակցող ցանկացած անձի, լինի դա Տեղաբաշխող, խորհրդատու, ներդրող կամ այլ անձ) կողմից Պատժամիջոցների խախտման:

2.3 Տեղեկատվություն՝ կապված առաջարկվող (կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող) արժեթղթերի հետ

2.3.1 *Արժեթղթերի տեսակը և դասը*

Թողարկվող Պարտատոմսերն անվանական արժեկտրոնային պարտատոմսեր են, անբաժանելի են և փոխարկելի չեն: Պարտատոմսերը դեռևս չունեն տարբերակիչ ծածկագիր:

2.3.2 *Երկիրը*

Պարտատոմսերը թողարկվել են ՀՀ տարածքում՝ համաձայն ՀՀ օրենսդրության և ենթաօրենսդրական ակտերի: Վեճերի և դատական գործընթացների առկայության դեպքերում վերջիններս կարգավորվելու են ՀՀ օրենսդրության համաձայն:

2.3.3 *Արժեթղթերի ձևը*

Թողարկված Պարտատոմսերը ոչ փաստաթղթային են, իսկ Պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը կվարի «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ը (ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 26/1 5-րդ հարկ, հեռ.՝ (+374) 60 615555)՝ ըստ «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Դեպոզիտարիա) համապատասխան կանոնների և ընթացակարգերի:

2.3.4 *Արժեթղթի անվանական արժեքը և քանակը*

Մեկ Պարտատոմսի անվանական արժեքը կազմում է 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար: Թողարկվող և տեղաբաշխվող (վաճառվող) Պարտատոմսերի քանակը 20,000 (քսան հազար) հատ է:

2.3.5 *Թողարկման արժույթը*

Թողարկման արժույթը ԱՄՆ դոլարն է:

2.3.6 *Առաջարկվող արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն*

Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի՝ Թողարկողի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ՝

1) առաջին հերթին բավարարվում են լուծարվող իրավաբանական անձի գույքի գրավով ապահովված պարտավորությունների մասով պարտատերերի պահանջները.

2) երկրորդ հերթին բավարարվում են այն քաղաքացիների պահանջները, որոնց առջև լուծարվող իրավաբանական անձը պատասխանատվություն է կրում նրանց

կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար՝ համապատասխան պարբերական վճարումների կապիտալացման միջոցով.

3) երրորդ հերթին վճարվում է աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց արձակման նպաստների, աշխատավարձի և հեղինակային պայմանագրերով վարձատրությունը.

4) չորրորդ հերթին մարվում է պետական բյուջե կատարվող պարտադիր վճարների պարտքը.

5) հինգերորդ հերթին հաշվարկներ են կատարվում մնացած պարտատերերի հետ՝ բացառությամբ ստորադաս փոխառություններով պարտատերերի.

6) վեցերորդ հերթին հաշվարկներ են կատարվում ստորադաս փոխառություններով պարտատերերի հետ:

Յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո: Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարվում են հինգերորդ հերթին:

Եթե լուծարումը պայմանավորված է Թողարկողի սնանկությամբ, ապա պարտատերերի պահանջները բավարարվում են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Պարտատոմսերի վերադասակարգում չի նախատեսվում:

2.3.7 *Արժեթղթերից բխող իրավունքները*

Պարտատոմսերից բխող իրավունքներն են.

1) ստանալ Պարտատոմսերով նախատեսված արժեկտրոնային եկամուտները և մարման գումարը՝ ըստ Ազդագրով սահմանված կարգի: Արժեկտրոնային եկամտի ստացման և շրջանառության ժամկետի վերջում Պարտատոմսերի մարման գումարի ստացման իրավունքի իրականացման համար ներդրողներից լրացուցիչ գործողությունների կատարում չի պահանջվում, և արժեկտրոնային եկամուտն, ինչպես նաև Պարտատոմսի մարման գումարը փոխանցվելու են ներդրողի բանկային հաշվին՝ համաձայն Դեպոզիտարիայի և Հաշվի օպերատորի հետ կնքվելիք Արժեթղթերի գծով եկամուտների փոխանցման եռակողմ պայմանագրի (այսուհետ՝ Եռակողմ պայմանագիր),

2) Թողարկողի կողմից Պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սահմանված ժամկետից ուշ վճարելու դեպքում ձեռնարկել Պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող իր պահանջների բավարարման ուղղությամբ օրենսդրությամբ թույլատրվող գործողություններ,

3) Գրավադրել Պարտատոմսերն օրենսդրությամբ սահմանված կարգով,

4) Իր ցանկությամբ օտարել Պարտատոմսերը Ֆոնդային բորսայում (Ֆոնդային բորսայում ցուցակված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված կարգով: Ընդ որում, ներդրողները պետք է հաշվի առնեն, որ Օրենքով արգելվում է կարգավորվող շուկայից (ֆոնդային բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված կորպորատիվ արժեթղթեր,

5) Օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

Միաժամանակ Պարտատոմսի սեփականատերը պարտավոր է Պարտատոմսերի թողարկման պայմաններով սահմանված ժամկետներում իրականացնել Պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարների փոխանցում համապատասխան բանկային հաշվին, կատարել Պարտատոմսերի ձեռքբերումից, օտարումից և այլ գործողություններից ծագող դրամային և ոչ դրամային ցանկացած պարտավորություն, ինչպես նաև կրել օրենսդրությամբ նախատեսված այլ պարտականություններ:

2.3.8 *Անվանական տոկոսադրույքը և այդ տոկոսների վճարման պայմանները*

Պարտատոմսերի դիմաց հաշվարկվելու և վճարվելու է արժեկտրոնային անվանական եկամուտ, որի տարեկան մեծությունը, արտահայտված որպես տոկոս Պարտատոմսի անվանական արժեքից (տարեկան արժեկտրոնային եկամտաբերություն), կազմում է 8% (ութ տոկոս):

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտը հաշվարկվելու և վճարվելու է ԱՄՆ դոլարով:

Արժեկտրոնների հաշվարկման օր է համարվելու Պարտատոմսերի տեղաբաշխումն սկսելու օրվան հաջորդող 3-րդ, 6-րդ, 9-րդ 12-րդ, 15-րդ, 18-րդ, 21-րդ, 24-րդ, 27-րդ, 30-րդ, 33-րդ, 36-րդ, 39-րդ, 42-րդ, 45-րդ և 48-րդ ամիսների համապատասխան օրերը:

Արժեկտրոնները Պարտատոմսերի սեփականատերերին և/կամ անվանատերերին վճարվելու են արժեկտրոնների հաշվարկման օրը: Եթե հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնը վճարման օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Արժեկտրոնները (տոկոսագումարները) ստանալու իրավունք ունեն Պարտատոմսերի արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրվա վերջի (ժամը 23:59) դրությամբ Պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք (սեփականատերերը կամ անվանատերերը):

Արժեկտրոնների վճարումների համար նախատեսվող գումարներն անվանատերերին և/կամ սեփականատերերին վճարվում են մինչև 0.01 ԱՄՆ դոլար ճշտությամբ (ընդ

որում կլորացումը իրականացվում է թվաբանական կլորացման կանոններին համաձայն՝ մինչև ամենամոտ ամբողջ հարյուրերորդական թիվը):

Համաձայն Եռակողմ պայմանագրի՝ Դեպոզիտարիան Թողարկողի հանձնարարությամբ և Հաշվի օպերատորի միջնորդությամբ Թողարկողին մատուցում է արժեթղթերի գծով եկամուտների փոխանցման և արժեթղթերի մարման ծառայություններ: Արժեկտրոնի գումարները վճարվում են անկանխիկ ձևով: Դրամական միջոցների այն մասը, որը հնարավոր չի լինի փոխանցել արժեթղթերի սեփականատիրոջը և/կամ անվանատիրոջը Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում Պարտատոմսի սեփականատերերի ռեեստրի փակման օրվա դրությամբ ռեեստրում գրանցված բանկային հաշիվների բացակայության կամ դրանց ճշտման անհնարինության պատճառով, կվերադարձվի Թողարկողի համապատասխան բանկային հաշվին: Այնուհետև Թողարկողը կգործադրի իրենից կախված բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողին բոլոր հնարավոր կապի միջոցներով հայտնաբերելու ու նրան վճարման ենթակա գումարը փոխանցելու համար: Ներդրողին հայտնաբերելու անհնարինության դեպքում վճարման ենթակա գումարը մուծվելու է նոտարի կամ դատարանի (օրենքով սահմանված դեպքերում) դեպոզիտ համաձայն ՀՀ օրենսդրության:

Համաձայն Եռակողմ պայմանագրի՝ Դեպոզիտարիան, արժեկտրոնի գումարների վճարման հիմքով, մինչև արժեկտրոնների վճարման օրվա 14:00 ՀՀ ԿԲ է ներկայացնում տեղեկատվություն Պարտատոմսի արժեկտրոնների վճարման փաստի մասին:

Հաշվի առնելով Պարտատոմսերի անվանական արժեքի արժույթը և արժեկտրոնի գումարների հետ կապված հնարավոր միջբանկային փոխանցումների անհրաժեշտությունը՝ ներդրողները պետք է նկատի ունենան, որ արժեկտրոնի գումարների փոխանցման (միջբանկային փոխանցումներ) հետ կապված հնարավոր միջնորդավճարների ծախսերը պետք է կատարվեն ներդրողի հաշվին, հետևաբար նման դեպքերում ներդրողները արժեկտրոնի գումարները կստանան պահումներով՝ ըստ միջնորդ բանկերում /առկայության դեպքում/ գործող սակագների:

Արժեկտրոնի գումարի հաշվարկման համար հիմք է ընդունվում հետևյալ բանաձևը՝

ԱԳ = (FV x C) / k,

որտեղ՝

ԱԳ-ն արժեկտրոնի գումարն է,

FV- մեկ Պարտատոմսի անվանական արժեքն է,

C- տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,

k-ն մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է (արժեկտրոնների եռամսյակային վճարման դեպքում k=4):

Արժեկտրոնի կուտակումն իրականացվելու է հետևյալ բանաձևով՝

$$AI = FV \times \frac{C}{k} \times \frac{DCS}{DCC}$$

- AI – կուտակված արժեկտրոնային եկամուտն է,
- FV – մեկ Պարտատոմսի անվանական արժեքն է,
- C – տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,
- k – մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է, հաճախականությունը, (արժեկտրոնների եռամսյակային վճարման դեպքում k=4),
- Օրերի հաշվարկման պայմանականությունը Պարտատոմսերի համար համարվում է Actual/Actual-ը, ընդ որում
    - DCS – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D2M2Y2 - D1M1Y1];
    - DCC – արժեկտրոնային փուլի օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D3M3Y3 - D1M1Y1];
    - D1M1Y1 – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/ արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է;
    - D2M2Y2 – գործարքի կատարման ամսաթիվն է;
    - D3M3Y3 – գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:

2.3.9 *Արժեթղթերի մարման ժամկետը և արժեքը*

Պարտատոմսերի մարման օր է համարվում տեղաբաշխումն սկսելու օրվան հաջորդող 48-րդ (քառասունութերորդ) ամսվա համապատասխան օրը:

Մեկ Պարտատոմսի մարման արժեքը 100 (մեկ հարյուր)ԱՄՆ դոլար է:

Պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը փակվում է Պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրը՝ ժամը 23:59-ին: Պարտատոմսերի մարման գումարն իրավունք ունեն ստանալ մինչև ռեեստրի փակման պահը (ժամը 23:59 դրությամբ) Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք:

Պարտատոմսերի մարման գումարները Պարտատոմսերի սեփականատերերին/ անվանատերերին վճարվում են Պարտատոմսերի մարման օրը: Եթե մարման օրը ոչ աշխատանքային օր է, ապա մարման գումարները վճարվում են մարման օրվան հաջորդող աշխատանքային օրը:

Թողարկողը մարման գումարները վճարելու է անկանխիկ ձևով՝ համաձայն Եռակողմ պայմանագրի: Դրամական միջոցների այն մասը, որը հնարավոր չի լինի փոխանցել

արժեթղթերի սեփականատիրոջը և/կամ անվանատիրոջը Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում Պարտատոմսի սեփականատերերի ռեեստրի փակման օրվա դրությամբ ռեեստրում գրանցված բանկային հաշիվների բացակայության կամ դրանց ճշտման անհնարինության պատճառով, կվերադարձվի Թողարկողի համապատասխան բանկային հաշվին: Այնուհետև Թողարկողը կգործադրի իրենից կախված բոլոր ողջամիտ ջանքերը ներդրող(ներ)ին բոլոր հնարավոր կապի միջոցներով հայտնաբերելու ու նրան վճարման ենթակա գումարը փոխանցելու համար: Ներդրողին հայտնաբերելու անհնարինության դեպքում Թողարկողը վճարման ենթակա գումարը մուծելու է նոտարի կամ դատարանի (օրենքով սահմանված դեպքերում) դեպոզիտ՝ համաձայն ՀՀ օրենսդրության:

Համաձայն Եռակողմ պայմանագրի՝ Դեպոզիտարիան, հիմք ընդունելով մարման գումարների վճարման փաստը, մինչև մարման գումարների վճարման օրվա 14:00 ՀՀ ԿԲ է ներկայացնում տեղեկատվություն Պարտատոմսի մարման գումարների փաստացի վճարման մասին:

Պարտատոմսերի մարման դիմաց վճարումները կատարվելու են ԱՄՆ դոլարով:

Եթե Պարտատոմսերի մարման դիմաց վճարումները հնարավոր չլինի փոխանցել դրանց սեփականատերերին և/կամ անվանատերերին պայմանավորված այն հանգամանքով, որ Թողարկողի և/կամ Թողարկողի վերահսկող բաժնետերերի նկատմամբ հայտարարվել է Պատժամիջոց, և վճարային համակարգը չի կարող մշակել Թողարկողի կողմից տրված ԱՄՆ դոլարով փոխանցման և վճարման հանձնարարականները, Թողարկողը կգործադրի իրենից կախված բոլոր ողջամիտ ջանքերը Պարտատոմսերի սեփականատերերին և/կամ անվանատերերին վճարման ենթակա գումարը ԱՄՆ դոլարով փոխանցելու համար:

Նման փոխանցման անհնարինության դեպքում Թողարկողն իրավունք ունի Պարտատոմսերի սեփականատերերին և/կամ անվանատերերին ԱՄՆ դոլարով արտահայտված՝ Պարտատոմսերի մարման դիմաց վճարվելիք գումարները վճարել համարժեք ՀՀ դրամով:

ԱՄՆ դոլարից ՀՀ դրամ փոխարկումների համար հիմք կհանդիսանա վճարման օրվան նախորդող օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը:

Հաշվի առնելով Պարտատոմսերի մարման հետ կապված միջբանկային փոխանցումների անհրաժեշտությունը՝ ներդրողները պետք է նկատի ունենան, որ մարման գումարների փոխանցման (միջբանկային փոխանցումներ) հետ կապված հնարավոր միջնորդավճարների ծախսերը պետք է կատարվեն ներդրողի հաշվին, հետևաբար նման դեպքերում ներդրողները մարման գումարները կստանան պահումներով՝ ըստ միջնորդ բանկերում /առկայության դեպքում/ գործող սակագների:

2.3.9.1 **Վաղաժամկետ մարման հնարավորություն**

Պարտատոմսերի վաղաժամկետ մարման հնարավորություն (Թողարկողի կամ ներդրողի նախաձեռնությամբ (քոլ օպցիոն, փութ օպցիոն)) չի նախատեսվում:

Պարտատոմսերի վաղաժամկետ մարում կարող է իրականացվել Ազդագրի 2.8 գլխով ներկայացված դեպքում:

2.3.10 *Արժեթղթերի տարեկան եկամտաբերությունը*

Պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը (մինչև մարումը տարեկան եկամտաբերություն, yield to maturity, YTM) տեղաբաշխման ընթացքում լինելու է անփոփոխ և հավասար Պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային եկամտաբերությանը. վերջինս կազմում է 8% (ութ տոկոս):

2.3.11 *Նոր թողարկման մասին տեղեկատվություն*

Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման մասին որոշումն ընդունվել է Ընդհանուր Ժողովի *Թիվ 2026-03-27* որոշմամբ (այսուհետ՝ Թողարկողի որոշում): Թողարկողի որոշմամբ սահմանվել են Պարտատոմսերի թողարկման ծավալը, արժույթը, անվանական արժեքը, արժեկտրոնային տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, մարման ժամկետը և այլ պայմաններ, որոնք նշված են Ազդագրի համապատասխան հատվածներում: Թողարկողի որոշմամբ սահմանվել են նաև այն պայմանները (այդ թվում՝ Պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբն ու ավարտը, տեղաբաշխման ընթացքում մեկ ներդրողի կողմից ձեռքբերման նվազագույն քանակը և այլն), որոնք ենթակա են որոշման Գլխավոր տնօրենի կողմից:

2.3.12 *Արժեթղթերի ազատ շրջանառելիության սահմանափակումների նկարագրությունը*

Թողարկողի որոշմամբ Պարտատոմսերի թողարկման/տեղաբաշխման, ինչպես նաև Պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ որևէ այլ սահմանափակումներ չեն սահմանվում, բացի տեղաբաշխման ընթացքում մեկ ներդրողի կողմից կնքված գործարքի նվազագույն ծավալի սահմանափակումից: Համաձայն Թողարկողի կողմից սահմանված թողարկման պայմանների՝ տեղաբաշխման ընթացքում մեկ ներդրողի կողմից Պարտատոմսերի ձեռքբերման նվազագույն քանակը (մեկ գործարքի համար) կազմում է 5 (հինգ) հատ:

Պարտատոմսերի ազատ շրջանառության հետ կապված որևէ այլ սահմանափակումներ չկան՝ բացառությամբ Օրենքով և ենթաօրենսդրական ակտերով սահմանված դեպքերի:

Թողարկողը պարտադիր դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ (այսուհետ՝ Ֆոնդային բորսա կամ Բորսա) Պարտատոմսերը ցուցակելու համար, և համաձայն գործող օրենսդրության՝ Պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս շրջանառությունը կարող է իրականացվել միայն Բորսայում:

Ներդրողները կարող են իրենց ցանկությամբ օտարել Պարտատոմսերը Ֆոնդային բորսայում (ցուցակված և առևտրին թույլատրված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ Օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, ներդրողները պետք է հաշվի առնեն, որ Օրենքով չի թույլատրվում կարգավորվող շուկայից (ֆոնդային բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված կորպորատիվ արժեթղթեր: Սույն պահանջի ներքո ՀՀ ԿԲ-ն կարող է բացառություններ սահմանել ներքոնշյալ գործարքների համար.

- մասնավոր գործարքների համար, այն է՝ գործարքներ, որոնց կողմերը նախապես հայտնի են,
- արժեթղթերի տեղաբաշխման նպատակով տեղաբաշխողների կողմից իրականացվող գործարքների համար,

  կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթերի՝ այլ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության և վաճառելու դեպքերի համար:

2.3.13 *Արժեթղթերից ստացվող եկամուտների հարկումը*

Կարևոր ծանուցում: Չնայած այն հանգամանքին, որ Թողարկողը, ներդնելով իր լավագույն ջանքերը և առկա գիտելիքները, սույն բաժնում ներկայացնում է արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման մոտեցումները ՀՀ-ում, այնուամենայնիվ Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ ներդրողներն այն չպետք է համարեն հարկային խորհրդատվություն և ներդրումներ անելիս հիմնվեն միայն այս բաժնում ներկայացված նյութի վրա: Թողարկողը չի երաշխավորում, որ ներդրողի կողմից Ազդագրի ստացման և ծանոթացման պահին հարկային օրենսդրությունը կհամապատասխանի ներկայացվածին, կամ համարժեքորեն կիրառություն կունենա ՀՀ հարկային մարմինների կողմից և ցանկացած պարագայում խորհուրդ է տալիս օգտվել մասնագիտացված հարկային խորհրդատվության ծառայություններից: Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ սույնով զերծ է մնում ցանկացած ներդրողի հնարավոր պահանջներից կապված հարկային օրենսդրության և հարկման մեխանիզմների փոփոխության արդյունքում առաջացած լրացուցիչ ֆինանսական պահանջների նկատմամբ պատասխանատվությունից:

Թողարկողի Պարտատոմսերից ստացվող եկամուտը ենթակա է հարկման շահութահարկով (իրավաբանական անձանց համար) և եկամտային հարկով (ֆիզիկական անձանց համար):

2.3.13.1 **Պարտատոմսերից ստացվող եկամտի շահութահարկով հարկման կարգը և նկարագիրը**

ՀՀ-ում շահութահարկ են վճարում (հարկատու են) ՀՀ ռեզիդենտները և ոչ ռեզիդենտները, բացառությամբ ՀՀ պետական կառավարչական հիմնարկների, ՀՀ

տեղական ինքնակառավարման մարմինների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և ՀՀ ԿԲ-ի: ՀՀ Հարկային օրենսգրքով (այսուհետ՝ Հարկային օրենսգիրք) ՀՀ ռեզիդենտ կազմակերպություն (այսուհետ՝ ռեզիդենտ կազմակերպություն) է համարվում այն կազմակերպությունը, որի գտնվելու վայրը հանդիսանում է ՀՀ-ն:

Ռեզիդենտ իրավաբանական անձանց հարկումը

Ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը: Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և Հարկային օրենսգրքի սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Շահութահարկի գումարը ռեզիդենտ իրավաբանական անձանց համար հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ՝ 18 (տասնութ) տոկոս դրույքաչափով:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց հարկումը

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը: Համաձայն Հարկային օրենսգրքի՝ հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտներին են դասվում նաև ոչ ռեզիդենտի՝ ռեզիդենտից կամ ոչ ռեզիդենտից ստացված պասիվ եկամուտները: Ընդ որում, ոչ ռեզիդենտի ստացված պասիվ եկամուտներ են համարվում ոչ ռեզիդենտի կողմից իր գույքի կամ այլ ակտիվների ներդրմամբ (տրամադրելով) ՀՀ տարածքում բացառապես այլ անձանց գործունեությունից ստացված եկամուտները, այսինքն՝ շահաբաժիններ, տոկոսներ, ռոյալթիներ և այլ պասիվ եկամուտներ:

ՀՀ-ում ոչ ռեզիդենտի կողմից հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտների հարկումը կատարում է հարկային գործակալը՝ եկամտի վճարման աղբյուրի մոտ: ՀՀ-ում ոչ ռեզիդենտի ստացած եկամտից վճարման աղբյուրի մոտ Հարկային օրենսգրքով սահմանված կարգով հարկային գործակալները շահութահարկը պահում են 10 (տասը) տոկոս դրույքաչափով:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) 2025թ.-ի հունվարի 1-ից մինչև 2027թ.-ի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) պարտատոմսերից մինչև 2027թ.-ի դեկտեմբերի 31-ը ներառյալ ստացված տոկոսների կամ մարելիս զեղչի ձևով ստացվող եկամուտների, ինչպես նաև նշյալ պարտատոմսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտների մասով ազատվում են շահութահարկի վճարումից:

2.3.13.2 **Պարտատոմսերից ստացվող եկամտի՝ եկամտային հարկով հարկման կարգը և նկարագիրը**

ՀՀ-ում եկամտային հարկ են վճարում (հարկատու են) ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ընդ որում, Հարկային օրենսգրքի համաձայն ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում (հունվարի 1-ից միչև

դեկտեմբերի 31-ը ներառյալ) սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է ՀՀ-ում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում, ինչպես նաև ՀՀ-ում պետական ծառայության մեջ գտնվող ժամանակավորապես ՀՀ տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձը: Կենսական շահերի կենտրոն է համարվում այն վայրը, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Մասնավորապես, համարվում է, որ ֆիզիկական անձի կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում, եթե ՀՀ-ում է գտնվում նրա տունը կամ այլ բնակարանը, ընտանիքը, մասնագիտական կամ այլ գործունեության հիմնական վայրը:

Ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկում

Ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող եկամուտը:

Տոկոսագումարների համար եկամտային հարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով: Ռեզիդենտ ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս եկամտային հարկը պահում (գանձում) է հարկային գործակալը:

Արժեկտրոնային պարտատոմսերի դեպքում եկամտային հարկի պահումը (գանձումը) իրականացվում է տոկոսագումարների (արժեկտրոնային եկամուտների) յուրաքանչյուր վճարման դեպքում:

Զեղչատոկոսային (զրոյական արժեկտրոնով) պարտատոմսերի դեպքում եկամտային հարկը հաշվարկվում և պահվում է մարման ժամանակ ստացվող զեղչի նկատմամբ: Վերջինս հաշվարկվում է, որպես անվանական արժեքի և թողարկման գնի տարբերություն:

ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) 2025թ.-ի հունվարի 1-ից մինչև 2027թ.-ի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) պարտատոմսերից մինչև 2027թ.-ի դեկտեմբերի 31-ը ներառյալ ստացված տոկոսների կամ մարելիս զեղչի ձևով ստացվող եկամուտները ազատվում են եկամտային հարկից: Բացառություն են կազմում միայն բանկերի թողարկած այն պարտատոմսերը, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է երկու տարուց:

Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկում

Ոչ ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող եկամուտը: Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և Հարկային օրենսգրքի դրույթներին համաձայն իրականացված նվազեցումների դրական տարբերությունն է:

Պարտատոմսերից ստացված եկամուտների հարկման կանոնները և եկամտային հարկի կիրառվող դրույքաչափը նույնն են ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար:

Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (եկամտային հարկի գծով), ինչպես նաև ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց (շահութահարկի գծով) համար հարկային գործակալ է հանդիսանում Թողարկողը:

2.4 Առաջարկի ժամկետները և պայմանները

2.4.1 *Առաջարկի պայմանները և վիճակագրությունը*

Պարտատոմսերը տեղաբաշխվելու են կարգավորվող շուկայից դուրս, ուղիղ վաճառքի միջոցով:

Պարտատոմսերի տեղաբաշխումը սկսվելու է Ազդագիրը գրանցելու մասին ՀՀ ԿԲ նախագահի որոշման օրվան հաջորդող 10-րդ (տասներորդ) աշխատանքային օրը և ավարտվելու է տեղաբաշխման սկիզբը համարվող օրվան հաջորդող 40-րդ (քառասուներորդ) աշխատանքային օրը (կամ ավելի վաղ, եթե Պարտատոմսերն ամբողջությամբ վաճառվեն ավելի կարճ ժամկետում):

Տեղաբաշխման ընթացքում գործում են առաջարկից օգտվելու հետևյալ պայմանները.

Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողը վճարումը պետք է կատարի մինչև Պարտատոմսերի ձեռքբերման օրվա ավարտը՝ Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի ներկայացման հիմքով: Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը համարվում է պատշաճ կերպով կատարված համապատասխան բանկային հաշվին դրամական միջոցների մուտքագրման պահից:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական ներկայացնողները պետք է տեղյակ լինեն, որ իրենց հայտ-հանձնարարակաները չբավարարվելու կամ մասնակի բավարարվելու դեպքում Պարտատոմսերի ձեռքբերման համար վճարված գումարների՝ բանկային հաշվի վրա մնալը՝ մինչև Պարտատոմսերի թողարկման պայմանների համաձայն դրանք իրենց վերադարձնելու պահը, միջոցների ապօրինի պահում կամ դրանք վերադարձնելուց խուսափել չի հանդիսանում և դրանց վրա տոկոսներ չեն հաշվարկվում:

Բանկային փոխանցման միջոցով Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի ներկայացումից հետո սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականում նշված քանակի Պարտատոմսեր ձեռք բերելու դիմաց վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

*V = P * Q, որտեղ՝*

- *V-ն Պարտատոմսերի ձեռքբերման հայտում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու դիմաց վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծությունն է:*
- *P-ն Պարտատոմսերի ձեռք բերման հայտի Բանկ ներկայացման օրվա դրությամբ Պարտատոմսի գինն է, որը հաշվարկվում է Ազդագրի 2.4.3.1 բաժնի համաձայն:*
- *Q-ն Պարտատոմսերի այն քանակն է, որը ներդրողը ցանկանում է ձեռք բերել:*

2.4.1.1 **Առաջարկի ընդհանուր ծավալը**

Պարտատոմսերի թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը կազմում է 2,000,000 (երկու միլիոն) ԱՄՆ դոլար:

2.4.1.2 **Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը**

Պարտատոմսերի տեղաբաշխումը սկսվելու է Ազդագիրը գրանցելու մասին ՀՀ ԿԲ նախագահի որոշման օրվան հաջորդող 10-րդ (տասներորդ) աշխատանքային օրը և ավարտվելու է տեղաբաշխման սկիզբը համարվող օրվան հաջորդող 40-րդ (քառասուներորդ) աշխատանքային օրը (կամ ավելի վաղ, եթե Պարտատոմսերն ամբողջությամբ վաճառվեն ավելի կարճ ժամկետում):

Թողարկողի կողմից Պարտատոմսերի առաջարկը, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է հետաձգվել կամ չեղյալ հայտարարվել անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքում (Ֆորս մաժոր):

Եթե առկա են հետ վերադարձման ենթակա դրամական միջոցներ, ապա դրանք վերադարձվում են Թողարկողի կողմից՝ հետաձգման կամ չեղյալ հայտարարման որոշումն ընդունելուց հետո՝ 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով:

Տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշման կայացման և տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները ներդրողներին վերադարձվում են կուտակված արժեկտրոնային եկամուտների հետ միասին: Արժեկտրոնային եկամուտը նման դեպքում հաշվարկվում է տեղաբաշխման առաջին օրվա և այն դադարեցնելու մասին որոշման կայացման օրերի միջև ընկած ժամանակամիջոցի համար:

Եթե Թողարկողը տեղաբաշխման ընթացքում ներկայացնում է Ազդագրի լրացում, որը կապված է Ազդագրում ներառված տեղեկատվության էական փոփոխության, նոր էական հանգամանքի կամ փաստի ի հայտ գալու հետ, ապա նա ներդրողի պահանջով պարտավոր է չեղյալ համարել ներդրողի տված ակցեպտը և հետ վերադարձնել տեղաբաշխման ընթացքում նրանից ստացված միջոցները կամ հետ գնել մինչև լրացման ներկայացումը ներդրողին վաճառված արժեթղթերը՝ առնվազն նրա կողմից արժեթղթերի ձեռքբերման գնով: Սահմանված հետգնման պահանջը պետք է Տեղաբաշխողին ներկայացվի գրավոր: Հետգնման պահանջի ներկայացման

ժամկետը չի կարող ավելի կարճ լինել, քան 5 (հինգ) աշխատանքային օրը՝ Ազդագրի լրացման հրապարակումից հետո, իսկ արժեթղթերի հետգնումը և տեղաբաշխման ընթացքում ստացված դրամական միջոցների վերադարձը պետք է իրականացվեն հետգնման պահանջը ներկայացնելուց հետո՝ առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՀ ԿԲ-ն իր որոշմամբ կարող է կասեցնել Պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքը՝ Օրենքի համաձայն:

Տեղաբաշխողի նախաձեռնությամբ տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել միայն ՀՀ ԿԲ համաձայնությամբ՝ առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրով:

Եթե կասեցման ժամկետն ավարտվելու պահից՝ 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում, տեղաբաշխումը չի շարունակվում, ապա Տեղաբաշխողը պարտավոր է կայացնել տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշում և վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցներն արժեթղթերը ձեռք բերած անձանց Օրենքով սահմանված կարգով՝ կասեցման ժամկետի ավարտից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

2.4.1.3 **Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացը**

Տեղաբաշխմանը մասնակցելու համար ներդրողները պետք է կատարեն հետևյալ քայլերը.

Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն և պատշաճ կերպով Տեղաբաշխողին ներկայացնեն Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը, որով կհավաստեն Պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը, և որով այդ պայմանները կդառնան ներդրողների համար պարտադիր:

Պարտատոմսերի ձեռքբերման համար ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք լրացնում են հայտ-հանձնարարականում նշված դաշտերը, որոնց լրացումը պարտադիր է հայտ-հանձնարարականի վավերականությունն ապահովելու համար:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականները կհրապարակվեն Տեղաբաշխողի և/կամ Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքերում: Հայտ-հանձնարարականն առնվազն պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

- *Հայտ-հանձնարարականի ներկայացման ամսաթիվը,*
- *Պարտատոմսերի ձեռքբերման օր (ձեռքբերման դիմաց փաստացի վճարման օրն է),*
- *Ներդրողի տվյալները.*
    - *ֆիզիկական անձանց (անհատ ձեռնկարկատերերի) դեպքում՝ անունը և ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, գրանցման վայրը, ռեզիդենտությունը*
    - *իրավաբանակաան անձանց դեպքում՝ անվանումը, գրանցման համարը, գտնվելու վայրը, ՀՎՀՀ-ն, ռեզիդենտությունը*
- *Ներդրողի բանկային վավերապայմանները*

- *արժեթղթերի հաշվի համարը և արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը*
- *Ձեռքբերվող պարտատոմսերի տվյալները*
  - *պարտատոմսի գինը*
  - *պարտատոմսերի քանակը*
  - *վճարման ենթակա ընդհանուր գումարը*

Լրացված և պատշաճ կերպով Տեղաբաշխողին առաքված ձեռքբերման հայտ-հանձնարարականում նշված ծավալի Պարտատոմսերի ձեռքբերման համար համապատասխան դրամական միջոցները ներդրողների կողմից պետք է մուտքագրվեն թողարկման նպատակով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում բացված ***1570043109996301*** *հաշվեհամարին (այսուհետ՝ Թողարկման հաշվեհամար) մինչև հայտ-հանձնարարականում նշված Պարտատոմսերի ձեռքբերման օրվա ավարտը: Հայտ-հանձնարարականը կհամարվի վավեր պատշաճ առաքման և համապատասխան վճարի կատարման հիմքով (այսուհետ՝ Վավեր հայտ-հանձնարարական):*

Սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականում ներկայացված Պարտատոմսերի ձեռքբերման օրվա ավարտից հետո, ինչպես նաև Պարտատոմսերի տեղաբաշխման նախատեսված վերջնաժամկետից հետո Թողարկման հաշվեհամարին ստացված գումարները ենթակա են ետ վերադարձման, իսկ դրանց համապատասխան հայտ-հանձնարարականները չեն կարող բավարարվել:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը կհամարվի պատշաճ կերպով առաքված Տեղաբաշխողին, եթե այն առաքվել է Տեղաբաշխողի հետ ներքոնշյալ կապի միջոցներից որևէ մեկի միջոցով.

Օնլայն եղանակով՝ *Տեղաբաշխողի MyAmeria հավելվածի MyInvest հարթակի միջոցով էլեկտրոնային հայտ ներկայացնելու միջոցով*
Առձեռն՝*այցելելով Տեղաբաշխողի որևէ մասնաճյուղ[1] և հաճախորդի մենեջերների միջոցով լրացնելով համապատասխան հայտ-հանձնարարականը*
Էլեկտրոնային փոստ՝ *CapitalMarkets@ameriabank.am*

Տեղաբաշխողը վավեր հայտ-հանձնարարական ներկայացրած անձին նույնականացնելու նպատակով վերջինից կարող է պահանջել հավելյալ տեղեկատվություն/փաստաթղթեր:

[1] Մասնաճյուղերի գործառնական օրերը և ժամերը ներկայացված են հետևյալ հղմամբ՝ https://ameriabank.am/service-network:

Վավեր հայտ-հանձնարարականները բավարարվում կամ մերժվում են այն ներկայացնելու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

Վավեր հայտ-հանձնարարականները կարող են մերժվել, եթե փոխանցված դրամական միջոցները չեն համապատասխանում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ոլորտը կարգավորող միջազգային և/կամ ՀՀ օրենսդրության պահանջներին և/կամ Տեղաբաշխողի ներքին նորմատիվ ակտերին, ինչպես նաև Ազդագրով նշված դեպքերում:

Պարտատոմսերի ձեռքբերմանը մասնակցել ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք կարող են ներկայացնել մեկից ավելի հայտ-հանձնարարականներ:

2.4.1.4 **Առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորությունը**

Տեղաբաշխման ընթացքում առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորություն չի նախատեսվում:

Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է՝ ըստ Պարտատոմսերի ձեռքբերման դիմաց կատարված վճարման ստացման հերթականության. առաջնահերթություն ունի այն հայտը, որում նշված Պարտատոմսերի դիմաց վճարումը Թողարկման հաշվեհամարին ավելի վաղ է ստացվել:

Տեղաբաշխման կարգով պայմանավորված՝ հնարավոր է Պարտատոմսերի ձեռքբերման որևէ հայտ-հանձնարարականի և/կամ հայտ-հանձնարարականների մասնակի բավարարում:

Մասնակի բավարարման դեպք կարող է առաջանալ, երբ հայտ-հանձնարարականում նշված ձեռքբերվող Պարտատոմսերի քանակը գերազանցում է տեղաբաշխման ենթակա Պարտատոմսերի մնացորդային քանակը:

Այն դեպքում, եթե Պարտատոմսերի ձեռքբերման վավեր հայտ-հանձնարարականներում նշված պարտատոմսերի դիմաց վճարումները միաժամանակ են կատարվել և ձեռքբերվող Պարտատոմսերի ընդհանուր քանակը գերազանցում է տեղաբաշխման ենթակա Պարտատոմսերի մնացորդային քանակը, ապա տվյալ հայտ-հանձնարարականները բավարարվում են համամասնորեն՝ ըստ հայտ-հանձնարարականներում նշված ձեռքբերվող Պարտատոմսերի ընդհանուր քանակում յուրաքանչյուր հայտ-հանձնարարականով նշված ձեռքբերվող Պարտատոմսերի քանակի մասնաբաժնի:

Հայտ-հանձնարարականի մասնակի բավարարման դեպքում, եթե առկա է լինում ներդրողին հետ վերադարձման ենթակա գումար, ապա տեղաբաշխման ավարտից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում նշված գումարը Թողարկողի կողմից ենթակա է վերադարձման, ինչն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ համապատասխան ներդրողի բանկային հաշվին փոխանցմամբ:

2.4.1.5 **Հայտը հետ կանչելու ժամանակաշրջանը**

Հայտ-հանձնարարականի ներկայացումից հետո սահմանված ժամկետում (մինչև Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականում նշված Պարտատոմսերի ձեռքբերման օրվա ավարտը) համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր և չեն մասնակցում տեղաբաշխմանը:

Ներդրողները Պարտատոմսերի հայտ-հանձնարարականները պատշաճ կերպով առաքելուց և Տեղաբաշխողի կողմից հայտ-հանձնարարականի ստացման հաստատումը/ծանուցումը ստանալուց հետո դրանք չեն կարող ետ կանչել:

2.4.1.6 **Նվազագույն և առավելագույն գումարները**

Սույն թողարկման և տեղաբաշխման ընթացքում գոյություն ունեն Պարտատոմսերի ձեռքբերման քանակական սահմանափակումներ: Համաձայն Թողարկողի կողմից սահմանված թողարկման պայմանների՝ տեղաբաշխման ընթացքում մեկ ներդրողի կողմից Պարտատոմսերի ձեռքբերման նվազագույն քանակը (մեկ գործարքի համար) կազմում է 5 (հինգ) հատ:

2.4.1.7 **Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելը**

Թողարկողի կողմից թողարկվող Պարտատոմսերի ձեռքբերման համար իրավաբանական և/կամ ֆիզիկական անձինք վճարումը կատարում են Թողարկման հաշվեհամարին: Վճարումը համարվում է պատշաճ կերպով կատարված համապատասխան բանկային հաշվին դրամական միջոցների մուտքագրման պահից:

Համապատասխան հայտ-հանձնարարականները բավարարվելուց հետո ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի Օպերատորից՝ Տեղաբաշխողից իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին տեղեկացվելուց հետո:

Տեղաբաշխողն իրավունք ունի Պարտատոմսեր ձեռք բերել ցանկացող անձի կողմից Պարտատոմսերի ձեռքբերման հայտում նշված քանակի Պարտատոմսեր ձեռք բերելու համար Թողարկման հաշվեհամարին փոխանցված դրամական միջոցները չկրեդիտագրել Թողարկման հաշվեհամարին, չտալ համապատասխան հանձնարարական Դեպոզիտարիային Պարտատոմսերի թողարկման հաշվից Պարտատոմսերը ձեռք բերել ցանկացողի արժեթղթերի հաշվին փոխանցելու համար, եթե փոխանցված դրամական միջոցները չեն համապատասխանում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ոլորտը կարգավորող միջազգային և/կամ ՀՀ օրենսդրության պահանջներին և/կամ Տեղաբաշխողի ներքին նորմատիվ ակտերին: Նման իրավիճակում Տեղաբաշխողն իրավունք ունի մերժել հայտ-հանձնարարականը, իսկ փոխանցված դրամական միջոցները ետ փոխանցել, որի հետ կապված ֆինանսական ծախսերը կրում է Պարտատոմսեր ձեռք բերել

ցանկացող անձը: Տեղաբաշխողի կողմից բանկային փոխանցմամբ ստացված և չընդունված դրամական միջոցների ետփոխանցման/ետդարձման ծառայության սակագինը հրապարակված է Տեղաբաշխողի ինտերնետային կայքում: Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ բացի Տեղաբաշխողի կողմից գանձվող ծառայության վճարից, Թողարկման հաշվեհամարին փոխանցված դրամական միջոցները Տեղաբաշխողի կողմից նույն վավերապայմաններով ետ փոխանցելու դեպքում հնարավոր են նաև ծառայության դիմաց գանձումներ միջնորդ բանկերի և շահառուի բանկի կողմից:

Ներդրողի՝ ձեռքբերված Պարտատոմսի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված այլ պահառուի մոտ ներդրողի անունով այդ Պարտատոմսի գրանցման պահից:

Պարտատոմսերը փոխանցվում են ներդրողի արժեթղթերի հաշվին համապատասխան հայտ-հանձնարարականի բավարարման օրը:

2.4.1.8 **Նախապատվության իրավունքը**

Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է՝ ըստ Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականների առկայության և դրանց դիմաց կատարված վճարման հերթականության. այսինքն առաջնահերթություն ունի այն ներդրողը, ում կողմից վճարումը թողարկման նպատակով Տեղաբաշխողի կողմից բացված Թողարկման հաշվեհամարին ավելի վաղ է ստացվել, և միաժամանակ առկա է համապատասխան հայտ-հանձնարարական:

Թողարկվող Պարտատոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեցող անձինք չկան:

2.4.2 *Տեղաբաշխման պլանը*

2.4.2.1 **Ներդրողների խմբերը**

Առաջարկն արվում է ՀՀ-ում՝ առանց ներդրողների մասով որևէ սահմանափակումների:

2.4.2.2 **Հայտերի բավարարման մասին տեղեկացումը**

Ներդրողները Տեղաբաշխողից տեղեկացվում են իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին մինչև հայտ-հանձնարարականի ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը: Հայտ-հանձնարարականների բավարարման մասին ներդրողին տեղեկացումը տրամադրվում է այն կապի միջոցով, որով ներդրողը Տեղաբաշխողին է ներկայացրել Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը/երը: Բացառություն է կազմում միայն Տեղաբաշխողի MyInvest հարթակի միջոցով տրամադրված էլեկտրոնային հայտերի դեպքը, երբ

հայտերի բավարարման մասին տեղեկացումը տրամադրվում է ներդրողի՝ համակարգում գրանցված էլեկտրոնային հասցեին:

2.4.3 *Առաջարկի գինը*

2.4.3.1 **Արժեթղթերի գինը**

Պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց, տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$DP = \frac{C}{f}\sum_{t=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{t-1+\tau}} + \frac{100}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$$

որտեղ՝

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

DP - Պարտատոմսի գինն է,

DSN - գործարքի կատարման օրից (settlement/trade date) մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

DCC - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է,

N - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը,

C - տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց,

Y - մինչև մարում եկամտաբերություն:

Մինչև տեղաբաշխման սկիզբը տեղաբաշխման ամբողջ ժամանակահատվածի համար՝ ըստ օրերի, Պարտատոմսերի վաճառքի գինը կհրապարակվի առնվազն Տեղաբաշխողի ինտերնետային կայքում:

Բանկային փոխանցման միջոցով Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:

Ներդրողները պարտավոր են նաև Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշվառման անձնական արժեթղթերի հաշիվ և կրել վերջինիս հետ կապված ծախսերը:

2.4.4 *Տեղաբաշխումը*

2.4.4.1 **Երաշխավորված տեղաբաշխում իրականացնողները**

Ազդագիրը ՀՀ ԿԲ գրանցման ներկայացման պահին երաշխավորված տեղաբաշխում իրականացնելու համաձայնություն առկա չէ Թողարկողի և Տեղաբաշխողի միջև:

2.4.4.2 **Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնողները**

Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնելու կապակցությամբ Թողարկողը կնքել է «Պարտատոմսերի տեղաբաշխման ծառայությունների մատուցման մասին» պայմանագիր «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի հետ (ՀՀ, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2):

Համաձայն կնքված պայմանագրի՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն իրականացնելու է Պարտատոմսերի տեղաբաշխում չերաշխավորված եղանակով:

Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ

- հայտարարված տեղաբաշխման ծավալը կարող է ամբողջությամբ չտեղաբաշխվել, այսինքն կարող է տեղի ունենալ թերտեղաբաշխում,
- անկախ տեղաբաշխման ավարտին Պարտատոմսերի փաստացի տեղաբաշխված ծավալից՝ տեղաբաշխումը համարվում է կայացած:

2.4.4.3 **Տեղաբաշխման պայմանները**

Համաձայն «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի հետ կնքած «Պարտատոմսերի տեղաբաշխման ծառայությունների մատուցման մասին» պայմանագրի՝ Թողարկողը պարտավորվել է Տեղաբաշխողին վճարել Տեղաբաշխման վճար՝ տեղաբաշխված Պարտատոմսերի անվանական ծավալի 0.85%-ի (զրո ամբողջ ութսունհինգ հարյուրերորդական տոկոսի) չափով:

2.4.4.4 **Երաշխավորված տեղաբաշխման պայմանագիրը**

Երաշխավորված տեղաբաշխման պայմանագիր չի կնքվել:

2.4.4.5 **Վճարում ընդունող բանկերը և պահառուները**

Պարտատոմսերի դիմաց անհրաժեշտ է վճարում կատարել թողարկման նպատակով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում (ՀՀ, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2) բացված Թողարկման հաշվեհամարին: Եթե ներդրողը Պարտատոմսերի ձեռքբերումը իրականացնելու է իր բրոքերային ընկերության միջոցով, ապա հարկավոր է վճարման գործընթացի մանրամասները հստակեցնել ներդրողի բրոքերային ընկերության հետ:

Թողարկողի Պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումն ու (կամ) գրանցումն (սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի վարում) իրականացվելու է Դեպոզիտարիայի միջոցով, որը հանդես է գալու որպես անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրավար՝ վերջինիս համակարգում գործող որևէ Հաշվի օպերատորի միջնորդությամբ:

Պարտատոմսերը կարող են հաշվառվել նաև ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված որևէ պահառուի կողմից (Դեպոզիտարիայի ենթապահառու)՝ այդ պահառուի մոտ Պարտատոմսերի սեփականատիրոջ/անվանատիրոջ համար արժեթղթերի հաշիվ բացելու և վարելու միջոցով:

Դեպոզիտարիայի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 26/1, 5-րդ հարկ (հեռ.՝ (+374) 60 615555):

Պարտատոմսերի ռեեստրի վարման Հաշվի օպերատորը «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն է:

Մինչև Պարտատոմսերի ձեռքբերումը ներդրողները պարտավոր են Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշիվ:

Տեղաբաշխողն իրավունք ունի Պարտատոմսեր ձեռք բերել ցանկացող անձի կողմից Պարտատոմսերի ձեռքբերման հայտում նշված քանակի Պարտատոմսեր ձեռք բերելու համար Թողարկման հաշվեհամարին փոխանցված դրամական միջոցները չկրեդիտագրել Թողարկման հաշվեհամարին, չտալ համապատասխան հանձնարարական Դեպոզիտարիային Պարտատոմսերի թողարկման հաշվից Պարտատոմսերը ձեռք բերել ցանկացողի արժեթղթերի հաշվին փոխանցելու համար, եթե փոխանցված դրամական միջոցները չեն համապատասխանում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ոլորտը կարգավորող միջազգային և/կամ ՀՀ օրենսդրության պահանջներին և/կամ Տեղաբաշխողի ներքին նորմատիվ ակտերին: Նման իրավիճակում Տեղաբաշխողն իրավունք ունի մերժել հայտ-հանձնարարականը, իսկ փոխանցված դրամական միջոցները ետ փոխանցել, որի հետ կապված ֆինանսական ծախսերը կրում է Պարտատոմսեր ձեռք բերել ցանկացող անձը: Տեղաբաշխողի կողմից բանկային փոխանցմամբ ստացված և չընդունված դրամական միջոցների ետփոխանցման/վերադարձման ծառայության սակագինը հրապարակված է Տեղաբաշխողի ինտերնետային կայքում: Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ բացի Տեղաբաշխողի կողմից գանձվող ծառայության վճարից, Թողարկման հաշվեհամարին փոխանցված դրամական միջոցները Տեղաբաշխողի կողմից նույն վավերապայմաններով ետ փոխանցելու դեպքում հնարավոր են նաև ծառայության դիմաց գանձումներ միջնորդ բանկերի և շահառուի բանկի կողմից:

2.5 Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

2.5.1 *Առևտրին թույլտվությունը*

Պարտատոմսերը տեղաբաշխելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Թողարկողը պարտադիր դիմելու է Բորսա տեղաբաշխված Պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և/կամ առևտրին թույլատրելու համար: Ընդ որում Պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և/կամ առևտրին թույլատրելու հայտը կարող է չբավարարվել Բորսայի կողմից:

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո 6-ամսյա ժամկետում առևտրի թույլտվություն չստանալու դեպքում տեղաբաշխումը կհամարվի չեղյալ: Չեղյալ համարելու վերաբերյալ Ընկերության որոշումն ուժի մեջ մտնելու պահից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Թողարկողը ետ է գնելու Պարտատոմսերն իրենց առաջարկի գնով (ներառյալ մինչ չեղյալ համարելու որոշման ուժի մեջ մտնելու օրը հաշվեգրված արժեկտրոնի գումարները):

2.5.2 *Շուկաները*

Այս պահին Թողարկողի կողմից Ազդագրով գրանցվող Պարտատոմսերը թույլատրված չեն հրապարակային առևտրի ոչ մի շուկայում:

2.5.3 *Շուկա ստեղծողները*

Թողարկողը մասնագիտացված անձանց հետ դեռ չի կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի (մարքեթ մեյքերի) ծառայություններից օգտվելու վերաբերյալ պայմանագիր:

Տեղաբաշխված Պարտատոմսերը Բորսայի կողմից ցուցակվելու և առևտրին թույլատրվելու դեպքում Թողարկողը պարտավորվում է մասնագիտացված անձի/անձանց հետ կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի պայմանագիր:

2.6 Լրացուցիչ տեղեկատվություն

2.6.1 *Խորհրդատուներ*

Ազդագրի պատրաստման ընթացքում Թողարկողը չի օգտվել այլ խորհրդատուների ծառայություններից, բացի Տեղաբաշխողի կողմից մատուցվող տեղաբաշխման ծառայություններից:

2.6.2 *Աուդիտորական եզրակացությունը*

Բացի Ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվություններից (2023-2025թթ. համար), որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, Ազդագրում ներկայացված այլ ֆինանսական տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից: Հաշվետվությունների և դրանց վերաբերյալ անկախ

աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունների պատճենները ներկայացված են Հավելված 4-ում:

2.6.3 *Թողարկողի վարկանիշը*

Թողարկողն իր պատմական գործունեության ընթացքում վարկանիշ չի ստացել:

2.7 Պարտավորություններ և սահմանափակումներ

2.7.1 *Որոշակի գործողություններ կատարելու պարտավորություններ (կովենանտներ)*

Քանի դեռ Պարտատոմսերն ամբողջությամբ չեն մարվել Թողարկողը պարտավորվում է մշտապես ապահովել, որ **Զուտ Ֆինանսական Պարտք / EBITDA հարաբերակցությունը** չգերազանցի ստորև աղյուսակում նշված մեծությունները՝ **Հաշվարկման օրվան** նախորդող յուրաքանչյուր օրացույցային տարվա (այսուհետ՝ Հաշվարկման ժամանակահատված) համար.

Հաշվարկման ժամանակահատված	**Հաշվարկման օր**	**Զուտ պարտք/EBITDA հարաբերակցություն**
2026թ. հունվարի 1 – 2026թ. դեկտեմբերի 31	2027թ. ապրիլի 30	5.5:1
2027թ. հունվարի 1 – 2027թ. դեկտեմբերի 31	2028թ. ապրիլի 30	5:1
2028թ. հունվարի 1 – 2028թ. դեկտեմբերի 31	2029թ. ապրիլի 30	4.5:1
2029թ. հունվարի 1 – 2029թ. դեկտեմբերի 31	2030թ. ապրիլի 30	4.5:1

Սույն ենթագլխի իմաստով.

«Հաշվարկման օր» է համարվում յուրաքանչյուր տարվա ապրիլի 30-ը՝ հիմք ընդունելով դրան նախորդող տարվա (Հաշվարկման ժամանակահատվածի) անկախ աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունները: Առաջին Հաշվարկման օր է հանդիսանում 2027թ. ապրիլի 30-ը:

«Զուտ Ֆինանսական Պարտք» նշանակում է Թողարկողի Ֆինանսական Պարտքը հանած.

i. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ,
ii. Ընդունելի ներդրումներ:

«Ընդունելի ներդրումներ» նշանակում է կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներ (այդ թվում՝ պարտատոմսեր և բանկային ավանդներ), որոնք

հեշտությամբ կարող են փոխարկվել դրամական միջոցների, և որոնք ենթակա են արժեքի փոփոխության աննշան ռիսկի:

«Պարտք» նշանակում է Թողարկողի բոլոր պարտավորությունները՝ կապված դրամական միջոցների վճարման կամ մարման հետ, անկախ նրանից՝ Թողարկողը հանդես է գալիս որպես հիմնական վարկառու/պարտապան, թե երաշխավոր, և արդյոք դրանք ներկա, ապագա, փաստացի կամ պայմանական պարտավորություններ են:

«Ֆինանսական Պարտք» նշանակում է Թողարկողի նկատմամբ առկա ցանկացած Պարտք՝ ներքոնշյալի առնչությամբ.

i. փոխառված գումար, այդ թվում՝ բանկային վարկեր և փոխառություններ՝ բացառությամբ ստորադաս վարկերի և փոխառությունների,
ii. ցանկացած գումար, որը ներգրավվել է ցանկացած ակցեպտային վարկային գծի ներքո,
iii. մուրհակների, պարտատոմսերի, պարտքային այլ արժեթղթերի կամ նմանատիպ այլ գործիքների թողարկման շրջանակներում գոյացած ցանկացած գումար,
iv. ցանկացած լիզինգային կամ ապառիկ գնման այլ պայմանագրի ներքո ցանկացած պարտավորության գումար, որը, ՖՀՄՍ-ներին համապատասխան, կարող է դիտարկվել որպես ֆինանսական կամ հիմնական ակտիվների վարձակալություն,
v. ցանկացած այլ գործարքի (այդ թվում՝ ածանցյալ ֆինանսական գործիքներով կնքված գործարքների) ներքո ներգրավված ցանկացած գումար, որը կարող է դիտարկվել որպես փոխառություն,
vi. ածանցյալ ֆինանսական գործիքներով կնքված գործարքների գծով պարտավորություններ:

«EBITDA» նշանակում է Թողարկողի շահույթը կամ վնասը, Հաշվարկման ժամանակահատվածի համար, մինչև.

i. հարկերի գանձումը,
ii. ցանկացած պարտքին առնչվող ցանկացած տոկոսագումարի, միջնորդավճարների, զեղչերի և այլ վճարների կատարումը,
iii. ցանկացած տոկոսագումարի ստացումը,
iv. մաշվածության և ամորտիզացիայի ծախսագրումը, և
v. Հաշվարկման ժամանակահատվածում առաջացած այլ անկանխիկ օգուտ կամ վնաս: Անկանխիկ օգուտը ներառում է արտարժույթի գործարքներից, վերագնահատումից ստացված օգուտները, պահուստավորված և արժեզրկված ակտիվների վերականգնումը: Անկանխիկ վնասը ներառում է արտարժույթի գործարքներից, վերագնահատումից, պահուստավորումից և արժեզրկումից առաջացած վնասները:

2.7.2 *Կովենանտները խախտելու (չկատարելու) համաձայնությունը*

Ընկերությունը կարող է չկատարել Ազդագրի 2.7.1 ենթագլխով սահմանված պայմանները (այսուհետ՝ Կովենանտներ), եթե ստացել է Պարտատոմսերի ընդհանուր անվանական ծավալի առնվազն 2/3 մասի սեփականատերերի համաձայնությունը (այսուհետ՝ Նախնական համաձայնություն):
Նախնական համաձայնություն ստանալու նպատակով Ընկերությունը պարտավոր է, առնվազն իր ինտերնետային կայքում հրապարակելով, ծանուցել ներդրողներին Կովենանտների չկատարման անհրաժեշտության մասին՝ հնարավորություն տալով Պարտատոմսերի սեփականատերերին ծանուցմանը հաջորդող 30 (երեսուն) օրվա ընթացքում ներկայացնել իրենց համաձայնությունը:
Նախնական համաձայնությունը համարվում է Թողարկողի կողմից պատշաճ կերպով ստացված, եթե Պարտատոմսերի ընդհանուր անվանական ծավալի առնվազն 2/3 մասի սեփականատերերը ներկայացրել (ծանուցել) են իրենց գրավոր համաձայնությունը՝ Ազդագրի 2.8.3 ենթագլխով սահմանված կարգով:
Սույն ենթագլխով սահմանված 30-օրյա ժամկետը լրանալուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Ընկերությունը պարտավոր է, առնվազն իր ինտերնետային կայքում հրապարակելով, տեղեկացնել ներդրողներին Նախնական համաձայնությունը ստանալու կամ չստանալու մասին:
Ընդ որում՝ Կովենանտների չկատարման համար ստացված Նախնական համաձայնությունը վավեր է սույն ենթագլխով սահմանված կարգով ներդրողներին՝ Նախնական համաձայնությունը ստանալու կամ չստանալու մասին տեղեկացնելուց հետո 12 (տասներկու) ամիս, որից հետո անհրաժեշտության դեպքում Թողարկողը նորից պետք է ստանա Նախնական համաձայնություն սույն ենթագլխով սահմանված կարգով:

2.8 Պարտավորությունների չկատարման դեպք (Event of Default)

Կովենանտների խախտումը (չկատարումը) հանդիսանում է պարտավորությունների չկատարման դեպք (այսուհետ՝ Պարտավորությունների չկատարում), բացառությամբ՝ եթե Թողարկողը ստացել է ներդրողների Նախնական համաձայնությունը՝ Ազդագրի 2.7.2 ենթագլխով սահմանված կարգով:

2.8.1 *Համապատասխանության վկայական*

Ընկերության կողմից հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների յուրաքանչյուր փաթեթի հետ միասին Թողարկողն իր կայքում պետք է հրապարակի համապատասխանության վկայական (այսուհետ՝ Համապատասխանության

վկայական), որում պետք է ներկայացվի տեղեկատվություն Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Թողարկողի համապատասխանությունը Կովենանտներին: Պարտավորությունների չկատարումը (Կովենանտների խախտումը) նույնպես հավաստվում է Համապատասխանության վկայականով:

Յուրաքանչյուր Համապատասխանության վկայական պետք է վավերացվի Թողարկողի Գլխավոր տնօրենի կողմից:

2.8.2 *Պարտավորությունների չկատարման հետևանքներ*

2.8.2.1 **Պարտավորությունների չկատարման վերացում**

Պարտավորությունների չկատարման հավաստման դեպքում Թողարկողին տրվում է հավելյալ ժամանակ մինչև Պարտավորությունների չկատարման հավաստման օրին հաջորդող 60-րդ (վաթսուներորդ) օրը վերացնել Պարտավորությունների չկատարումը (Կովենանտների խախտումը): Կովենանտների խախտման վերացումը, ինչպես նաև դրա չիրականացման դեպքում Պարտավորությունների չկատարումը պետք է հավաստվեն նոր Համապատասխանության վկայականով սույն կետում նշված 60-օրյա ժամկետում:
Հերթական Համապատասխանության վկայականով Պարտավորությունների չկատարման հավաստման դեպքում, ինչպես նաև սույն կետով սահմանված 60-օրյա ժամկետում Համապատասխանության վկայականի չհրապարակման դեպքում Պարտատոմսերը կարող են համարվել վաղաժամկետ մարման ենթակա համաձայն Ազդագրի 2.8.2.2 կետի:

2.8.2.2 **Պարտատոմսերի ետգնում և մարում**

Ազդագրի 2.8.2.1 կետով սահմանված 60-օրյա ժամկետում Պարտավորությունների չկատարումը Համապատասխանության վկայականով հավաստելու կամ նշված ժամկետում Համապատասխանության վկայականի չհրապարակման դեպքում, նշված 60-օրյա ժամկետը լրանալուն հաջորդորդ 30 (երեսուն) օրվա ընթացքում Պարտատոմսերի սեփականատերերը կարող են համատեղ համաձայնությամբ կամ առանձին-առանձին Թողարկողին ծանուցել Պարտատոմսերի վաղաժամկետ մարման պահանջ ունենալու մասին:
Եթե ներկայացված ծանուցումներով Պարտատոմսերի վաղաժամկետ մարման պահանջ ունեցող ներդրողները համատեղ տիրապետում են Պարտատոմսերի ընդհանուր անվանական ծավալի 50%-ից ավելիին, ապա Թողարկողը պարտավոր է՝

1) 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Պարտատոմսերի վաղաժամկետ մարման գործընթացի մասին տեղեկատվությունը հրապարակել առնվազն իր ինտերնետային կայքում՝ հնարավորություն ընձեռելով Պարտատոմսերի սեփականատերերին ծանուցմանը հաջորդող 30 (երեսուն) օրվա ընթացքում վաղաժամկետ մարման պահանջ ներկայացնել Թողարկողին:

2) Վերոնշյալ կետով սահմանված 30-օրյա ժամկետը լրանալուց հետո 2 (երկու) օրվա ընթացքում վաղաժամկետ մարել նման պահանջ ներկայացրած սեփականատերերի Պարտատոմսերը:

Երբ Պարտատոմսերը որևէ ծավալի չափով դառնում են մարման ենթակա, դրանց գծով վճարման ենթակա ողջ անվանական արժեքը, ինչպես նաև հաշվեգրված և չվճարված տոկոսները ենթակա են դառնում վճարման՝ յուրաքանչյուր դեպքում առանց դրանք վճարման ներկայացնելու, վճարման պահանջի, առարկության կամ հավելյալ ծանուցման:

2.8.3 *Ծանուցումներ*

Ներդրողների կողմից Ազդագրի 2.7.2 ենթագլխի և 2.8.2.2 կետի շրջանակներում բոլոր ծանուցումներն (այսուհետ՝ Ծանուցումներ) պետք է կատարվեն գրավոր և ուղարկվեն Թողարկողի՝ սույն Ազդագրում նշված էլեկտրոնային հասցեին (ir@solis.am) որպես հասցեատեր նշելով Թողարկողի գլխավոր տնօրենին և ֆինանսական տնօրենին:

Ծանուցումները համարվում են տրված դրանց փաստացի ստացման պահից:

ՄԱՍ 3 ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

3.1 Անկախ աուդիտորներ

Թողարկողի 2023թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է «ՖԻՆՍ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ-ն: Վերջինս 2022 թ. մայիսի 27-ին գրանցվել է Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների ռեեստրում և հիմնական գրանցման գրառման համարն է 1 22 0700:

Հասցե՝ ք. Երևան, Պարոնյան 9 բն. 12

հեռ.՝ +374 60 525 025
կայք՝ https://fins.am/

Թողարկողի 2024թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն: 2025թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտը նույնպես իրականացնում է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն: Վերջինս 2020թ. դեկտեմբերի 28-ին գրանցվել է Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների ռեեստրում և հիմնական գրանցման գրառման համարն է 2 20 0077:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0015, Գրիգոր Լուսավորչի 9
հեռ.՝ +374 10 50 09 64/61
կայք՝ www.grantthornton.am

Ընկերությունը որոշել է փոխել արտաքին աուդիտն իրականացնող կազմակերպությունը՝ նախկին տեղական հայկական աուդիտորական ընկերությունից անցում կատարելով միջազգային ճանաչված ընկերության: Այս որոշումը կայացվել է աուդիտորական ընթացակարգերի որակը բարձրացնելու, միջազգային ստանդարտներին համապատասխանությունն ապահովելու և ընկերության հաշվետվողականության թափանցիկությունն ու վստահելիությունն ամրապնդելու նպատակով:

Միջազգային աուդիտորական կազմակերպության ներգրավումը նպաստել է ավելի խոր փորձաքննության, ռիսկերի ավելի արդյունավետ կառավարման և բոլոր շահագրգիռ կողմերի՝ ներդրողների, գործընկերների ու կարգավորող մարմինների վստահության ամրապնդմանը:

3.2 Ռիսկային գործոններ

Ցանկացած ներդրող մինչև Պարտատոմսերում ներդրում անելը պետք է ամբողջությամբ ուսումնասիրի Թողարկողի գործունեությանը հատուկ հետևյալ ռիսկային գործոնները:

Սույն բաժնում ներկայացված են այն ռիսկերը, որոնք Թողարկողը Ազդագրի ներկայացման պահի դրությամբ համարում է էական, սակայն կարող են լինել լրացուցիչ ռիսկեր, որոնք Թողարկողին այս պահին հայտնի չեն կամ Թողարկողը դրանք համարում է ոչ էական. ստորև նկարագրված ռիսկային գործոնների ցանկը պետք է օգտագործվի միայն որպես ուղեցույց:

3.2.1 *Մրցակցության ռիսկ*

Թեև ՀՀ-ում վերականգնվող էներգետիկայի, մասնավորապես՝ արևային էներգետիկայի շուկան բնութագրվում է աճող մրցակցությամբ, երաշխավորված վաճառք ունեցող կայանները գործնականում մրցակցության էական ռիսկ չեն կրում:
Ազատ շուկայում գործող կայանների դեպքում մրցակցության ռիսկը, թեև առկա է, չի վերաբերում էլեկտրաէներգիայի իրացմանը, այլ վերաբերում է դրա վաճառքի գնին: Ներկայում գործող կարգավորումների համաձայն՝ արտադրված ամբողջ ծավալը ենթակա է վաճառքի, հետևաբար էլեկտրաէներգիան չվաճառելու ռիսկը գործնականում բացակայում է, և ենթադրվում է, որ արտադրված էլեկտրաէներգիան ամբողջությամբ կիրացվի: Մրցակցությունը դրսևորվում է միայն գնային տատանումների տեսքով, որոնք պայմանավորված են առաջարկի և պահանջարկի փոփոխություններով ազատ շուկայում:

3.2.2 *Վարկային ռիսկ*

Ընկերությունն ունի պարտքային բեռ՝ ներգրավված վարկերի տեսքով, որոնց սպասարկումը կատարվում է ընթացիկ գործունեությունից ձևավորվող դրամական հոսքերի հաշվին: Արևային էլեկտրակայանների շահագործման ընթացքում առաջացող հնարավոր տեխնիկական խափանումները և ազատ շուկայում գնային տատանումները կարող են բացասաբար անդրադառնալ Ընկերության դրամական հոսքերի վրա և սահմանափակել վարկային պարտավորությունների պատշաճ և ժամանակին սպասարկման կարողությունը, ինչը կարող է հանգեցնել ֆինանսական վիճակի վատթարացման կամ լրացուցիչ ֆինանսավորման անհրաժեշտության:

3.2.3 *Տնտեսական, քաղաքական, և սոցիալական ռիսկեր*

Արևային էներգետիկայի ոլորտում գործունեության հաջողությունը սերտորեն կապված է ՀՀ-ում ընդհանուր տնտեսական, քաղաքական և սոցիալական զարգացումների հետ: Տնտեսական աճի դանդաղումը, ֆինանսական շուկաների անկայունությունը, պետական ծախսերի կրճատումը կամ քաղաքական անորոշությունները կարող են բացասաբար անդրադառնալ ներդրումային միջավայրի, էներգետիկ ոլորտի զարգացման ծրագրերի և էլեկտրաէներգիայի պահանջարկի վրա:
Սոցիալական կամ արտակարգ իրավիճակները (այդ թվում՝ռազմական կամ այլ ֆորսմաժորային զարգացումներ) կարող են խաթարել շինարարական կամ

շահագործման գործընթացները, սարքավորումների մատակարարումները և ֆինանսավորման հասանելիությունը, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

3.2.4 *Ոլորտի կարգավորման դաշտի փոփոխությունների հետ կապված ռիսկ*

Արևային էներգետիկայի ոլորտը ՀՀ-ում կարգավորվող ոլորտ է և ենթակա է պետական մարմինների վերահսկողության: Ընկերության գործունեությունը կախված է գործող օրենսդրությունից, լիցենզավորման պայմաններից, սակագնային քաղաքականությունից, ինչպես նաև վերականգնվող էներգետիկայի ոլորտում կիրառվող պետական աջակցության մեխանիզմներից:
Օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի փոփոխությունները, սակագների վերանայումը, էլեկտրաէներգիայի պարտադիր գնման պայմանների փոփոխությունը կամ պետական քաղաքականության առաջնահերթությունների վերանայումը կարող են բացասաբար անդրադառնալ Ընկերության գործունեության արդյունքների, եկամուտների կանխատեսելիության և շահութաբերության վրա:
Նման փոփոխությունները կարող են էական ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական արդյունքների, դրամական հոսքերի և ներդրումային ծրագրերի իրագործման վրա:
2026 թվականի մարտի 1-ից նախատեսվել են կարգավորումներ, որոնց համաձայն Համակարգի օպերատորը կարգավարման գործընթացի շրջանակում կարող է սահմանափակել Ընկերության որոշ կայաններից (Շերամ, Էնտերիա Շորժա, Սոլար Ֆարմ, Մեծ Մասրիկ և 5-Մ կայաններ) էլեկտրական էներգիայի առաքումն էլեկտրական ցանց: Քանի որ միաժամանակ սահմանվել են փոխհատուցման հստակ մեխանիզմներ, ենթադրվում է, որ կարգավորման վերոնշյալ փոփոխություններն Ընկերության ֆինանսական ցուցանիշների վրա էական ազդեցություն չեն կարող ունենալ:

Բնական աղետների ռիսկ

Արևային էլեկտրակայանների գործունեությունը ենթակա է բնական և կլիմայական գործոնների ազդեցությանը: Երկրաշարժերը, կարկուտը, ուժեղ քամիները, հրդեհները, կամ այլ բնական աղետներ կարող են վնասել կայանների ենթակառուցվածքները, սարքավորումները և էլեկտրական ցանցին միացման համակարգերը:
Նման դեպքերը կարող են հանգեցնել էլեկտրաէներգիայի արտադրության ժամանակավոր կամ երկարատև դադարեցման, վերականգնման և վերանորոգման լրացուցիչ ծախսերի, ինչպես նաև եկամուտների կրճատման:

Այնուամենայնիվ, նմանատիպ ռիսկերի բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով՝ Խմբի բոլոր ընկերություններն ու դրանց պատկանող արևային կայանները փաստացի ունեն ապահովագրություն համապատասխան ռիսկերի նկատմամբ:

3.3 Տեղեկատվություն թողարկողի մասին

3.3.1 *Թողարկողի պատմությունը և զարգացումը*

ՍՈԼԻՍ-ը հանդիսանում է «Սոլիս» ՍՊԸ-ի իրավահաջորդը, որը հիմնադրվել է 2017 թվականին: Ընկերության ռազմավարությունն է կառուցել, տիրապետել և շահագործել արևային էներգետիկայի երկարաժամկետ ենթակառուցվածքներ՝ նպաստելով Հայաստանի էներգետիկ անվտանգության ամրապնդմանը և ապահովելով հուսալի ու մաքուր էլեկտրաէներգիայի մատակարարում՝ ինստիտուցիոնալ սեփականության և մասնագիտական կառավարման միջոցով:
Միևնույն ժամանակ, Ընկերությունը նպատակ ունի ուսումնասիրել և իրականացնել էլեկտրաէներգիայի կուտակման համակարգերի (battery storage) կառուցման հնարավորություններ՝ համակարգի ճկունության և կայունության բարձրացման, վերականգնվող էներգիայի արդյունավետ ինտեգրման, ինչպես նաև էլեկտրաէներգիայի արտադրության և սպառման հավասարակշռման ապահովման նպատակով:
Պորտֆելի արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի շահագործումը թույլ է տալիս տարեկան արտադրել շուրջ 64 ԳՎտ·ժ մաքուր էլեկտրաէներգիա, որը բավարար է մոտ 23,500 տնային տնտեսությունների տարեկան էլեկտրաէներգիայի պահանջարկը ապահովելու համար:
Արևային էլեկտրակայանի շահագործման արդյունքում տարեկան հնարավոր է խուսափել մոտ 27,750 տոննա CO_2 արտանետումից, ինչը էական ներդրում է կլիմայի փոփոխության դեմ պայքարում և շրջակա միջավայրի պահպանության գործում:

Ներկայումս ընկերության արևային ֆոտվոլտային կայանների պորտֆելի հզորությունը կազմում է 34 ՄՎտ ՝ տեղակայված ՀՀ տարբեր մարզերում:
Ընկերությունը շահագործում է ֆոտովոլտային արևային էլեկտրակայան ՀՀ Արագածոտնի մարզի Պարտիզակ համայնքում: Նախագծի տեղակայված հզորությունը կազմում է 4 ՄՎտ: Նախագիծը շահագործման է հանձնվել 2021 թվականին և ունի օրենքով երաշխավորված էլեկտրաէներգիայի գնման 20 տարվա պայմանագիր:
2022 թվականի հունիսից ՍՈԼԻՍ-ը հանդիսանում է «Դաս Էնտերիա Զոլարքրաֆթվերք» ՓԲԸ-ի 100% բաժնետերը, որը շահագործում է 2 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայան ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում: 2023 թվականի հոկտեմբերից Ընկերությունը հանդիսանում է նաև «Սոլար Ֆարմ» ՍՊԸ-ի 100% բաժնետերը, որը շահագործում է 5 ՄՎտ

հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայան ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում:
2024 թվականի մայիսից Ընկերությունը հանդիսանում է «Մոդուլ-Սան» ՍՊԸ-ի և «Մեծ Մասրիկ» ՍՊԸ-ի 100% բաժնետերը: է «Մոդուլ-Սան» ՍՊԸ-ն շահագործում է 3 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայան ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքում: Իսկ «Մեծ Մասրիկ» ՍՊԸ-ի ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքում տեղակայված 5 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայանը նախատեսվում է շահագործման հանձնել 2026 թվականի մայիս ամսին:
2024 թվականի մայիսից Ընկերությունը հանդիսանում է նաև «Սաներջի» ՍՊԸ-ի 100% բաժնետերը, որը շահագործում է 5 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայան ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքում:
2025 թվականի հունվարից «Սոլար Ֆարմ» ՍՊԸ-ն սկսել է «Սոլար Ֆարմ 2» անվանումով երկրորդ՝ 5 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայանի շահագործումը:
2026 թվականի փետրվարից Ընկերությունը հանդիսանում է նաև «Սոլար-5» ՍՊԸ-ի 100% բաժնետերը, որը շահագործում է 5 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայան ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում:

Խմբի միակ բաժնետերը և վերջնական վերահսկող անձը «ԵՄ-Հայաստան ՓՄՁ հիմնադրամն» է:

Ընկերության գործունեությունը հիմնված է ինստիտուցիոնալ կառավարման, տեխնիկական հուսալիության և արդյունավետ շահագործման սկզբունքների վրա՝ նպատակ ունենալով ձևավորել երկարաժամկետ և մասշտաբավորվող վերականգնվող էներգետիկ ենթակառուցվածք: Ընկերության ռազմավարությունը միտված է Հայաստանի էներգետիկ անվտանգության ամրապնդմանը և մաքուր էլեկտրաէներգիայի շարունակական մատակարարմանը՝ հավասարակշռելով երաշխավորված կայունությունն ու շուկայական հնարավորությունները:

3.3.1.1 Թողարկողի անվանումը և կազմակերպաիրավական ձևը

Թողարկողի անվանումն է՝

	Լրիվ ֆիրմային անվանումը	Կրճատ անվանումը
հայերեն՝	«ՍՈԼԻՍ» փակ բաժնետիրական ընկերություն	«ՍՈԼԻՍ» ՓԲԸ
ռուսերեն՝	Закрытое акционерное общество “Солис”	ЗАО “Солис”
անգլերեն՝	“SOLIS” closed joint-stock company	“SOLIS” CJSC

Թողարկողը գրանցված ապրանքանիշեր չունի:

3.3.1.2 Թողարկողի պետական գրանցումը և գործունեության վայրը

Թողարկողի հիմնադրման երկիրն է՝	Հայաստանի Հանրապետությունը
Թողարկողի պետական գրանցման վայրն է՝	ՀՀ, ք. Երևան, 0010, Վազգեն Սարգսյան փ. 10 տ 98
Թողարկողի պետական գրանցման համարն է՝	286.120.1461799
Թողարկողի պետական գրանցման ամսաթիվն է՝	2025-06-11
Թողարկողի գործունեության վայրն է՝	Հայաստանի Հանրապետությունը
Կապի միջոցները՝	Հեռ.՝ +374 (60) 440118 Էլ. փոստ՝ Ir@solis.am Կայք՝ www.solis.am

Ընկերության պետական գրանցման վայրը և համարը, գրանցման ամսաթիվը և փաստացի գործունեություն ծավալելու վայրը, թողարկողի հիմնադրման երկիրը և այլ տվյալները հասանելի են ՀՀ կառավարության էլեկտրոնային ռեգիստրի շտեմարանում՝ www.e-register.am:

3.3.2 *Նշանակալի դեպքերը*

2022 թվականի հունիսից ՍՈԼԻՍ-ը հանդիսանում է «Դաս Էնտերիա Զոլարքրաֆթվերք» ՓԲԸ-ի 100% բաժնետերը, որը շահագործում է 2 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայան ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում:
2023 թվականի հոկտեմբերից Ընկերությունը հանդիսանում է նաև «Սոլար Ֆարմ» ՍՊԸ-ի 100% բաժնետերը, որը շահագործում է 5 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայան ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում:
2024 թվականի մայիսից Ընկերությունը հանդիսանում է «Մոդուլ-Սան» ՍՊԸ-ի և «Մեծ Մասրիկ» ՍՊԸ-ի 100% բաժնետերը: է «Մոդուլ-Սան» ՍՊԸ-ն շահագործում է 3 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայան ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքում: Իսկ «Մեծ Մասրիկ» ՍՊԸ-ի ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքում տեղակայված 5 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայանը նախատեսվում է շահագործման հանձնել 2026 թվականի մայիս ամսին:
2024 թվականի մայիսից Ընկերությունը հանդիսանում է նաև «Սաներջի» ՍՊԸ-ի 100% բաժնետերը, որը շահագործում է 5 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայան ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքում:

Ընկերությունը 2025 թվականի ընթացքում շահագործման է հանձնել «Սոլար Ֆարմ» ՍՊԸ-ին պատկանող «Սոլար Ֆարմ 2» և «Սաներջի» ՍՊԸ-ին պատկանող Գառնի-1 ֆոտովոկտային էլեկտրակայանները:

2026 թվականի փետրվարից Ընկերությունը հանդիսանում է նաև «Սոլար-5» ՍՊԸ-ի 100% բաժնետերը, որը շահագործում է 5 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայան ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում:

3.3.3 *Ներդրումները*

2024 թվականի մայիսից Ընկերությունը հանդիսանում է «Մոդուլ-Սան» ՍՊԸ-ի և «Մեծ Մասրիկ» ՍՊԸ-ի 100% բաժնետերը: է «Մոդուլ-Սան» ՍՊԸ-ն շահագործում է 3 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայան ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքում: «Մեծ Մասրիկ» ՍՊԸ-ի ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքում տեղակայված 5 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայանը նախատեսվում է շահագործման հանձնել 2026 թվականի մայիսին: Նույն ժամանակահատվածից Ընկերությունը դարձել է նաև «Սաներջի» ՍՊԸ-ի միանձնյա բաժնետերը: Վերջինս շահագործում է 5 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայան ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքում:

2025 թվականի ընթացքում Ընկերությունը շահագործման է հանձնել երկու ֆոտովոլտային արևային էլեկտրակայան՝ «Սոլար Ֆարմ 2»-ը, որը պատկանում է «Սոլար Ֆարմ» ՍՊԸ-ին, և «Գառնի-1»-ը, որը պատկանում է «Սաներջի» ՍՊԸ-ին::

Ընկերությունը 2026 թվականի փետրվարին ձեռք է բերել ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում տեղակայված «ՍՈԼԱՐ-5» ՍՊԸ-ի 5 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայանը: Նշված կայանը ունի 20 տարվա ժամկետով էլեկտրաէներգիայի գնման պայմանագիր (PPA):

2025թ. դեկտեմբերի 31-ից մինչև Ազդագիրը ՀՀ ԿԲ գրանցման ներկայացնելու օրը այլ էական ներդրումներ չեն կատարվել: Բացի այդ, Թողարկողի կառավարման մարմինները չեն ստանձնել որևէ պարտավորություն մոտ ապագայում էական ներդրում կատարելու հետ կապված:

3.4 Բիզնեսի նկարագիրը

3.4.1 *Հիմնական գործունեությունը*

Թողարկողի հիմնական գործունեությունը ֆոտովոլտային արևային էլեկտրակայաններում արտադրված էլեկտրաէներգիայի վաճառքն է: Ընկերությունը հանդիսանում է վերականգնվող էներգետիկայի ոլորտում գործող արտադրող, որի եկամուտների հիմնական աղբյուրը էլեկտրաէներգիայի իրացումն է:

Էլեկտրաէներգիայի վաճառքը իրականացվում է ինչպես երկարաժամկետ էլեկտրաէներգիայի գնման պայմանագրերի (PPA) հիման վրա, այնպես էլ ազատ շուկայի պայմաններում՝ կախված համապատասխան էլեկտրակայանի առևտրային մոդելից:

Նոր ապրանքների արտադրություն կամ էլեկտրաէներգիայի վաճառքից էապես տարբերվող նոր ծառայությունների մատուցում ներկայումս չի նախատեսվում:

Իր բնականոն գործունեության նպատակով Ընկերությունը ստացել է հետևյալ հիմնական լիցենզիաները/թույլտվությունները.

Թույլատվություն/Լիցենզիա	Համար	Ընկերություն	Ում կողմից	Տրված է	Գործում է մինչև
Լիցենզիա	0640	Սոլիս ՍՊԸ	ՀՀ ՀԾԿՀ	02.05.2019	03.03.2041
Լիցենզիա	0638	Դաս Էնտերիա Զոլարքրաֆթվերք ՓԲԸ	ՀՀ ՀԾԿՀ	03.04.2019	04.12.2040
Լիցենզիա	0653	Սոլար Ֆարմ ՍՊԸ	ՀՀ ՀԾԿՀ	14.08.2019	15.08.2041
Լիցենզիա	0717	Սոլար Ֆարմ ՍՊԸ	ՀՀ ՀԾԿՀ	28.12.2022	29.12.2044
Լիցենզիա	0635	Մոդուլ-Սան ՍՊԸ	ՀՀ ՀԾԿՀ	23.01.2019	15.11.2040
Լիցենզիա	0747	Մեծ Մասրիկ ՍՊԸ	ՀՀ ՀԾԿՀ	19.07.2023	20.07.2045
Լիցենզիա	0726	Սաներջի ՍՊԸ	ՀՀ ՀԾԿՀ	12.04.2023	13.04.2045
Լիցենզիա	0631	Սոլար-5 ՍՊԸ	ՀՀ ՀԾԿՀ	30.11.2018	01.12.2040

3.4.2 *Հիմնական շուկաները*

Թողարկողի հիմնական գործունեությունը ֆոտովոլտային արևային էլեկտրակայանների միջոցով էլեկտրաէներգիայի արտադրությունը և իրացումն է: Էլեկտրաէներգիայի վաճառքն իրականացվում է Հայաստանի Հանրապետության տարածքում՝ ինչպես երկարաժամկետ էլեկտրաէներգիայի գնման պայմանագրերով (PPA), այնպես էլ ազատ շուկայի պայմաններում, ինչը հնարավորություն է տալիս համալրել կանխատեսելի եկամուտները շուկայական եկամուտների հնարավորությամբ:
Ազատ շուկայում էլեկտրաէներգիայի վաճառքը թողարկողն իրականցանում է էլեկտրաէներգիայի առուվաճառքի լիցենզավորված ընկերությունների հետ 1 տարի ժամկետ ունեցող պայմանագրեր կնքելու միջոցով:

Թողարկողը հանդիսանում է վերականգնվող էներգետիկայի ոլորտում արդեն հաստատված և փորձառու արտադրող, որը համադրելով PPA-երով ապահովված և ազատ շուկայի միջոցով էլեկտրաէներգիայի վաճառքները՝ ապահովում է եկամուտների կայունություն և առևտրային ճկունություն:

Թողարկողի մրցակցային առավելությունները ներառում են.

1) երկարաժամկետ PPA-երով պաշտպանված ակտիվների պորտֆելի առկայությունը, ինչը նվազեցնում է գների տատանման և հաճախորդների արտահոսքի ռիսկերը,
2) աշխարհագրորեն դիվերսիֆիկացված կայանների փաթեթ,
3) տեխնիկական սպասարկման և շահագործման բարձր մակարդակ,
4) մասնագիտական կառավարման և ինստիտուցիոնալ սեփականության համադրություն, որը ստեղծում է վստահություն ներդրողների և ֆինանսական հաստատությունների մոտ:

Ընկերությունը մրցակցում է ինչպես ազգային էներգետիկ համակարգի ներգրավված այլ արտադրողների, այնպես էլ նոր շուկա մուտք անող ֆոտովոլտային նախագծերի հետ, սակայն PPA-ներով ապահովված երկարաժամկետ եկամուտները և արդյունավետ կառավարման պրակտիկան ամրացնում են դիրքը շուկայում:

3.4.3 **Վաճառքի սակագները**

ՀՀ էներգետիկ համակարգը զգալիորեն կախված է ներմուծվող վառելիքաէներգետիկ ռեսուրսներից՝ բնական գազից և միջուկային էներգիայից: Հայաստանում էլեկտրաէներգիայի արտադրությունը ապահովվում է միջուկային, գազային, խոշոր հիդրոէլեկտրակայանների և փոքրածավալ վերականգնվող էներգիայի աղբյուրների (փոքր ՀԷԿ-եր և արևային ֆոտովոլտային կայաններ) համակցությամբ: Ընդհանուր առմամբ մինչև 2040 թվականն արևային և հողմային կայանների հզորությունը նախատեսվում է առնվազն հասցնել 2000 ՄՎտ-ի: Արդյունքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառմամբ արտադրված էլեկտրական էներգիայի մասնաբաժինը էլեկտրական էներգիայի համախառն վերջնական սպառման մեջ 2030 թվականին, ներառյալ խոշոր հիդրոէլեկտրակայանները, կհասնի շուրջ 50%-ի, իսկ մինչև 2040 թվականը՝ շուրջ 60%-ի (*ՀՀ կառավարության որոշում 14 հունվարի 2021 թվականի N 48-Լ*):

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) ՎԷԱ կայաններից («Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված էլեկտրական էներգիայի գնման երաշխիք ունեցող մինչև 30 ՄՎտ հզորությամբ վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառմամբ արտադրող) առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները սահմանում և վերանայում է՝ հաշվի առնելով գնաճը և արտարժույթի տատանումները՝ հետևյալ հաշվարկային բանաձևով.

$$T_{\text{ՎԷԱ}} = T_{\text{ՎԷԱ1}} \left(K_1 * \frac{CPI}{100} + K_2 * \frac{R_1}{R_2} \right)$$

որտեղ՝

1) $T_{\text{ՎԷԱ}}$-ը ՎԷԱ կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի հաջորդ հաշվարկային տարվա համար սահմանվող սակագնի մեծությունն է (դրամ/կՎտժ),

2) $T_{\text{ՎԷԱ1}}$-ը ՎԷԱ կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի ընթացիկ հաշվարկային տարվա համար գործող սակագնի մեծությունն է (դրամ/կՎտժ),

3) K_1-ը գործող սակագնի այն մասն է, որը ենթակա է ճշգրտման՝ գնաճի տեմպով պայմանավորված. այն փոքր հիդրոէլեկտրակայանների, կենսազանգվածից (կենսագազից) էլեկտրական էներգիա արտադրող կայանների, մինչև 2018 թվականի նոյեմբերի 1-ը ներառյալ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստացած հողմային և արևային էլեկտրակայանների համար ընդունվում է հավասար 0.35-ի, իսկ 2018 թվականի նոյեմբերի 1-ից հետո էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստացած հողմային և արևային էլեկտրակայանների համար՝ 0.1,

4) CPI-ն Հանձնաժողովի նիստին սակագնի սահմանման վերաբերյալ որոշման նախագծի ներկայացման ամսվան նախորդող օրացուցային տարվա սպառողական գների ինդեքսն է դրան նախորդող նույն ժամանակահատվածի նկատմամբ՝ հրապարակված ՀՀ-ում պաշտոնական վիճակագրությունն իրականացնող իրավասու մարմնի կողմից,

5) K_2-ը գործող սակագնի այն մասն է, որը ենթակա է ճշգրտման ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին ամսական փոխարժեքի փոփոխությամբ. փոքր հիդրոէլեկտրակայանների, կենսազանգվածից (կենսագազից) էլեկտրական էներգիա արտադրող կայանների, մինչև 2018 թվականի նոյեմբերի 1-ը ներառյալ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստացած հողմային և արևային էլեկտրակայանների համար ընդունվում է հավասար 0,65-ի, իսկ 2018 թվականի նոյեմբերի 1-ից հետո էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստացած հողմային և արևային էլեկտրակայանների համար՝ 0,9,

6) R_1--ը Հանձնաժողովի նիստին սակագնի սահմանման վերաբերյալ որոշման նախագծի ներկայացման ամսվան նախորդող տասներկու ամիսների (բացառությամբ այն ամիսների, որոնք ներառված են «$T_{\text{ՎԷԱ1}}$» մեծության հաշվարկում) ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված մեկ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀն դրամի միջին ամսական փոխարժեքների միջին թվաբանական մեծությունն է,

7) R_2--ը ՎԷԱ կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի «ՏՎԷԱ1» մեծության հաշվարկում ներառված մեկ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքն է:

Այսպիսով՝ գնման երաշխիք ունեցող կայանների էլեկտրաէներգիայի վաճառքի գինը կապակցված է ԱՄՆ դոլար/դրամ փոխարժեքի տատանումներին (~90%) և գնաճին (~10%):

Գնման երաշխիք չունեցող արևային ֆոտովոլտային կայաններն իրենց արտադրած էլեկտրաէներգիան վաճառելու երկու տարբերակ ունեն՝

1. ուղղակի վաճառք «Օր առաջ» շուկայի սեգմենտում, և
2. մատակարարի հետ երկկողմ չկարգավորվող պայմանագրերի սեգմենտում էլեկտրաէներգիայի գնման պայմանագրի կնքում: Մատակարարն իր հերթին կայանի էլեկտրաէներգիան վաճառում է ուղղակի սպառողներին կամ «Օր առաջ» շուկայում:

Խմբի՝ գնման երաշխիք չունեցող և ազատականացված շուկայում վաճառք իրականցնող ընկերությունների կայանները վաճառքն իրականցնում են մատակարարներին: Ի տարբերություն «Օր առաջ» շուկայի՝ մատակարարի հետ պայմանագրի կնքումն ապահովում է եկամուտների ավելի մեծ կայունություն և նվազեցնում կարճաժամկետ գնային և պահանջարկի տատանումների հետ կապված ռիսկերը:

3.4.4 **Ոլորտի կանոնակարգում և վերահսկողություն**

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (ՏԿԵՆ) պատասխանատու է էներգետիկ քաղաքականության մշակման և իրականացման համար: Այն մշակում է համապատասխան հիմնական և ենթաօրենսդրական ակտերը, ինչպես նաև պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունների ներդրումային ծրագրերը: Միջուկային էներգետիկայի կարգավորող մարմինը Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեն է:

Շրջակա միջավայրի նախարարությունը վերահսկում է բնական ռեսուրսների պաշտպանությունն ու պահպանությունը և պատասխանատու է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացների համար:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (ՀԾԿՀ) անկախ մարմին է, որը հիմնականում պատասխանատու է սակագնային մեթոդաբանության մշակման և վերանայման, լիցենզավորման ընթացակարգերի, ինչպես նաև ներմուծման և արտահանման կարգավորման համար: ՀԾԿՀ-ն կարգավորում է նաև ջրամատակարարման, թափոնների կառավարման, հեռահաղորդակցության և երկաթուղային տրանսպորտի ոլորտները:

Հայաստանում վերականգնվող էներգետիկայի քաղաքականության համար առանձին պետական գործակալություն չկա, ուստի Վերականգնվող ռեսուրսների և էներգախնայողության (R2E2) հիմնադրամը պատասխանատու է վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության նախագծերի իրականացման համար:

Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովը՝ իր իրավասության շրջանակներում սեփական նախաձեռնությամբ կամ դիմումի հիմքով

ուսումնասիրում է տնտեսավարող սուբյեկտների այն գործողությունները կամ վարքագիծը, որոնք կարող են կանխել, սահմանափակել կամ արգելել ազատ տնտեսական մրցակցությունը կամ վնասել սպառողների շահերին:

3.4.4.1 *ՀՀ օրենքներ*

Ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտերն են.

1) «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որը սահմանում է ՀՀ էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները, ներառյալ՝ մրցակցության խթանում, կարգավորում, ներդրումների խրախուսում, թափանցիկություն, անվտանգություն և էներգետիկ անկախության ապահովում: Օրենքը կարգավորում է էներգետիկ ընկերությունների սեփականության, կառուցվածքի, արտադրության, փոխանցման, բաշխման ու վաճառքի իրավունքներն ու պարտավորությունները և ստեղծում է հիմքեր՝ ապահովելու հուսալի էներգամատակարարում, անվտանգություն և արդյունավետություն էներգետիկ գործունեության ոլորտում:

2) «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը, որի նպատակն է էներգախնայողության իրականացման և վերականգնվող էներգետիկայի (ներառյալ արևային) զարգացման պետական քաղաքականության սկզբունքների սահմանումը՝ հիմնված կամավորության, պետական ծրագրերի մշակման ու իրականացման վրա: Օրենքը կարգավորում է խնայողության մեխանիզմները, վերականգնվող էլեկտրաէներգիայի արտադրությունը, բաշխող ընկերությունների կողմից վերականգնվող էլեկտրաէներգիայի պարտադիր գնումը, ինչպես նաևխթանում է արևային նախագծերում մասնավոր ներդրումները բարենպաստ պայմաններով:

3) «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է լիցենզավորման սկզբունքները, ներառյալ՝ անձանց իրավունքների պաշտպանություն, պետական անվտանգություն, տնտեսական գործունեության միասնական քաղաքականություն և լիցենզավորվող գործունեության ցանկի սահմանում: Օրենքը Կարգավորում է էլեկտրաէներգիայի արտադրության ու առևտրի լիցենզիաների տրամադրումը, երկարաձգումը, կասեցումը կամ չեղարկումը թափանցիկ կարգով:

4) «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ) իրավական կարգավիճակը և լիազորությունները: Այն նախատեսում է ՀԾԿՀ-ի դերը էներգետիկ ոլորտի կարգավորման, սակագների հաստատման և լիցենզիաների տրամադրման գործում: Օրենքը երաշխավորում է կարգավորող մարմնի անկախությունը քաղաքական և առևտրային

ազդեցություններից, սահմանում է վերահսկողության և համապատասխանության ապահովման մեխանիզմները: ՀԾԿՀ-ն կարևոր դեր ունի էներգետիկ շուկայի կայունության և թափանցիկության ապահովման գործում:

3.4.4.2 *ՀԾԿՀ որոշումներ*

Թողարկողին վերաբերվող հիմնական որոշումներն են.

- 29 նոյեմբերի 2022 թվականի N 520-Ն որոշումը, որը սահմանում է էլեկտրաէներգետիկական համակարգում սակագների հաշվարկման մեթոդիկան և սակագների սահմանման ու վերանայման կարգը: Այս որոշումը վերաբերում է Թողարկողի կողմից շահագործվող հետևյալ կայաններին. Շերամ, Էնտերիա Շորժա, Սոլար Ֆարմ, Մեծ Մասրիկ և 5-Մ, որոնք իրենց արտադրած էլեկտրաէներգիան վաճառում են «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ-ին 20 տարվա համար սահմանված երաշխավորված սակագներով:
- 25 դեկտեմբերի 2019 թվականի N 516-Ն և N 517-Ն որոշումները, որոնք սահմանում են ՀՀ էներգետիկ շուկայի ազատականացված հատվածում գործող արտադրողների և մատակարարների աշխատանքի սկզբունքները:
- ՀԾԿՀ 2026 թվականի փետրվարի 11-ի N 29-Ն որոշմամբ լրացումներ ու փոփոխություններ են կատարվել 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N 516-Ն որոշման մեջ:
  Փոփոխություններով նախատեսվել են կարգավորումներ, որոնց համաձայն Համակարգի օպերատորը կարգավարման գործընթացի շրջանակում կարող է սահմանափակել մինչև 30 ՄՎտ հզորությամբ վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառմամբ գործող և պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրերի շրջանակում միադրույք սակագնային համակարգում գործող գնման երաշխիք ունեցող կայաններից էլեկտրական էներգիայի առաքումն էլեկտրական ցանց: Միաժամանակ սահմանվել են նշված իրավահարաբերությունների հետ կապված վճարման (փոխհատուցման) մեխանիզմները:
  Որոշումներն ուժի մեջ են մտել 2026 թվականի մարտի 1-ից:
  Քանի որ նախատեսված է փոխհատուցման հստակ մեխանիզմ, ենթադրվում է, որ կարգավորման վերոնշյալ փոփոխություններն Ընկերության ֆինանսական ցուցանիշների վրա էական ազդեցություն չեն կարող ունենալ:

3.4.4.3 *ՀՀ կենտրոնական բանկ*

Պարտատոմսերի հրապարակային առաջարկի, տեղաբաշխման և պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու փաստով Թողարկողը ՀՀ օրենսդրությամբ

համարվում է հաշվետու թողարկող և դառնում արժեթղթերի շուկայի մասնակից, որի գործունեությունը կարգավորվում է համապատասխան օրենսդրությամբ, ենթաօրենսդրական ակտերով և այլ կարգավորումներով: ՀՀ արժեթղթերի շուկան ներառում է ՀՀ տարածքում արժեթղթեր թողարկող և արժեթղթերում ներդրումներ իրականացնող անձանց, ներդրումային ծառայություններ մատուցող անձանց (ներդրումային ընկերությունները, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղերը, ներդրումային ֆոնդի կառավարիչները, ներդրումային ֆոնդի օտարերկրյա կառավարչի մասնաճյուղերը, բանկերը), Կենտրոնական դեպոզիտարիան, արժեթղթերի կարգավորվող շուկայի օպերատորը և արժեթղթերի չկարգավորվող առևտրի ոլորտը: ՀՀ արժեթղթերի շուկայի կարգավորման և վերահսկողության գործառույթն իրականացնում է Կենտրոնական բանկը՝ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով: Արժեթղթերի շուկայի կարգավորման և վերահսկողության հիմնական նպատակներն են. ներդրողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, արժեթղթերի շուկայի թափանցիկության, կայուն և արդյունավետ զարգացման ապահովումը, արժեթղթերի գնագոյացման համակարգի արժանահավատության ապահովումը, արժեթղթերի շուկայում համակարգային ռիսկերի նվազեցումը: Համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի՝ թողարկող է համարվում այն անձը, որն արժեթուղթ է թողարկում (թողարկել) կամ իր անունից արժեթուղթ թողարկելու առաջարկություն է անում: Թողարկողի կողմից իրականացվող արժեթղթի թողարկումն անձի գործողությունների ամբողջությունն է՝ ուղղված նույն դասի արժեթղթերի համախմբի առաջացմանը: Ընդ որում, արժեթղթերի թողարկումը թողարկողի միևնույն որոշման հիման վրա, սակայն տարբեր ժամանակահատվածներում (սերիաներով) համարվում է մեկ թողարկում: Հաշվետու թողարկողն այն թողարկողն է, որի կողմից թողարկված որևէ դասի արժեթուղթը թույլատրված է ՀՀ տարածքում գործող կարգավորվող շուկայում առևտրին: ՀՀ արժեթղթերի շուկան կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով, «Վարչարարության հիմունքների և վարչականվարույթի մասին» ՀՀ օրենքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով, «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով, դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով, այլ օրենքներով և իրավական ակտերով:

3.5 Թողարկողի կառուցվածքը

3.5.1 *Խմբի կառուցվածքը*

ՍՈԼԻՍ ՓԲԸ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔ



ՍՈԼԻՍ-ը ստեղծվել է 2025 թվականին և հանդիսանում է «Սոլիս» ՍՊԸ-ի իրավահաջորդը: «Սոլիս» ՍՊԸ-ն հիմնադրվել է 2017 թվականին: Ընկերությունը շահագործում է ֆոտովոլտային արևային էլեկտրակայան ՀՀ Արագածոտնի մարզի Պարտիզակ համայնքում: Նախագծի տեղակայված հզորությունը կազմում է 4 ՄՎտ՝ տարեկան մինչև 7.8 ԳՎտ·ժ կանխատեսվող պլանային արտադրությամբ: Նախագիծը շահագործման է հանձնվել 2021 թվականին և ունի էլեկտրաէներգիայի գնման 20 տարվա պայմանագիր:

2022 թվականի հունիսից «ՍՈԼԻՍ» ՍՊԸ-ն հանդիսանում է «Դաս Էնտերիա Զքլարքրաֆթվերք» ՓԲԸ-ի 100% բաժնետերը, որը շահագործում է 2 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայան ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում: 2023 թվականի հոկտեմբերից Ընկերությունը հանդիսանում է նաև «Սոլար Ֆարմ» ՍՊԸ-ի 100% բաժնետերը, որը շահագործում է 5 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայան ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում: 2025 թվականի հունվարից «Սոլար Ֆարմ» ՍՊԸ-ն սկսել է «Սոլար Ֆարմ 2» անվանումով երկրորդ՝ 5 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայանի շահագործումը:

2024 թվականի մայիսից Ընկերությունը հանդիսանում է «Մոդուլ-Սան» ՍՊԸ-ի և «Մեծ Մասրիկ» ՍՊԸ-ի 100% բաժնետերը: է «Մոդուլ-Սան» ՍՊԸ-ն շահագործում է 3 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայան ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքում: Իսկ «Մեծ Մասրիկ» ՍՊԸ-ի ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքում տեղակայված 5 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայանը նախատեսվում է շահագործման հանձնել 2026 թվականի մայիսին:

2024 թվականի մայիսից Ընկերությունը հանդիսանում է նաև «Սաներջի» ՍՊԸ-ի 100% բաժնետերը, որը շահագործում է 5 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայան ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքում:

Ընկերությունը 2026 թվականի փետրվարին ձեռք է բերել ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում տեղակայված «ՍՈԼԱՐ-5» ՍՊԸ-ի 5 ՄՎտ

հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայանը: Նշված կայանը ունի 20 տարվա ժամկետով էլեկտրաէներգիայի գնման պայմանագիր (PPA):

3.5.2 *Վերահսկող անձինք*

3.5.2.1 *Վերջնական իրական շահառուներ*

Խմբի միակ բաժնետերը և վերջնական վերահսկող անձը «ԱՄԲԵՐ ԿԱՊԻՏԱԼ ԵՄ-ՀԱՅԱՍՏԱՆ ՓՄՁ ԳԳ» ՍՊԸ կողմից կառարվարվող «ԵՄ-Հայաստան ՓՄՁ հիմնադրամն» է, որում ներդրում են կատարել Եվրոպական միությունը, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը, «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի և «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ի կողմից կառավարվող կենսաթոշակային ֆոնդերը, ինչպես նաև այլ ներդրողներ: «ԵՄ-Հայաստան ՓՄՁ հիմնադրամը» հանդիսանում է առաջին ինստիտուցիոնալ մասնավոր բաժնեմասնակցային հիմնադրամը, որը կենտրոնացած է բացառապես Հայաստանում ներդրումների վրա: Հիմնադրամը Հայաստանի տնտեսության մեջ ներդրումների աջակցման եզակի գործիք է:

3.6 Թողարկողի հիմնական միջոցները

Թողարկողի հիմնական միջոցները, որոնք կազմում են Թողարկողի բոլոր հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի 10 և ավելի տոկոսը, ներկայացված են ստորև.

Գտնվելու վայրը	Տեսակը	Ընկերություն	Հաշվեկշռային արժեք հազ. դրամ	Լրացուցիչ տեղեկատվություն
ՀՀ Արագածոտնի մարզի Թալին Համայնք	Արևային Ֆոտովոլտային կայան	Սոլիս ՓԲԸ	1,143,533	Գրավադրված է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում, առաջնային գրավի կանոններով, առանց բանկի գրավոր համաձայնության, ընկերությունն իրավունք չունի կատարել գույքի պայմանների էական փոփություն, օտարում, վարձակալություն, անհատույց օգտագործում, գույքի նկատմամբ ընկերության սեփականության իրավունքի, որևէ ձևով ծանրաբեռնում, (բացառությամբ հաջորդող գրավադրմամբ),օտարում, նվիրատվություն կամ դրա խոստում, ինչպես նաև դրա փոխարինում հավասարարժեք այլ գույքով, իսկ գույքի իրացման դեպքում, իրացումից ստացված հասույթն ամբողջությամբ ուղղել վարկային պատրավորությունների կատարմանը:
ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք	Արևային Ֆոտովոլտային կայան	Դաս Էնտերիա Զոլարքրաֆթվերք ՓԲԸ	605,548	Գրավադրված է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում, առաջնային գրավի կանոններով, առանց բանկի գրավոր համաձայնության, ընկերությունն իրավունք չունի կատարել գույքի պայմանների էական փոփություն, օտարում, վարձակալություն, անհատույց օգտագործում, գույքի նկատմամբ ընկերության սեփականության իրավունքի, որևէ ձևով ծանրաբեռնում, (բացառությամբ հաջորդող գրավադրմամբ),օտարում, նվիրատվություն կամ դրա խոստում, ինչպես նաև դրա փոխարինում հավասարարժեք այլ գույքով, իսկ գույքի իրացման դեպքում, իրացումից ստացված հասույթն ամբողջությամբ ուղղել վարկային պատրավորությունների կատարմանը:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք	Արևային Ֆոտովոլտային կայան	Սոլար Ֆարմ ՍՊԸ	1,318,628	Գրավադրված է «ԱՄԻՕ Բանկ» ՓԲԸ-ում: Ընկերությունն իրավունք չունի առանց բանկի գրավոր համաձայնության օտարելու անշարժ գույքը կամ տնօրինելու այլ կերպ,բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք	Արևային Ֆոտովոլտային կայան	Սոլար Ֆարմ ՍՊԸ	1,318,628	Գրավադրված է «ԱՄԻՕ Բանկ» ՓԲԸ-ում: Ընկերությունն իրավունք չունի առանց բանկի գրավոր համաձայնության օտարելու անշարժ գույքը կամ տնօրինելու այլ կերպ,բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնք	Արևային Ֆոտովոլտային կայան	Սաներջի ՍՊԸ	1,200,022	Գրավադրված է «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում: Ընկերությունը պարտավոր է առանց բանկի գրավոր համաձայնության գրավի առարկան չօտարել, այն չհանձնել վարձակալության կամ անհատույց օգտագործման, չիրաժարվել գրավի առարկայից, չապահովագրել երրորդ անձանց օգտին, ինչպես նաև չծանրաբեռնել երրորդ անձանց իրավունքներով. Առանց գրավառուի գրավոր համաձայնության չիրականացնել գրավի առարկայի վերակառուցում կամ շինարարական աշխատանքներ, չփոփոխել գրավի առարկայի հասցեն և այլ տվյալներ, բացառությամբ այն դեպքերի, որոնք սահմանված են/կսահմանվեն ենթավարկային պայմանագրերով որպես բանկի կողմից ֆինանսավորման տրամադրման նպատակ. Առանց գրավառուի գրավոր համաձայնության, ինչպես նաև ամբողջությամբ կամ մասնակի չզիջել կամ այլ կերպ փոխանցել պայմանագրից բխող որևէ իրավունք կամ պարտականություն:
ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք	Արևային Ֆոտովոլտային կայան	Մոդուլ- Սան ՍՊԸ	878,060	Գրավադրված է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում, առաջնային գրավի կանոններով, առանց բանկի գրավոր համաձայնության, ընկերությունն իրավունք չունի կատարել գույքի պայմանների էական փոփություն, օտարում, վարձակալություն, անհատույց օգտագործում, գույքի նկատմամբ ընկերության սեփականության իրավունքի, որևէ ձևով ծանրաբեռնում, (բացառությամբ հաջորդող գրավադրմամբ),օտարում, նվիրատվություն կամ դրա խոստում, ինչպես նաև դրա փոխարինում հավասարարժեք այլ գույքով, իսկ գույքի իրացման դեպքում, իրացումից ստացված հասույթն ամբողջությամբ ուղղել վարկային պատրավորությունների կատարմանը:
ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք	Արևային Ֆոտովոլտային կայան	Մեծ Մասրիկ ՍՊԸ	879,868	Գրավադրված է «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում, ընկերությունը պարտավոր է առանց բանկի գրավոր համաձայնության Գրավի առարկան չօտարել, այն չհանձնել վարձակալության կամ անհատույց օգտագործման, չիրաժարվել Գրավի առարկայից, չապահովագրել երրորդ անձանց օգտին, ինչպես նաև չծանրաբեռնել երրորդ անձանց իրավունքներով. Առանց գրավառուի գրավոր համաձայնության չիրականացնել գրավի առարկայի վերակառուցում կամ շինարարական աշխատանքներ, չփոփոխել գրավի առարկայի հասցեն և այլ տվյալներ բացառությամբ այն դեպքերի, որոնք սահմանված են/կսահմանվեն Ենթավարկային պայմանագրերով որպես Բանկի կողմից ֆինանսավորման տրամադրման նպատակ. Առանց գրավառուի գրավոր համաձայնության ինչպես նաև ամբողջությամբ կամ մասնակի չզիջել կամ այլ կերպ փոխանցել պայմանագրից բխող որևէ իրավունք կամ պարտականություն:
ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք	Արևային Ֆոտովոլտային կայան	Սոլար-5 ՍՊԸ	1,345,847	Գրավադրված է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում, առաջնային գրավի կանոններով, առանց բանկի գրավոր համաձայնության, ընկերությունն իրավունք չունի կատարել գույքի պայմանների էական փոփություն, օտարում, վարձակալություն, անհատույց օգտագործում, գույքի նկատմամբ ընկերության սեփականության իրավունքի, որևէ ձևով ծանրաբեռնում, (բացառությամբ հաջորդող գրավադրմամբ),օտարում, նվիրատվություն

				կամ դրա խոստում, ինչպես նաև դրա փոխարինում հավասարարժեք այլ գույքով, իսկ գույքի իրացման դեպքում, իրացումից ստացված հասույթն ամբողջությամբ ուղղել վարկային պատրավորությունների կատարմանը:
Ընդամենը			**8,689,934**	

Վերոնշյալ հիմնական միջոցների կազմում ներարոված են նաև «Սոլար-5» ՍՊԸ-ին պատկանող հիմնական միջոցները, որի 100% բաժնետերը Ընկերությունը 2026 թվականի փետրվարից է հանդիսանում:
Վերոնշյալ հիմնական միջոցները վարձակալությամբ տրամադրված/վերցված չեն:

Ներկա պահին Ընկերության կողմից չի պլանավորվում էական մեծություն կազմող հիմնական միջոցների ձեռքբերում (այդ թվում՝ վարձակալությամբ):

Թողարկողի կողմից չեն սպասվում այնպիսի փոփոխություններ, որոնք կարող են սահմանափակել նշված հիմնական միջոցների օգտագործումը:

3.7 Զարգացման վերջին միտումները

2025թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ընդհանուր հասույթը կազմել է 877.9 մլն ՀՀ դրամ, իսկ EBITDA-ն՝ 700 մլն ՀՀ դրամ՝ ապահովելով վերականգնվող էներգետիկայի ոլորտին բնորոշ բարձր՝ ավելի քան 80% EBITDA մարժա: Նույն ժամանակահատվածում զուտ շահույթը կազմել է 293 մլն ՀՀ դրամ՝ 33% մարժայով:

Կայանների տեխնիկական արդյունավետության բարձրացումն ու մասնագիտական կառավարումը թույլ են տալիս նվազեցնել շահագործման ծախսերը և ապահովել դրամական հոսքերի կայուն աճը:

2026 թվականի փետրվարից Ընկերությունը հանդիսանում է նաև «Սոլար-5» ՍՊԸ-ի 100% բաժնետերը, որը շահագործում է 5 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայան ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում:

Նախատեսվում է նաև 2026 թվականի մայիսին շահագործման հանձնել «Մեծ Մասրիկ» ՍՊԸ-ին պատկանող «Արև» կայանը: Նշված կայանների շահագործումը դրական ազդեցություն կունենա Թողարկողի 2026թ. ֆինանսական ցուցանիշների վրա:

3.8 Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը

Ընկերության ղեկավարության կանխատեսումներով՝ Ընկերության հիմնական տնտեսական ցուցանիշները 2026-2030 թվականներին կունենան հետևյալ դինամիկան.

Ցուցանիշ (մլն դրամ)	**2023թ.**	**2024թ.**	**2025թ.**	2026թ.	2027թ.	2028թ.	2029թ.	2030թ.
Հասույթ	266	487	878	1,282	1,313	1,306	1,301	1,296
EBITDA	213	353	700	1,066	1,090	1,078	1,068	1,058
Զուտ շահույթ	16	27	293	419	436	450	468	529

Կանխատեսման հիմնական սկզբունքները և ենթադրություններն են.

- Արտադրողականության կանխատեսում՝ հիմնված նախորդ ժամանակաշրջանների փաստացի արտադրողականության արդյունքների վրա.
- Ծախսերի պլանավորում՝ հիմնված նախորդ ժամանակաշրջանների փաստացի արդյունքների վրա.
- Սակագնի կանխատեսում՝ երաշխավորված գնման պայմանագրեր ունեցող ընկերությունների համար՝ հիմնված հաստատված բանաձևի վրա, իսկ ազատ շուկայում գործող ընկերությունների համար՝ հիմնված առաջարկի և պահանջարկի կանխատեսումների վրա:

Շահույթի կանխատեսման տեսանկյունից Թողարկողի կառավարման մարմինները հնարավորություն ունեն ազդելու այնպիսի գործոնների վրա, ինչպիսիք են՝

- Արդյունավետ արտադրության կազմակերպումը.
- Կայանների ժամանակին և որակյալ սպասարկումը.
- Կանխարգելիչ վերանորոգումները.
- Ծախսերի պլանավորումը և կառավարումը.

Շահույթի կանխատեսման տեսանկյունից Թողարկողի կառավարման մարմինները հնարավորություն չունեն ազդելու այնպիսի գործոնների վրա, ինչպիսիք են՝

- Արտարժույթային ռիսկը.
- Տոկոսադրույքի ռիսկը.
- Ոլորտի հնարավոր օրենսդրական փոփոխությունները:

3.9 Թողարկողի կառավարման մարմինները և անդամները

3.9.1 *Կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը*

Թողարկողի կառավարման մարմիններն են Ընդհանուր Ժողովը, Խորհուրդը և Գլխավոր տնօրենը:

3.9.2 *Կառավարման մարմինների իրավասությունները*

Ընկերության Ընդհանուր Ժողովը Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:

3.9.2.1 ***Ընդհանուր Ժողով***

Ընկերության Ընդհանուր Ժողովը կառավարման բարձրագույն մարմինն է: Ընդհանուր ժողովի իրավասություններն են՝

1. Ընկերության Կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխություններ կամ լրացումներ կատարելը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրմամբ.
2. Ընկերության վերակազմակերպումը.
3. Ընկերության լուծարումը,
4. Ընկերության ամփոփ, միջանկյալ և լուծարային հաշվեկշիռների հաստատումը. լուծարային հանձնաժողովի նշանակումը
5. Ընկերության հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.
6. Բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.
7. Ընկերության Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության

հարցերը քննարկվում են բացառապես տարեկան Ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ Ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

8. Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը. Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.
9. Ընկերության Խորհրդի նախագահի կամ անդամի աշխատանքի վարձատրության և պայմանների որոշումը.
10. Վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) վարձատրության և (կամ) ծախսերի փոխհատուցման չափերի և պայմանների հաստատումը.
11. Շահագրգռվածության առկայության դեպքում Ընկերության գործարքների կնքումը՝ Օրենքով նախատեսված դեպքերում.
12. Հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.
13. Ընկերության բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան) և բաժանումը
14. Օրենքով նախատեսված դեպքերում խոշոր գործարքների կնքման մասին որոշումների ընդունումը.
15. Բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը, ինչպես նաև Ընկերության արժեթղթերը բաժնետոմսերի փոխարկելու՞ կարգի հաստատումը.
16. Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը
17. Բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.
18. Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի հետգնումը.
19. Օրենքով և Կանոնադրությամբ նախատեսված Ժողովի իրավասությանը վերապահված այլ հարցերի լուծման ռավասությունը:

3.9.2.2 ***Խորհուրդ***

Ընկերության Խորհուրդի իրավասությանն են պատկանում՝

1. Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.
2. Ժողովների գումարումը, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի, Ժողովների օրակարգի հաստատումը.
3. Գույքի շուկայական արժեքի որոշումը՝ Օրենքով սահմանված կարգով.

4. Խորհրդին կից հանձնաժողովների հանձնախմբերի) ձևավորումը, այդ թվում՝ աուդիտի.
5. Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.
6. Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ Ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.
7. Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.
8. Ընկերության պահուստային և այլ դրամների օգտագործումը.
9. Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.
10. Ընկերության տարեկան ծախսերի բյուջեի հաշվի և դրա կատարողականի հաստատումը.
11. Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ժողովին ներկայացումը.
12. Այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում
13. Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարմակ կարգի և պայմանների վերաբերյալ Ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.
14. Շահագրգռվածության առկայության դեպքում Ընկերության գործարքների կնքումը՝ Օրենքով նախատեսված դեպքերում.
15. Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված այլ գործարքների կնքումը, եթե այդ գույքի արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 1-ից մինչ 50 տոկոսը, բացառությամբ Ընկերության բնականոն տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարքների.
16. Խորհրդի նախագահի և փոխնախագահի ընտրությունը.
17. Ընկերության գործադիր մարմնի (միանձնյա, կոլեգիալ) ձևավորումը, լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև Ընկերության գործադիր մարմնի լիազորությունները մանակավորապես իրականացնող պաշտոնատար անձի նշանակումը.
18. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը և ազատումը.
19. Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
20. Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց (տնօրենի, գլխավոր տնօրենի կամ վարչության, տնօրինության անդամի) աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը.
21. դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը կամ դրանց մասնակցությունը.

22. Հոլդինգային ընկերությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների հիմնադրումը կամ դրանց մասնակցությունը.
23. Ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը.
24. Օրենքով և Կանոնադրությամբ նախատեսված Խորհրդի իրավասությանը վերապահված այլ հարցերի լուծման իրավասությունը.

3.9.2.3 ***Գլխավոր Տնօրեն***

Գլխավոր տնօրենը՝

1. Տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից.
2. Ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.
3. Գործում է առանց լիազորագրի.
4. Տալիս է լիազորագրեր
5. Սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային
6. Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը
7. Սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին.
8. Աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.
9. Որոշում է կայացնում Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի վերաբերյալ, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.
10. Հաստատում է Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը.
11. Հաստատում է Ընկերության հաստիքացուցակը.
12. Որոշումներ է կայացնում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման այլ հարցերի առնչությամբ՝ բացառությամբ Օրենքով և Կանոնադրությամբ Ժողովի և Խորհրդի բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերի:

3.9.3 *Թողարկողի կառավարման մարմինների անդամները*

Թողարկողի կառավարմանը մասնակցող յուրաքանչյուր անձի վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են ստորև բերված աղյուսակում՝

3.9.3.1 *Թողարկողի Ընդհանուր ժողովի մասնակիցները*

Թողարկողի ընդհանուր ժողովում մասնակցում են «ԵՄ-ՀԱՅԱՍՏԱՆ ՓՄՁ ՀԻՄՆԱԴՐԱՄ» հատուկ սահմանափակ ընկերակցության գլխավոր գործընկեր կառավարիչ հանդիսացող «ԱՄԲԵՐ ԿԱՊԻՏԱԼ ԵՄ-ՀԱՅԱՍՏԱՆ ՓՄՁ ԳԳ» ՍՊԸ-ի երեք կառավարիչները՝ Գրիգոր Վարդանյանը («Ա» դասի կառավարիչ), Պաուլ-Էմիլ Կորնետը («Բ» դասի կառավարիչ) և Ռիկկարդո Դե Ֆրանչեսկոն («Բ» դասի կառավարիչ):

Համաձայն «ԱՄԲԵՐ ԿԱՊԻՏԱԼ ԵՄ-ՀԱՅԱՍՏԱՆ ՓՄՁ ԳԳ» ՍՊԸ-ի կանոնադրության 7-րդ հոդվածի՝ ժողովը իրավասու է որոշումներ ընդունել պարզ մեծամասնությամբ, պայմանով, որ որոշման օգտին քվեարկեն առնվազն մեկ «Ա» դասի և առնվազն մեկ «Բ» դասի կառավարիչ

3.9.3.2 *Թողարկողի Խորհրդի անդամները*

Անունը, ազգանունը	Պաշտոնը	Փորձառությունը ոլորտում
Անուշավան Սիմոնյան	Խորհրդի նախագահ	30 և ավելի տարի
Գրիգոր Վարդանյան	Խորհրդի անդամ	18 և ավելի տարի
Կարեն Արաբյան	Խորհրդի անդամ	20 և ավելի տարի

- **Անուշավան Սիմոնյան (Խորհրդի նախագահ) –**
  - բնակության վայր՝ ՀՀ, ք. Երևան
  - մասնագիտությունը/որակավորումը՝ Տնտեսագետ, Ֆինանսիստ, Կոլումբիայի Համալսարան - MIA
  - Թողարկողի կազմից դուրս այլ գործունեություն՝ Ամբեր Կապիտալ Հասաստան ՓԲԸ - Կառավարիչ գործընկեր, Ալֆա Ֆուդ Սերվիս ՓԲԸ - Խորհրդի անդամ, Ավտո Գելլրի ՓԲԸ - Խորհրդի անդամ, Արինտերլև ՓԲԸ - Խորհրդի անդամ, Սիս Նատուրալ ՓԲԸ - Խորհրդի անդամ, Հայդրոսթրիմ Վենչըրս ՓԲԸ - Խորհրդի նախագահ
  - նախորդ 5 տարվա ընթացքում զբաղեցրած ղեկավար պաշտոններ՝ Ամբեր Կապիտալ Հասաստան ՓԲԸ -Կառավարիչ գործընկեր, Ալֆա Ֆուդ Սերվիս ՓԲԸ- Խորհրդի անդամ, Ավտո Գելլրի ՓԲԸ- Խորհրդի անդամ,Արինտերլև ՓԲԸ- Խորհրդի անդամ, Սիս Նատուրալ ՓԲԸ- Խորհրդի անդամ, Հայդրոսթրիմ Վենչըրս ՓԲԸ- Խորհրդի նախագահ
- **Գրիգոր Վարդանյան (Խորհրդի անդամ) –**
  - բնակության վայր՝ ՀՀ, ք.Երևան

- մասնագիտությունը/որակավորումը՝ Տնտեսագետ, Ֆինանսիստ, FCCA
- թողարկողի կազմից դուրս այլ գործունեություն՝ Ամբեր Կապիտալ Հայաստան ՓԲԸ - Ֆինանսական Տնօրեն, Էկովիլ Հոլդինգ ՓԲԸ - Խորհրդի անդամ, Հայդրոսթիմ Վենչըրս ՓԲԸ - Խորհրդի անդամ, Ավտո Գելլրի ՓԲԸ - Խորհրդի անդամ
- նախորդ 5 տարվա ընթացքում զբաղեցրած ղեկավար պաշտոններ՝ Ամբեր Կապիտալ Հայաստան ՓԲԸ - Ֆինանսական Տնօրեն, Էկովիլ Հոլդինգ ՓԲԸ - Խորհրդի անդամ, Հայդրոսթիմ Վենչըրս ՓԲԸ - Խորհրդի անդամ, Ավտո Գելլրի ՓԲԸ - Խորհրդի անդամ, Էրնսթ Էնդ Յանգ ՓԲԸ- աուդիտի բաժնի տնօրեն,

- **Կարեն Արաբյան (Խորհրդի անդամ/Գլխավոր տնօրեն) –**
  - բնակության վայր՝ ՀՀ, ք. Երևան
  - մասնագիտությունը/որակավորումը՝ Ճարտարագետ-էներգետիկ, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան, Մագիստրոս, Ֆինանսական ռազմավարության դիպլոմ, Օքսֆորդի համալսարանի Սաիդ բիզնես դպրոց
  - Թողարկողի կազմից դուրս այլ գործունեություն՝ Էկովիլ Հոլդինգ ՓԲԸ- Խորհրդի անդամ, Հայդրոսթիմ Վենչըրս ՓԲԸ- Տնօրեն և Խորհրդի անդամ, Տիրակալ ՍՊԸ- Տնօրեն, Ակադեմիկոս Ա.Լ. Մնջոյանի Գյումրիի ՀԷԿ ՍՊԸ- Տնօրեն
  - նախորդ 5 տարվա ընթացքում զբաղեցրած ղեկավար պաշտոններ՝ Էկովիլ Հոլդինգ ՓԲԸ- Խորհրդի անդամ, Հայդրոսթիմ Վենչըրս ՓԲԸ- Տնօրեն և Խորհրդի անդամ, Տիրակալ ՍՊԸ- Տնօրեն, Ակադեմիկոս Ա.Լ. Մնջոյանի Գյումրիի ՀԷԿ ՍՊԸ- Տնօրեն:

3.9.3.3 *Թողարկողի Գլխավոր տնօրենը*

Անունը, ազգանունը	Պաշտոնը	Փորձառությունը ոլորտում
Կարեն Արաբյան	Գլխավոր տնօրեն	20 և ավելի տարի

- **Կարեն Արաբյան (Խորհրդի անդամ/Գլխավոր տնօրեն) –**
  - բնակության վայր՝ ՀՀ, ք. Երևան
  - մասնագիտությունը/որակավորումը՝ ճարտարագետ-էներգետիկ, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան, Մագիստրոս,

Ֆինանսական ռազմավարության դիպլոմ, Օքսֆորդի համալսարանի Սաիդ բիզնես դպրոց

- Թողարկողի կազմից դուրս այլ գործունեություն՝ Էկովիլ Հոլդինգ ՓԲԸ- Խորհրդի անդամ, Հայդրոսթիմ Վենչըրս ՓԲԸ- Տնօրեն և Խորհրդի անդամ, Տիրակալ ՍՊԸ- Տնօրեն, Ակադեմիկոս Ա.Լ. Մնջոյանի Գյումրիի ՀԷԿ ՍՊԸ- Տնօրեն,
- նախորդ 5 տարվա ընթացքում զբաղեցրած ղեկավար պաշտոններ՝ Էկովիլ Հոլդինգ ՓԲԸ- Խորհրդի անդամ, Հայդրոսթիմ Վենչըրս ՓԲԸ- Տնօրեն և Խորհրդի անդամ, Տիրակալ ՍՊԸ- Տնօրեն, Ակադեմիկոս Ա.Լ. Մնջոյանի Գյումրիի ՀԷԿ ՍՊԸ- Տնօրեն,

3.9.4 ***Շահերի բախումը***

Թողարկողի կառավարման մարմնի անդամների՝ Թողարկողի նկատմամբ իրենց պարտականությունների և իրենց անձնական շահերի միջև բախման ռիսկերը բացակայում են՝ պայմանավորված Ընկերությունում ներդրված շահերի բախումը նվազեցնելու/բացառելու քաղաքականությամբ:

3.10 Կառավարման մարմինների գործունեությունը

3.10.1 *Թողարկողի աուդիտի կոմիտեն*

Թողարկողը չունի ձևավորված աուդիտի կոմիտե:

3.10.2 *Կորպորատիվ կառավարման սկզբունքները*

Ընկերությունն առաջնորդվում է իր կազմակերպաիրավական ձևին և ոլորտին համապատասխան կորպորատիվ կառավարման սկզբունքներով և պահանջներով: Ազդագիրը ՀՀ ԿԲ գրանցման ներկայացնելու պահի դրությամբ Ընկերությունը չի բացառում, միևնույն ժամանակ նաև չի հաստատում Ընկերությունում գործող կորպորատիվ կառավարման համակարգի համապատասխանությունը ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2024թ. հուլիսի 30-ի N 1955-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագրքին», քանի որ համապատասխան անկախ մասնագիտական համեմատական վերլուծություն դեռևս չի իրականացվել:

3.11 Հսկող անձինք

Թողարկողն ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի գտնվում հսկողության տակ (չունի հսկող անձ):

Խմբի միակ բաժնետերը և վերջնական վերահսկող անձը անձը «ԱՄԲԵՐ ԿԱՊԻՏԱԼ ԵՄ-ՀԱՅԱՍՏԱՆ ՓՄՁ ԳԳ» ՍՊԸ կողմից կառարվարվող «ԵՄ-Հայաստան ՓՄՁ հիմնադրամն» է, որում ներդրում են կատարել Եվրոպական միությունը, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը, «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի և «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ի կողմից կառավարվող կենսաթոշակային ֆոնդերը, ինչպես նաև այլ ներդրողներ: «ԵՄ-Հայաստան ՓՄՁ հիմնադրամը» հանդիսանում է առաջին ինստիտուցիոնալ մասնավոր բաժնեմասնակցային հիմնադրամը, որը կենտրոնացած է բացառապես Հայաստանում ներդրումների վրա: Հիմնադրամը Հայաստանի տնտեսության մեջ ներդրումների աջակցման եզակի գործիք է:

3.12 Տեղեկատվություն թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին

3.12.1 *Պատմական ֆինանսական տեղեկատվություն*

Ընկերության 2024-2025թթ. ֆինանսական տարիների համար աուդիտորական եզրակացությամբ հաստատված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են Հավելված 4-ում:

3.12.2 *Միջանկյալ ֆինանսական տեղեկատվություն*

Ընկերության 2025թ. ֆինանսական տարվա աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են Հավելված 4-ում: 2026թ. 1-ին եռամսյակի միջանկյալ հաշվետվություն դեռևս ձևավորված չէ:

3.12.3 *Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները*

2026 թվականի փետրվարից Ընկերությունը հանդիսանում է «Սոլար-5» ՍՊԸ-ի 100% բաժնետերը, որը շահագործում է 5 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայան ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում:

Նախատեսվում է 2026 թվականի մայիսին նաև շահագործման հանձնել «Մեծ Մասրիկ» ՍՊԸ-ին պատկանող «Արև» կայանը: Նշված կայանների շահագործումը դրական ազդեցություն կունենա Թողարկողի 2026թ. ֆինանսական ցուցանիշների վրա:

3.12.4 *Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն*

Թողարկողը ներգրավված չէ դատական, արբիտրաժային և (կամ) վարչական որևէ վարույթում, որը ունեցել կամ կարող է ունենալ էական ազդեցություն Թողարկողի ֆինանսական վիճակի կամ արդյունքների վրա:

3.13 Լրացուցիչ տեղեկատվություն

3.13.1 *Կանոնադրական կապիտալը*

3.13.1.1 **Կանոնադրական կապիտալի մեծությունը**

Ընկերության կանոնադրական կապիտալն առ 31.12.2025թ. կազմել է 1,995,912,604.3 ՀՀ դրամ:

3.13.1.2 **Հայտարարված բաժնեմասերի քանակը**

Ընկերության հայտարարված, տեղաբաշխված և լրիվ վճարված բաժնետոմսերի քանակն առ 31.12.2025թ. կազմել է 1 (մեկ) հատ՝ 1,995,912,604.3 ՀՀ դրամ անվանական արժեքով:

Ընկերությունը չունի հայտարարված, սակայն չտեղաբաշխված կամ լրիվ չվարճված բաժնետոմսեր:

3.13.1.3 **Թողարկված բաժնեմասերի քանակը**

Ընկերության կանոնադրական կապիտալը բաղկացած է 1 (մեկ) հատ տեղաբաշխված բաժնետոմսից:

3.13.1.4 **Մեկ բաժնեմասի անվանական արժեքը**

Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1,995,912,604.3 ՀՀ դրամ:

3.13.2 *Կանոնադրությունը*

Համաձայն Թողարկողի կանոնադրության 2-րդ բաժնի Ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործունեություն (այդ թվում՝ ծառայությունների մատուցում) իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը: Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն: Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի (հատուկ թույլտվության) առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից կամ նրանում նշված ժամկետում:

3.14 Էական պայմանագրերը

Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 1 տարվա ընթացքում Թողարկողը չի ունեցել իր բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող այնպիսի էական պայմանագրեր, որոնց գինը գերազանցում է Թողարկողի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5%-ը:

3.15 Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը

Ազդագրի որևէ մասում չի օգտագործվել հաշվապահի, գնահատողի, խորհրդատուի կամ ցանկացած այլ փորձագետի մասնագիտական կարծիք, բացի աուդիտորական եզրակացությամբ հաստատված ֆինանսական հաշվետվություններից, որոնք ներկայացված են Հավելված 4-ում:

Թողարկողը հավաստիացնում է, որ այդ հաշվետվություններից օգտագործված տեղեկատվությունը ճշգրտորեն է վերարտադրվել Ազդագրում, և բաց չի թողնվել որևէ փաստ, որը կարող էր խեղաթյուրել այդ տեղեկատվության իմաստը: Ազդագրի համապատասխան մասերում նշված է տեղեկատվության համապատասխան աղբյուրը:

3.16 Այլ տեղեկատվություն

Թողարկողի կանոնադրությունը, տարեկան ֆինանսական հաշվետվությունները և աուդիտորական եզրակացությունները և միջանկյալ հաշվետվություններըհասանելի են էլեկտրոնային տարբերակով Թողարկողի պաշտոնական կայքում՝ www.Solis.am հասցեով:

Ազդագիրը կարող է ներառել որոշակի ֆինանսական ցուցանիշներ կամ ֆինանսական գործակիցների հաշվարկներ, որոնք չեն հանդիսանում ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ) կողմից սահմանված ցուցանիշներ («Ոչ ՖՀՄՍ ցուցանիշներ»):

Նաև հարկ է նշել, Ազդագրում ներկայացված մյուս բոլոր ցուցանիշները և գործակիցները չեն հաստատվել ֆինանսական հաշվետվությունների արտաքին աուդիտն իրականացրած ընկերության կողմից՝ բացառությամբ այն ցուցանիշների, որոնց համար կա համապատասխան նշում:

ՆԵՐԴՐՈՂԸ, ԾԱՆՈԹԱՆԱԼՈՎ ՍՈՒՅՆ ԱԶԴԱԳՐԻՆ, ՊԵՏՔ Է ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՆԱՀԱՏԻ ՏՎՅԱԼ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՍԵՓԱԿԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՌԻՍԿԸ՝ ՄԻՆՉԵՎ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ:

ՄԱՍ 4 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

4.1 ՀԱՎԵԼՎԱԾ 1: Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը

Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Բաժնետոմսերի միջին կշռված թիվը

Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Սեփական կապիտալի միջին մեծություն

Ակտիվների շահութաբերություն (ROA) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Ընդհանուր ակտիվների միջին մեծություն

Զուտ շահույթի մարժա (NPM) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ

Կապիտալի համարժեքության գործակից = Սեփական կապիտալ / Ընդհանուր ակտիվներ

Ֆինանսական կախվածության գործակից = Ընդամենը պարտավորություններ / Սեփական կապիտալ

Բացարձակ իրացվելիության գործակից = (Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ + Ընթացիկ ֆինանսական ներդրումներ) / Ընթացիկ պարտավորություններ

Ընթացիկ իրացվելիության գործակից = (Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ + Ընթացիկ ֆինանսական ներդրումներ + Ընթացիկ դեբիտորական պարտքեր և կանխավճարներ) / Ընթացիկ պարտավորություններ

Ընդհանուր իրացվելիության գործակից = Ընթացիկ ակտիվներ / Ընթացիկ պարտավորություններ

Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից = Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ / Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի միջին արժեքը

Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով = 365 / (Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ / Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի միջին արժեքը)

Պաշարների շրջանառելիության գործակից = Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Պաշարների միջին արժեքը

Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով = 365 / (Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Պաշարների միջին արժեքը)

Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից = Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Կրեդիտորական պարտքերի միջին արժեքը

Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով = 365 / (Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Կրեդիտորական պարտքերի միջին արժեքը):

4.2 ՀԱՎԵԼՎԱԾ 2: Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը



4.3 ՀԱՎԵԼՎԱԾ 3: Սահմանումներ

ԷՄԾ կանոններ՝ Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի կանոններ

ՎԷԱ կայան՝ «Էներգետիկայի մասին» օրենքով սահմանված էլեկտրական էներգիայի գնման երաշխիք ունեցող մինչև 30 ՄՎտ հզորությամբ Վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառմամբ Արտադրող, բացառությամբ ՊԷԱ կայանի.»

ՊԷԱ կայան՝ պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրի շրջանակում գործող Արտադրող, բացառությամբ ՀԷԱ կայանի.»

ՀԷԱ կայան՝ հաշվեկշռման և հաճախականության կարգավորման նպատակով երկրորդային և երրորդային պահուստ ապահովող Արտադրող.»

ՀԾՄ՝ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի և մեծածախ առևտրի լիցենզիայի հիման վրա հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրող

ԷՀՑ կանոններ՝ Հանձնաժողովի հաստատած Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի հաղորդման ցանցային կանոններ.

4.4 ՀԱՎԵԼՎԱԾ 4: Ֆինանսական հաշվետվություններ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Սոլիս» ՓԲԸ և դուստր ընկերություններ

31 դեկտեմբերի 2025թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	9
Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	10
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես
կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

«Սոլիս» ՓԲԸ-ի բաժնետիրոջը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Սոլիս» ՓԲԸ-ի և նրա դուստր ընկերությունների (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը և դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվությունը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքները և համախմբված դրամական հոսքերը՝ համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի» (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները)* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են համախմբված ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում: Մենք նաև կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՀՀՄՍԽ կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Խումբը լուծարելու կամ Խմբի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական

ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Խմբի աուդիտը պլանավորում և իրականացնում ենք այնպես, որ ձեռք բերենք բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի կազմի մեջ մտնող կազմակերպությունների կամ բիզնես միավորների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ որպես հիմք Խմբի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն

Էմիլ Վասիլյան, FCCA
Առաջադրանքի պատասխանատու

21 ապրիլի 2026թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2025թ.	2024թ.
Հասույթ	6	877,904	487,422
Այլ եկամուտ	7	33,826	-
Աշխատավարձ		(41,192)	(38,724)
Կայանների պահպանման ծախսեր		(36,000)	(34,183)
Արժույթի փոխարկման ծախսեր		(13,498)	(11,056)
Պետական տուրքերի վճարներ		(20,286)	(14,911)
Մասնագիտական ծառայությունների գծով ծախսեր		(35,458)	(18,743)
Այլ ծախսեր		(31,355)	(17,063)
Մաշվածություն և ամորտիզացիա	9, 10	(195,351)	(138,133)
Գործառնական գործունեությունից շահույթ		**538,590**	**214,609**
Ֆինանսական եկամուտ	7	3,761	2,588
Ֆինանսական ծախսեր	7	(302,496)	(229,819)
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ		104,412	48,028
Շահույթ մինչև հարկերը		**344,267**	**35,406**
Շահութահարկի գծով ծախս	8	(50,904)	(8,575)
Տարվա շահույթ		**293,363**	**26,831**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**293,363**	**26,831**

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	10	7,384,447	6,429,464
Ոչ նյութական ակտիվներ	9	291,350	307,635
Գուդվիլ	11	284,442	284,442
Տրված կանխավճարներ	14	113,996	404,777
Հետաձգված հարկային ակտիվներ	13	1,682	1,469
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**8,075,917**	**7,427,787**
Ընթացիկ ակտիվներ			
Դեբիտորական պարտքեր	14	71,614	44,786
Պաշարներ		17,400	-
Այլ ակտիվներ		12,431	3,036
Կանխավճարներ հարկերի գծով		117,142	66,374
ԱԱՀ-ի գծով դեբիտորական պարտքեր		1,070	201,433
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	570,385	333,835
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**790,042**	**649,464**
Ընդամենը ակտիվներ		**8,865,959**	**8,077,251**

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Սեփական կապիտալ	16		
Բաժնետիրական կապիտալ		1,995,913	300,001
Էմիսիոն եկամուտ		1,125,188	-
Լրացուցիչ կապիտալ		39,675	2,821,100
Կուտակված շահույթ		637,622	344,259
Ընդամենը սեփական կապիտալ		**3,798,398**	**3,465,360**
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված հարկային պարտավորություններ	13	181,111	134,562
Պետական դրամաշնորհներ	10	38,644	16,367
Բանկային վարկեր	12	4,340,661	3,785,279
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**4,560,416**	**3,936,208**
Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր		6,152	210,951
Բանկային վարկեր	12	367,511	418,056
Ստացված կանխավճարներ		-	8,857
Հարկային պարտավորություններ		13	164
Շահութահարկի գծով պարտավորություններ		4,568	-
ԱԱՀ-ի գծով պարտավորություններ		125,078	35,409
Արձակուրդի պահուստ		3,487	1,965
Այլ պարտավորություններ		336	281
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**507,145**	**675,683**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**8,865,959**	**8,077,251**

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2026թ. ապրիլի 21-ին.

Կարեն Արաբյան
Տնօրեն

Լուսինե Կարապետյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Բաժնե-տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Լրացուցիչ կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդ	**300,001**	**-**	**1,337,122**	**317,428**	**1,954,551**
Կապիտալի համալրում	-	-	1,483,978	-	1,483,978
Տարվա շահույթ	-	-		26,831	26,831
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդ	**300,001**	**-**	**2,821,100**	**344,259**	**3,465,360**
Լրացուցիչ կապիտալի փոխարկումը բաժնետիրական կապիտալին	1,695,912	-	(1,695,912)	-	-
Կապիտալի համալրում	-	-	39,675	-	39,675
Լրացուցիչ կապիտալի փոխարկումը էմիսիոն եկամտին	-	1,125,188	(1,125,188)	-	-
Տարվա շահույթ	-	-	-	293,363	293,363
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդ	**1,995,913**	**1,125,188**	**39,675**	**637,622**	**3,798,398**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2025թ.	2024թ.
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
Տարվա շահույթ նախքան հարկումը	344,267	35,406
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	195,351	138,133
Զուտ ֆինանսական ծախսեր	298,735	227,231
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	(104,412)	(48,028)
Այլ եկամուտ	(33,826)	-
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	**700,115**	**352,742**
Փոփոխություններ		
ԱԱՀ-ի գծով դեբիտորական պարտքեր	200,363	(78,281)
Դեբիտորական պարտքեր	(26,828)	17,581
Այլ ակտիվներ	(77,562)	(114,136)
Կրեդիտորական պարտքեր	(204,799)	130,469
ԱԱՀ-ի գծով պարտավորություններ	89,669	33,127
Այլ պարտավորություններ	(7,238)	(7,052)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ մինչև հարկումը և տոկոսների վճարումը	**673,720**	**334,450**
Վճարված տոկոսներ	(263,023)	(229,819)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**410,697**	**104,631**

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	2025թ.	2024թ.
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(566,395)	(1,923,638)
Դուստր ձեռնարկությունների ձեռքբերում, զուտ ստացված դրամական միջոցները և դրանց համարժեքները	-	(467,857)
Մուտքեր բանկային ավանդներից և մնացորդներից	3,830	2,583
Մուտքեր պետական դրամաշնորհներից	21,461	14,373
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(541,104)**	**(2,374,539)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական հոսքեր		
Կապիտալի համալրում	39,675	1,483,978
Մուտքեր բանկային վարկերից	1,291,429	1,032,424
Բանկային վարկերի մարում	(964,711)	(426,613)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**366,393**	**2,089,789**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ (նվազում)	235,986	(180,119)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	564	(12,123)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում	333,835	526,077
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	**570,385**	**333,835**

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Սոլիս» ՓԲԸ և դուստր ընկերություններ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական (ՀՀ) դրամով)

1 Գործառնությունների բնույթը

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են «Սոլիս» ՓԲԸ-ի («Սոլիս» ՍՊԸ-ի իրավահաջորդը) և նրա դուստր ընկերությունների՝ «Դաս Էնտերիա Զոլարքաֆթվերք» ՓԲԸ-ի, «Սոլար Ֆարմ» ՍՊԸ-ի, «Մոդուլ-Սան» ՍՊԸ-ի, «Մեծ Մասրիկ» ՍՊԸ-ի և «Սաներջի» ՍՊԸ-ի համար (այսուհետ՝ միասին՝ «Խումբ»):

«Սոլիս» ՓԲԸ-ն շահագործում է 4 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայան Արագածոտնի մարզի Պարտիզակ համայնքում: Նախագիծը շահագործման է հանձնվել 2021թ. և գործում է 20-ամյա երաշխավորված էլեկտրաէներգիայի գնման պայմանագրով (PPA)՝ կարգավորվող արտոնյալ սակագնով (FIT):

2022թ. հունիսից «Սոլիս»-ը հանդիսանում է «Դաս Էնտերիա Զոլարքաֆթվերք» ՓԲԸ-ի 100% բաժնետեր, որը շահագործում է 2 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայան ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում: Նախագիծը շահագործման է հանձնվել 20-ամյա երաշխավորված էլեկտրաէներգիայի գնման պայմանագրով (PPA)՝ կարգավորվող արտոնյալ սակագնով (FIT):

2023թ. հոկտեմբերից «Սոլիս»-ը հանդիսանում է «Սոլար Ֆարմ» ՍՊԸ-ի 100% բաժնետեր, որը շահագործում է 5 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայան ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում, որը գործում է կարգավորվող FIT ռեժիմով՝ 20-ամյա երաշխավորված PPA-ով: 2024թ. ընթացքում «Սոլար Ֆարմ» ՍՊԸ-ն սկսել է երկրորդ 5 ՄՎտ հզորությամբ կայանի («Սոլար Ֆարմ 2») շինարարությունը, որը շահագործման է հանձնվել 2025թ. հունվարին: Նախագիծն իրականացվում է երկկողմանի էլեկտրաէներգիայի գնման պայմանագրով (PPA) չկարգավորվող սակագնով:

2024թ. մայիսից Սոլիսը հանդիսանում է «Մոդուլ-Սան» ՍՊԸ-ի և «Մեծ Մասրիկ» ՍՊԸ-ի 100% բաժնետեր: «Մոդուլ-Սան» ՍՊԸ-ն 3 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայան է Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղում: Նախագիծը շահագործման է հանձնվել 20-ամյա երաշխավորված էլեկտրաէներգիայի գնման պայմանագրով (PPA)՝ կարգավորվող արտոնյալ սակագնով (FIT):

«Մեծ Մասրիկ» ՍՊԸ-ին է պատկանում «Մոդուլ-Սան» կայանի հարակից հողատարածքը և 5 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի կառուցման և շահագործման լիցենզիան: Շինարարությունն ընթացքի մեջ է, շահագործման հանձնումը նախատեսված է 2026թ. մայիս ամսին: Նախագիծն իրականացվում է երկկողմանի էլեկտրաէներգիայի գնման պայմանագրով (PPA) չկարգավորվող սակագնով:

2024թ. մայիսից ի վեր «Սոլիսը» «Սաներջի» ՍՊԸ-ի 100% բաժնետերն է, որը շահագործում է 5 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայան Կոտայքի մարզի Գառնի համայնքում, որը շահագործման է հանձնվել 2025թ. հունիսին: Նախագիծն իրականացվում է երկկողմանի էլեկտրաէներգիայի գնման պայմանագրով (PPA) չկարգավորվող սակագնով:

2 Ընդհանուր տեղեկատվություն, ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխանության հավաստում և անընդհատության ենթադրություն

«Սոլիս»-ը հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Պարտիզակ գյուղում:

Խմբի միակ բաժնետերը և վերջնական վերահսկողը ԵՄ-Հայաստան ՓՄՁ հիմնադրամն է:

Իրավաբանական գրանցման և գործունեության իրականացման հասցեն է 10 Վազգեն Սարգսյան, 98 Հայաստանի Հանրապետություն:

Խմբի աշխատակիցների միջին թվաքանակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 7 մարդ (31 դեկտեմբերի 2024թ.՝ 6 մարդ): Բոլոր կայանների գործառնական կառավարումը վստահված է ծառայություններ մատուցող կազմակերպություններին, բացառությամբ «Մոդուլ-Սան» ՍՊԸ-ի, որտեղ աշխատում են Խմբի աշխատակիցները

Դուստր ընկերություններ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված են հետևյալ դուստր ընկերությունները.

31 դեկտեմբերի 2025թ., 2024թ. Դուստր ընկերություն	Մասնա-բաժին %	Գրանցման երկիր	Գրանցման ամսաթիվ	Գործու-նեության ոլորտ	Հզորութ-յուն (ՄՎտ)	Լիցեն-զիայի ավարտ	Ձեռքբեր-ման ամսաթիվ
«Դաս Էնտերիա Զոլարքաֆթվերք» ՓԲԸ	100	Հայաստան	12 դեկտեմբեր 2017թ.	ֆոտովոլտային արևային էլեկտրական	2	26 հոկտեմբեր 2042թ.	1 հունիս 2022թ.
«Սոլար Ֆարմ» ՍՊԸ	100	Հայաստան	11 մարտ 2019թ.	ֆոտովոլտային արևային էլեկտրական	10	15 օգոստոս 2041թ. և 29 մարտ 2046թ.	4 հոկտեմբեր 2023թ.
«Մոդուլ-Սան» ՍՊԸ	100	Հայաստան	12 սեպտեմբեր 2017թ.	ֆոտովոլտային արևային էլեկտրական	3	28 փետրվար 2042թ.	23 մայիս 2024թ.
«Մեծ Մասրիկ» ՍՊԸ	100	Հայաստան	19 ապրիլ 2019թ.	ֆոտովոլտային արևային էլեկտրական	5	20 հուլիս 2045թ.	23 մայիս 2024թ.
«Սաներջի» ՍՊԸ	100	Հայաստան	22 հունիս 2019թ.	ֆոտովոլտային արևային էլեկտրական	5	13 ապրիլ 2045թ.	1 մայիս 2024թ.

Համապատասխանություն և անընդհատություն

Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Համախմբված ֆինանսական ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքներով, քանի որ ղեկավարությունը կարծում է, որ Խումբն ունի համապատասխան ռեսուրսներ տեսանելի ապագայում անընդհատ գործունեություն իրականացնելու համար: Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել տեղեկատվության լայն շրջանակ, ներառյալ շահութաբերության կանխատեսումը, կապիտալի նկատմամբ իրավական պահանջները և ֆինանսավորման կարիքները: Գնահատումը ներառում է նաև ողջամտորեն հնարավոր անկումային տնտեսական սցենարների և դրանց հնարավոր ազդեցությունների դիտարկումը Խմբի շահութաբերության, կապիտալի և իրացվելիության վրա:

Գործարար միջավայր

2025թ. Հայաստանի գործարար միջավայրը շարունակում է գտնվել աշխարհաքաղաքական լարվածության, տարածաշրջանային անվտանգության ռիսկերի և գլոբալ տնտեսության փոփոխվող պայմանների ազդեցության տակ:

Ընթացիկ տարում տնտեսական ցուցանիշները տարբեր ոլորտներում անհավասար են եղել: Շարունակական աճը հիմնականում ապահովվել է առևտրի, ծառայությունների և շինարարության ոլորտներում՝ արտացոլելով մասնավոր սպառման և ներդրումային ակտիվության կայունությունը: Թեպետ նախկինում որոշակի ենթաճյուղերի կրճատումից կրած ազդեցության՝ արդյունաբերական արտադրությունը վերջին հաշվետու ժամանակաշրջանում ցուցաբերել է կայունություն և չափավոր բարելավում՝ նպաստելով արտադրական որոշակի գործունեության վերականգնմանը:

Ֆինանսական ոլորտը կայուն է մնացել՝ բանկային համակարգի բավարար կապիտալացվածությամբ և բանկային համակարգի պատշաճ վերահսկողությամբ պայմանավորված: Չնայած արտաքին ռիսկերի առկայությանը՝ կարգավորող վերահսկողությունը և վերահսկողական պրակտիկան շարունակաբար ապահովել են ֆինանսական հաստատությունների իրացվելիությունը, վճարունակությունը և

գործառնական կայունությունը: Համաձայն 2025թ. պետական բյուջեի և վերջին արտաքին գնահատումների՝ 2025թ. Հայաստանի տնտեսական աճը կազմել է 5.1%, իսկ 2026թ. կանխատեսվում է 5.4%::

Ղեկավարությունը գնահատել է տնտեսական ընթացիկ միջավայրի ազդեցությունը Խմբի գործունեության վրա և արտացոլել է դա սույն համախմբված ֆինանսական հաշվետվություններում: Սակայն տնտեսական և քաղաքական հետագա իրավիճակը կարող է տարբերվել ներկայիս ակնկալիքներից, և նման տարբերությունները կարող են ազդել Խմբի ֆինանսական վիճակի, արդյունքի և դրամական հոսքերի վրա:

3 Նոր կամ վերանայված ստանդարտներ կամ մեկնաբանություններ

3.1 2025թ. հունվարի 1-ի դրությամբ ընդունված նոր ստանդարտներ

Ընթացիկ տարում Խումբն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2025թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի և ՖՀՄՍ մեկնաբանությունների կոմիտեի կողմից:

ՀՀՄՍ 21 *«Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ»* ստանդարտի փոփոխությունը՝ կապված *«Փոխանակելիության բացակայության»* հետ առաջին անգամ կիրառվել է 2025թ., որը սահմանում է պահանջներ՝ գնահատելու, թե երբ է արժույթը փոխարկելի այլ արժույթի նկատմամբ, և երբ՝ ոչ: Ստանդարտի այս փոփոխության ընդունումը ազդեցություն չի ունեցել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

3.2 Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

- ՖՀՄՍ 18 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»*

  2024թ. ապրիլին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՖՀՄՍ 18 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»* ստանդարտը, որը փոխարինում է ՀՀՄՍ 1 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»* ստանդարտը: Չնայած ՖՀՄՍ 18-ը ներառում է ՀՀՄՍ 1-ի բազմաթիվ պահանջներ, այն ներկայացնում է նոր պահանջներ՝ ֆինանսական հաշվետվությունների կառուցվածքը բարելավելու և ներդրողներին ավելի մանրամասն ու օգտակար տեղեկատվություն տրամադրելու նպատակով, ներառյալ՝

  - շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում երկու նոր ենթագումարի սահմանում՝ գործառնական շահույթ և շահույթ կամ վնաս մինչև ֆինանսավորումը և հարկերը
  - շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում բոլոր եկամուտների և ծախսերի դասակարգում հետևյալ հինգ կատեգորիաներից մեկում՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, հարկեր և ընդհատված գործառնություններ
  - ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափանիշների բացահայտման նոր պահանջ

- ֆինանսական հաշվետվություններում և կից ծանոթագրություններում ներկայացվող տեղեկատվության միավորման և տարանջատման սկզբունքների բարելավում

Նախկինում ՀՀՄՍ 1-ում ներառված որոշ բացահայտման պահանջներ տեղափոխվել են ՀՀՄՍ 8՝ առանց էական փոփոխությունների: Սա հատկապես վերաբերում է հաշվապահական հաշվառման քաղաքականության և գնահատման անորոշության աղբյուրների բացահայտումներին: Այս փոփոխությունների արդյունքում ՀՀՄՍ 8-ը կվերանվանվի *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքներ»*:

Ի հավելումն, ՀՀՄՍ 7 *«Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին»* ստանդարտում կատարվել են սահմանափակ փոփոխություններ, որոնք ներառում են անուղղակի մեթոդով պատրաստված հաշվետվության գործառնական գործունեությունից դրամական հոսքերի որոշման մեկնարկային կետի փոփոխությունը «շահույթ կամ վնասից» «գործառնական շահույթ կամ վնաս» և շահաբաժիններից և տոկոսներից դրամական հոսքերի դասակարգման ընտրանքի վերացումը: Բացի այդ, կան հետևողական փոփոխություններ մի շարք այլ ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներում:

ՖՀՄՍ 18-ը ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար՝ ավելի վաղ կիրառման հնարավորությամբ: ՖՀՄՍ 18-ը կկիրառվի հետընթաց՝ կիրառելով հատուկ անցումային դրույթներ:

Խումբը ներկայումս գնահատում է ՖՀՄՍ 18-ի ազդեցությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների և համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների վրա:

Ղեկավարության գնահատմամբ չի ակնկալվում, որ այլ նոր ստանդարտները, փոփոխությունները և մեկնաբանությունները, որոնք չեն կիրառվել ընթացիկ տարում, էական ազդեցություն կունենան Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *«Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ»* (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ) (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)
- *«Բնությունից կախված էլեկտրաէներգիային հղումով պայմանագրեր»* (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ) (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)
- ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների տարեկան բարեփոխումներ - Հատոր 11 (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)
- ՖՀՄՍ 19 *«Դուստր ձեռնարկություններ առանց հանրային հաշվետվողականության. բացահայտումներ»* (ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական հոդվածներ

4.1 Պատրաստման հիմքերը

Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն ՀՀՄՍԽ կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

4.2 Համախմբման հիմքեր

Խմբի ֆինանսական հաշվետվությունները համախմբում են մայր ընկերության և իր բոլոր դուստր ընկերությունների՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունները: Բոլոր դուստր ընկերությունների հաշվետու ամսաթիվը դեկտեմբերի 31-ն է:

Համախմբման ժամանակ Խմբի ընկերությունների միջև բոլոր գործարքները և մնացորդները բացառվում են, ներառյալ Խմբի ընկերությունների միջև գործարքների արդյունքում չվաստակած օգուտները և չկրած վնասները: Երբ ակտիվի ներխմբային վաճառքից առաջացող չկրած վնասը համախմբման ժամանակ հակադարձվում է, հիմքում ընկած ակտիվը նաև ենթարկվում է արժեզրկվածության գծով ստուգման՝ Խմբի տեսանկյունից: Դուստր ընկերությունների համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարները անհրաժեշտության դեպքում ճշգրտվել են՝ Խմբի կողմից ընդունված հաշվապահական քաղաքականության հետ համապատասխանությունն ապահովելու համար:

Տարվա ընթացքում ձեռք բերած կամ օտարած դուստր ընկերությունների շահույթը կամ վնասը և այլ համապարփակ արդյունքը ճանաչվում են ձեռքբերման ամսաթվից:

4.3 Կլիմային առնչվող հարցեր

Խումբը ճանաչում է կլիմայի առաջացրած ռիսկերն ու հնարավորությունները իր բիզնեսի և հաճախորդների համար: Այս ռիսկերը ներառում են ֆինանսական կորստի սպառնալիքը և անբարենպաստ ոչ ֆինանսական ազդեցությունները, որոնք ներառում են կլիմայի փոփոխության քաղաքական, տնտեսական և բնապահպանական արձագանքները: Խումբը հանձնառու է կառավարել այս ռիսկերը՝ միաժամանակ աջակցելով վերականգնվող էներգիայի համաշխարհային անցմանը:

Խումբը բացահայտել է կլիմայական ռիսկերի երկու հիմնական կատեգորիա՝ ֆիզիկական և անցումային:

Ֆիզիկական ռիսկերն առաջանում են եղանակային կտրուկ փոփոխությունների հետևանքով, ինչպիսիք են փոթորիկները, կարկուտները և անտառային հրդեհները, որոնք կարող են վնասել արևային ենթակառուցվածքները, խանգարել վերջիններիս գործունությանը կամ ավելացնել ապահովագրական ծախսերը, ինչպես նաև կլիմայական պայմանների երկարաժամկետ փոփոխությունների հետևանքով, ինչպիսիք են կայուն բարձր ջերմաստիճանը և երաշտը, որոնք կարող են ազդել արևային վահանակների արդյունավետության վրա:

Անցումային ռիսկերը կարող են առաջանալ զրոյական արտանետումներով տնտեսության անցնելու հետևանքով, ինչպիսիք են կառավարության առաջարկած փոփոխությունները (կանաչ հարկաչափը, պետական սուբսիդավորումները) կամ ավելի խիստ բնապահպանական կարգավորումների հետևանքով, որոնք կարող են ազդել ծրագրերի վրա: Մրցակցող վերականգնվող տեխնոլոգիաների (օրինակ՝ քամու էներգիա, մարտկոցային կուտակիչ) արագ զարգացումը կամ ներդրողների/սպառողների նախասիրությունների փոփոխությունները կարող են փոխել արևային լուծումների պահանջարկը: Բացի այդ, արևային կայանների արագ զարգացումը ամբողջ երկրի տարածքում, ներառյալ ինքնասպառման համար ապակենտրոնացված համակարգերը, կարող է հանգեցնել ազատ շուկայում գերմատակարարման, ինչը կնվազեցնի էլեկտրաէներգիայի գները և խոշոր մասշտաբի արևային նախագծերի շահույթաբերությունը: Այն կարող է նվազեցնել նոր արևային ներդրումների կամ գործող էլեկտրաէներգիայի գնման պայմանագրերի (PPA) տնտեսական կենսունակությունը, մասնավորապես այն տարածաշրջաններում, որտեղ արևային էներգիայի ներթափանցումը բարձր է, իսկ ցանցն ունի սահմանափակ հնարավորություններ:

Հաշվետու տարվա ընթացքում Խումբն ամրապնդեց կլիմայական ռիսկերի կառավարման իր մոտեցումը: Սա ներառում էր կլիմայական ռիսկերի շրջանակի հետագա զարգացումը՝ ավելի մեծ ուշադրություն դարձնելով ռիսկերի հանդուրժողականության մակարդակների սահմանմանը և կլիմայական գործոնների հետ կապված նկատառումները գործող կառավարման և ռիսկերի կառավարման գործընթացներում ներառելուն: Խումբը նաև առաջ մղեց կլիմայական հարցերի ներքին վերահսկողությունը բարելավելու իր ջանքերը, ներառյալ ընկերության քաղաքականությունն ու վերահսկողությունը սատարելու համար համապատասխան կառավարման կառուցվածքների քննարկումը: Զուգահեռաբար, Խումբը բարելավեց տվյալների հավաքագրման և մոնիթորինգի իր գործընթացները՝ կլիմայական ռիսկերն ավելի լավ բացահայտելու, հետևելու և գնահատելու համար՝ ավելի ժամանակին և տեղեկացված որոշումների կայացմանը նպաստելու նպատակով:

Խումբը գիտակցում է, որ կլիմայական ռիսկերը շարունակելու են զարգանալ և հանձնառու է հարմարեցնել իր ռազմավարությունները՝ փոփոխվող միջավայրում բիզնեսը պաշտպանելու և իր հաճախորդներին աջակցելու համար:

4.4 Բիզնեսի միավորումներ և գուդվիլ

Բիզնես միավորումների հաշվառման ժամանակ Խումբը կիրառում է գնման մեթոդը: Դուստր ընկերության նկատմամբ վերահսկողություն ձեռք բերելու համար փոխանցված հատուցումը հաշվառվում է որպես փոխանցված ակտիվների, առաջացած պարտավորությունների և Խմբի թողարկած սեփական կապիտալի բաժնեմասերի՝ ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրական արժեքների հանրագումար, որը ներառում է պայմանական հատուցման համաձայնությունից առաջացող ցանկացած ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը: Ձեռք բերման ծախսերը ծախսագրվում են տեղի ունենալուն զուգընթաց:

Ձեռք բերված ակտիվները և ստանձնած պարտավորությունները սովորաբար չափվում են ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրենց իրական արժեքով:

Գուդվիլն առաջանում է բիզնես միավորումների արդյունքում և ներկայացնում է ձեռքբերված որոշելի ակտիվների, ստանձնած պարտավորությունների ու պայմանական պարտավորությունների ձեռքբերման արժեքի ավելցուկը Խմբի բաժնեմասի իրական արժեքի նկատմամբ: Գուդվիլը ճանաչվում է որպես ակտիվ՝ սկզբնական արժեքով և բաշխվում է դրամաստեղծ միավորին՝ հիմնվելով յուրաքանչյուր դրամաստեղծ միավորի կամ դրամաստեղծ միավորների խմբի վրա, որոնք, ըստ ակնկալության, օգուտներ կստանան ձեռքբերման սիներգիզմներից:

Սկզբնական ճանաչումից հետո գուդվիլը ենթարկվում է արժեզրկման ստուգմանը տարեկան գոնե մեկ անգամ, կամ երբ հանգամանքները կամ իրադարձությունները վկայում են, որ այս արժեքի մասով կարող է անորոշություն լինել: Գուդվիլի գծով արժեզրկումը գնահատվում է դրամաստեղծ միավորի մակարդակում: Դրամաստեղծ միավորը գուդվիլի պարագայում այն նվազագույն մակարդակն է, որում գուդվիլը մոնիտորինգի է ենթարկվում ներքին կառավարման նպատակով: Այն դեպքում, երբ արժեզրկումը բացահայտված է, գուդվիլի հաշվեկշռային արժեքն անմիջապես գրանցվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և հետագայում չի հակադարձվում:

4.5 Արժույթ

Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (ՀՀ դրամ), որն էլ հանդիսանում է Խմբի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել կիրառելի է Խմբի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: ՀՀ դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

Արտարժույթով գործարքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը.

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	381.36	396.56

Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

4.6 Հասույթ

Հաճախորդների հետ կնքված պայմանագրերին վերաբերող Խմբի հաշվապահական քաղաքականության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 6-ում:

4.7 Ոչ նյութական ակտիվներ

Բիզնեսի միավորման արդյունքում ձեռք բերված ոչ նյութական ակտիվների արժեքը ձեռքբերման օրվա դրությամբ ներկայացված են իրական արժեքով: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները ներկայացվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Բիզնեսի միավորման արդյունքում ձեռք բերված ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետը գնահատվել է ձեռքբերման պահին և հիմնված է լիցենզիայի ժամկետի վրա (տե՛ս Ծանոթագրություն 5), որը միջինում կազմում է 20 տարի:

4.8 Հիմնական միջոցներ

Խմբի հողերը, շենքերը և շինությունները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկման կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Արևային կայաններ (ֆոտովոլտային վահանակներ)	-	35 տարի
Սարքավորումներ, տնտեսական գույք	-	5 տարի
Շենքեր	-	20 տարի:

Քանի որ հողի համար հնարավոր չէ որոշել վերջավոր օգտակար ծառայության ժամկետ, համապատասխան հաշվեկշռային արժեքը չի ամորտիզացվում:

4.9 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ հաշվի առած գործարքի հետ կապված ծախսումները (որտեղ կիրառելի է), բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով չափվող,
- իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Խմբի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ փոխարժեքային տարբերությունից օգուտում կամ վնասում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որն արտացոլված է այլ ծախսերում: Խմբի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են Ծանոթագրություն 12-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունն աննշան է, զեղչում չի կատարվում: Խմբի դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային և այլ դեբիտորական պարտքերի մեծ մասը դասվում են ֆինանսական գործիքների այս կատեգորիայի մեջ:

Ֆինանսական ակտիվներ՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են «հավաքագրման համար պահվող» կամ «հավաքագրման և վաճառքի համար պահվող» բիզնես մոդելներից տարբեր մոդելի շրջանակներում, դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Հետագայում, անկախ բիզնես մոդելից, բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց պայմանագրային դրամական հոսքերը չեն հանդիսանում միայն մայր գումարի և հաշվարկված տոկոսի մարում, հաշվառվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները դասակարգվում են այս կատեգորիայում, բացառությամբ հեջավորման գործիքների, որոնց համար գործում են հեջավորման հաշվառմանը ներկայացվող պահանջները:

Այս կատեգորիայում դասակարգված ակտիվները չափվում են իրական արժեքով՝ օգուտը կամ կորուստները ճանաչելով շահույթում կամ վնասում: Այս կատեգորիայում դասակարգված ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշվում է գործող շուկայի գործարքներին հղում կատարելով կամ, այն պարագայում, երբ առկա չէ գործող շուկա՝ կիրառելով գնահատման մեթոդ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված վարկերը և փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով առևտրային դեբիտորական պարտքերը, պայմանագրային ակտիվները որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն և վարկային պարտավորությունները և որոշ ֆինանսական երաշխավորության պայմանագրերը (թողարկողի համար), որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթում կամ վնասի միջոցով:

Խումբը դիտարկում է ավելի ընդլայնված տեղեկատվություն ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Ապագայամետ գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ն ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար:

Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Խումբը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը՝ օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Խումբն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Խումբը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից: ՖՀՄՍ 9-ի՝ արժեզրկմանը ներկայացվող պահանջների կիրառման մանրամասն վերլուծությունն արտացոլված է Ծանոթագրություն 20-ում:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Խմբի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են Ծանոթագրություն 12-ում:

Բանկային վարկեր

Բանկային վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ հանած փոխառության հետ կապված գործարքային ծախսերը: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառությունը ստացվել է սեփականատերերից: Այս դեպքում իրական և նոմինալ արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում

ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

4.10 Շահութահարկ

Ընթացիկ հարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են դուստր ընկերություններում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների ու համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, որտեղ Խումբն ի վիճակի է վերահսկելու ժամանակավոր տարբերության հակադարձումը, և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում: Նմանատիպ ներդրումների և մասնակցությունների հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերություններից առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է հարկվող շահույթի առկա լինելը, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը, և որը կմարվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Խումբը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Խումբը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն

հարկային մարմնի կողմից, և Խումբը մտադիր է զուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

4.11 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Խումբը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

4.12 Սեփական կապիտալ և պահուստներ

Խմբի կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Բաժնետիրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի նոմինալ արժեքը:

Էմիսիոն եկամուտը ներառում է բաժնետոմսերի թողարկումից ստացված ցանկացած հավելավճար: Գործարքի գծով ցանկացած ծախսում, որը կապված է բաժնեմասերի թողարկման հետ, նվազեցվում է էմիսիոն եկամտից շահութահարկի գծով եկամուտը հանելուց հետո:

Լրացուցիչ կապիտալը ներառում է բաժնետերերի ներդրումների ավելցուկը թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքի և վճարված, բայց չգրանցված կապիտալի նկատմամբ:

Կուտակված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

4.13 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարության կատարած նշանակալի դատողություններ և գնահատման անորոշություն

ՖՀՄՍ-ներին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

4.13.1 Գնահատման անորոշություն

Խումբն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների

փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

Բիզնես միավորումների միջոցով ձեռք բերված ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը

Ձեռքբերման պահին, դուստր ընկերության ակտիվները, պարտավորությունները և պայմանական պարտավորությունները չափվում են ձեռքբերման օրվա դրությամբ իրենց իրական արժեքներով: Ձեռք բերված ակտիվների և ստանձնած պարտավորությունների իրական արժեքի որոշումը պահանջում է մասնագիտական դատողություն, ինչի համար ղեկավարությունը կարող է ներգրավել անկախ գնահատող փորձագետների: Լրացուցիչ տեղեկատվության համար տե՛ս Ծանոթագրություն 5:

4.13.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված նշանակալի դատողություններ

Ստորև ներկայացված են ղեկավարության՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված դատողությունները, որոնք ամենաէական ազդեցությունն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը

Այն չափը, որով կարող է ճանաչվել հետաձգված հարկային ակտիվ, կախված է այն հավանականության գնահատումից, թե արդյոք ապագայում հասանելի կլինի եկամուտ, որի դիմաց կիրացվեն նվազեցման ենթակա ժամանակավոր տարբերությունները և նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասը: Ի լրումն, անհրաժեշտ է էական դատողություն հարկային միջավայրում իրավական և տնտեսական սահմանափակումների և անորոշությունների գնահատման ժամանակ:

5 Դուստր ընկերությունների ձեռքբերումներ

Ձեռքբերված դուստր ընկերություններ	Հիմնական գործունեություն	Ձեռքբերման ամսաթիվ	Ձեռքբերված բաժնեմաս	Ձեռքբերման ծախսեր
2024թ.				
«Սաներջի» ՍՊԸ	ֆոտովոլտային արևային էլեկտրակայան	1 մայիս	100.0%	204,538
«Մոդուլ-Սան» ՍՊԸ և «Մեծ Մասրիկ» ՍՊԸ	ֆոտովոլտային արևային էլեկտրակայան	23 մայիս	100.0%	308,863
Ընդամենը				**513,401**

Ձեռքբերման օրվա դրությամբ ճանաչելի ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ու իրական արժեքները բերված են ստորև.

	«Սաներջի» ՍՊԸ		«Մոդուլ-Սան» ՍՊԸ և «Մեծ Մասրիկ» ՍՊԸ		Ընդհանուր իրական արժեքը ձեռքբերման պահին 2024թ.
	Հաշվեկշռային արժեք	Ձեռքբերման իրական արժեք	Հաշվեկշռային արժեք	Ձեռքբերման իրական արժեք	
Ակտիվներ	**75,856**	**232,785**	**1,010,886**	**1,154,311**	**1,387,096**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	17,448	17,448	28,096	28,096	
Առևտրային և	-	-	35,113	35,113	

	«Սաներջի» ՍՊԸ		«Մոդուլ-Սան» ՍՊԸ և «Մեծ Մասրիկ» ՍՊԸ		Ընդհանուր իրական արժեքը ձեռքբերման պահին 2024թ.
	Հաշվեկշռային արժեք	Ձեռքբերման իրական արժեք	Հաշվեկշռային արժեք	Ձեռքբերման իրական արժեք	
դեբիտորական պարտքեր					
Հետաձգված հարկային ակտիվներ	-	-	76	76	
Հիմնական միջոցներ	58,408	215,337	935,351	935,351	
Ոչ նյութական ակտիվներ	-	-	-	143,425	
Այլ	-	-	12,250	12,250	
Պարտավորություններ	**-**	**28,247**	**819,631**	**845,448**	**873,695**
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	-	-	21,214	21,214	
Այլ	-	-	2,744	2,744	
Ստացված կանխավճարներ	-	-	14,662	14,662	
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	28,247	18,149	43,966	
Բանկային վարկեր	-	-	762,862	762,862	
Ընդամենը, զուտ	**75,856**	**204,538**	**191,255**	**308,863**	**513,401**
Ձեռքբերումից առաջացած գուդվիլ	-	-	-	-	-
Ձեռքբերման գին		**204,538**		**308,863**	

Մինչև ձեռքբերումը գործող դուստր ձեռնարկությունների համար («Սոլար Ֆարմ» ՍՊԸ, «Մոդուլ-Սան» ՍՊԸ և «Մեծ Մասրիկ» ՍՊԸ), լիցենզիայի իրական արժեքը որոշվել է զեղչված դրամական հոսքի (DCF) մոդելի կիրառմամբ: Ակտիվների իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում (տե՛ս Ծանոթագրություն 21): Զուտ ակտիվների իրական արժեքի և ձեռքբերման գնի միջև դրական տարբերությունը վերագրվում է գուդվիլին:

Ձեռքբերման պահին չգործող դուստր ձեռնարկությունների համար («Դաս Էնտերիա Զոլարքաֆթվերք» ՓԲԸ, «Սաներջի» ՍՊԸ), DCF մոդելի արդյունքում ստացված դրական տարբերությունը վերագրվել է հիմնական միջոցների՝ հողի, սկզբնական արժեքին: Ակտիվների իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում (տե՛ս Ծանոթագրություն 21):

Դեբիտորական պարտքերի իրական արժեքը հավասար էր դրանց հաշվեկշռային արժեքին, քանի որ դեբիտորական պարտքերից ոչ մեկը չի արժեզրկվել, և ակնկալվում է, որ պայմանագրով նախատեսված գումարները կհավաքագրվեն:

Հետաձգված հարկային պարտավորությունը հիմնականում ներառում է նյութական և ոչ նյութական ակտիվների մաշվածության և ամորտիզացիայի հարկային ազդեցությունը:

Հետաձգված հարկային ակտիվը հիմնականում բաղկացած է հաջորդ տարում փոխանցվող հարկային վնասների չմարված գումարից:

Ձեռքբերումից առաջացած զուտ դրամական հոսքը ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

	2025թ.	2024թ.
Դրամական միջոցներով և դրանց համարժեքներով կատարված հատուցում	-	(513,401)
Ձեռք բերված դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	45,544
Ընդամենը դրամական հոսք	-	**(467,857)**

6 Հասույթ

	2025թ.			2024թ.		
	Արտադրություն ՄՎտժ	Հասույթ	Միջինում 1 կՎտժ	Արտադրություն ՄՎտժ	Հասույթ	Միջինում 1 կՎտժ
Սոլիս ՓԲԸ	7,492	154,339	20.6	7,342	152,967	20.8
Դաս Էնտերիա Զոլարքաֆթվերք ՓԲԸ	3,540	72,932	20.6	3,295	68,668	20.8
Սոլար Ֆարմ ՍՊԸ	19,445	423,262	21.8	9,220	192,058	20.8
Մոդուլ-Սան ՍՊԸ	6,006	124,182	20.7	3,538	73,729	20.8
«Սաներջի» ՍՊԸ	5,260	103,189	19.6	-	-	-
Ընդամենը	**41,743**	**877,904**	**21.0**	**23,395**	**487,422**	**20.8**

Հասույթը չափվում է հաշվի առնելով հաճախորդների հետ կնքված պայմանագրում նշված հատուցման գինը: Հաշվետու տարում Խումբն ունեցել է 3 հաճախորդ՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն, Էկովիլ Էներջի ՍՊԸ, Էներջի Սփփլայ ՍՊԸ (2024թ.՝ 1 հաճախորդ՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն):

2025թ. հունվարին շահագործման հանձնվեց «Սոլար Ֆարմ» ՍՊԸ-ի երկրորդ 5 ՄՎտ հզորությամբ կայանը, իսկ 2025 թվականի հունիսին «Սաներջի» ՍՊԸ 5-ի ՄՎտ հզորությամբ կայանը , որի արդյունքում եկամուտն աճել է 2024թ.-ի համեմատ:

Խումբը ճանաչում է հասույթն այն պահին, երբ ապրանքի կամ ծառայության նկատմամբ վերահսկողությունը փոխանցվում է հաճախորդին: Հետևյալ աղյուսակում ներկայացված է հաճախորդների հետ կնքված պայմանագրերով կատարողական պարտավորությունների կատարման բնույթը և ժամկետները, ներառյալ վճարման էական պայմանները և հասույթի ճանաչման քաղաքականությունները:

Ապրանքի/ծառայության տեսակ	Կատարողական պարտավորությունների կատարման բնույթը և ժամկետները, ներառյալ վճարման էական պայմանները	Հասույթի ճանաչումը համաձայն ՖՀՄՍ 15-ի
Էլեկտրաէներգիայի վաճառք	Էլեկտրաէներգիայի վաճառքի պայմանագրից ստացված հասույթը ճանաչվում է էլեկտրաէներգիան հաճախորդին մատակարարելու պահին: Մատակարարված էլեկտրաէներգիայի հաշիվ-ապրանքագրերը տրամադրվում են ամսական կտրվածքով և սովորաբար ենթակա են վճարման 30 օրվա ընթացքում:	Հաճախորդները միաժամանակ ստանում և սպառում են էլեկտրաէներգիան տրամադրվելու պահին: Խումբը ժամանակի ընթացքում փոխանցում է ծառայության վերահսկողությունը, հետևաբար բավարարում է կատարման պարտավորությունը և ճանաչում հասույթը ժամանակի ընթացքում: Փոփոխական հատուցումը, որը ներկայացնում է սպառված էլեկտրաէներգիան բազմապատկած գործող սակագներով, չափվում է յուրաքանչյուր օրացուցային ամսվա վերջում հաշվիչ սարքերից վերցված տվյալների հիման վրա:

7 Ֆինանսական եկամուտ և ծախսեր

	2025թ.	2024թ.
Բանկային վարկերից տոկոսային ծախսեր	(302,496)	(229,819)
Ընդամենը ֆինանսական ծախսեր	**(302,496)**	**(229,819)**
Կարճաժամկետ բանկային վարկերից տոկոսային եկամուտ	3,476	1,956
Բանկային հաշիվներից տոկոսային եկամուտ	285	632
Ընդամենը ֆինանսական եկամուտ	**3,761**	**2,588**
Զուտ ֆինանսական ծախսեր	**(298,735)**	**(227,231)**

ՀՀ պետական բյուջեի հաշվին սուբսիդավորվել է ֆինանսական ծախս՝ 33,277 ՀՀ դրամ (2024թ.՝ զրո), որը ճանաչվել է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում՝ որպես «Այլ եկամուտ»:

8 Շահութահարկի գծով ծախս

	2025թ.	2024թ.
Ընթացիկ հարկ	(4,568)	-
Հետաձգված հարկ (տե՛ս Ծանոթագրություն 13)	(46,336)	(8,575)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**(50,904)**	**(8,575)**

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

	2025թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2024թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների)	344,267		35,406	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2024թ.՝ 18%)	(61,968)	(18.0)	(6,373)	(18.0)
Կուտակված հարկային վնասների զուտ ավելացում	(15,736)	(4.6)	33,441	94.5
(Չհարկվող եկամուտ) չնվազեցվող ծախսեր, զուտ	9,754	2.8	(36,326)	(102.6)
Ընթացիկ տարում ճանաչված՝ նախորդ տարիների ընթացիկ հարկին վերաբերող ճշգրտումներ	(1,748)	(0.5)	(7,962)	(22.5)
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ	18,794	5.5	8,645	24.4
Շահութահարկի գծով ծախս	**(50,904)**	(14.8)	**(8,575)**	(24.2)

9 Ոչ նյութական ակտիվներ

	Լիցենզիաներ	Ընդամենը
Սկզբնական արժեք		
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	**179,280**	**179,280**
Ավելացում	143,425	**143,425**
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**322,705**	**322,705**
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**322,705**	**322,705**
Կուտակված ամորտիզացիա		
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	**(1,608)**	**(1,608)**
Տարվա հաշվարկ	(13,462)	**(13,462)**
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(15,070)**	**(15,070)**
Տարվա հաշվարկ	(16,285)	**(16,285)**
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(31,355)**	**(31,355)**
Հաշվեկշռային արժեք		
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**307,635**	**307,635**
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**291,350**	**291,350**

Ոչ նյութական ակտիվները ներառում են բիզնես միավորման արդյունքում ձեռք բերված լիցենզիաները, որոնք ճանաչվել են «Ոչ նյութական ակտիվներ» ՀՀՄՍ 38-ի համաձայն: Լիցենզիաների իրական արժեքը որոշվել է զեղչված դրամական հոսքերի մոդելի հիման վրա: 16,285 հազար ՀՀ դրամ (2024թ.՝ 13,462 հազար ՀՀ դրամ) ամորտիզացիան ներկայացված է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում:

10 Հիմնական միջոցներ

	Հող	Կայան	Կահույք և պարագաներ	Անավարտ շինարա-ություն	Ընդամենը
Սկզբնական արժեք					
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	**340,645**	**3,170,158**	**56,839**	**12,727**	**3,580,369**
Դուստր ձեռնարկությունների ձեռքբերում	227,991	922,697	-	-	1,150,688
Ավելացում	3,650	348,254	3,499	1,561,984	1,917,387
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**572,286**	**4,441,109**	**60,338**	**1,574,711**	**6,648,444**
Ավելացում	-	-	20,106	1,113,943	1,134,049
Ներքին շարժ	-	1,819,440	-	(1,819,440)	-
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**572,286**	**6,260,549**	**80,444**	**869,214**	**7,782,493**
Կուտակված մաշվածություն և արժեզրկում					
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	-	**(92,518)**	**(1,791)**	-	**(94,309)**
Տարվա հաշվարկ	-	(116,694)	(7,977)	-	(124,671)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	**(209,212)**	**(9,768)**	-	**(218,980)**
Տարվա հաշվարկ	-	(170,220)	(8,846)	-	(179,066)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	**(379,432)**	**(18,614)**	-	**(398,046)**
Հաշվեկշռային արժեք					
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**572,286**	**4,231,897**	**50,570**	**1,574,711**	**6,429,464**
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**572,286**	**5,881,117**	**61,830**	**869,214**	**7,384,447**

Բանկային վարկերն ապահովելու նպատակով Խումբը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրավադրել է 7,384,447 հազար ՀՀ դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 6,429,464 հազար ՀՀ դրամ) հաշվեկշռային արժեք ունեցող հիմնական միջոցներ:

2025թ. ընթացքում անավարտ շինարարության համար կապիտալացվել է 41,220 հազար ՀՀ դրամ վարկային ծախսեր, որից 21,461 հազար ՀՀ դրամը (2024թ. 14,373 հազար ՀՀ դրամ) սուբսիդավորվել է:

ՀՀ կառավարության կողմից տրամադրված դրամաշնորհների շարժը ներկայացված է ստորև՝

	Դրամաշնորհ
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	-
Ավելացում	16,367
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**16,367**
Հիմնական միջոցների կապիտալացման ավելացում	21,461
Ֆինանսական ծախսի սուբսիդավորում	33,277
Եկամտի ճանաչում	(33,826)
Այլ	1,365
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**38,644**

11 Գուդվիլ

Խումբը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրականացրել է գուդվիլի արժեզրկման տարեկան ստուգում և եզրակացրել, որ համապատասխան դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը գերազանցում է դրա հաշվեկշռային արժեքը և հետևաբար առկա չէ արժեզրկման որևէ ցուցիչ, որը կպահանջեր արժեզրկման վերլուծության վերագնահատում:

12 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

12.1 Բանկային վարկեր

	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ապահովված բանկային վարկեր	367,511	418,056	4,340,661	3,785,279
Ընդամենը բանկային վարկեր	**367,511**	**418,056**	**4,340,661**	**3,785,279**

Այս ծանոթագրությունը տեղեկատվություն է տրամադրում բանկերից ստացված տոկոսային ժամկետային վարկերի պայմանագրերով սահմված պայմանների մասին, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով: Խմբի տոկոսադրույքի, արտարժույթի և իրացվելիության ռիսկի նկատմամբ ազդեցությունը ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Ծանոթագրություն 20-ում:

Խումբ			2025		2024	
	Արժույթ	Ժամկետ	Ընթացիկ մաս	Ոչ ընթացիկ մաս	Current portion	Non-current portion
Սոլիս ՓԲԸ	ԱՄՆ դոլար	4/8/2033թ.	28,684	248,398	3,109	312,201
Սոլիս ՓԲԸ	ԱՄՆ դոլար	2/8/2033թ.	37,222	231,467	38,511	279,573
Սոլիս ՓԲԸ	ԱՄՆ դոլար	5/6/2033թ.	3,005	18,936	25,939	-
Սոլար Ֆարմ ՍՊԸ	ՀՀ դրամ	12/20/2039թ.	30,615	569,757	20,238	604,105
Սոլար Ֆարմ ՍՊԸ	ՀՀ դրամ	12/15/2034թ.	76,286	838,460	137,128	847,828

Խումբ			2025		2024	
	Արժույթ	Ժամկետ	Ընթացիկ մաս	Ոչ ընթացիկ մաս	Current portion	Non-current portion
Սոլար Ֆարմ ՍՊԸ	ԱՄՆ դոլար	4/18/2034 թ.	23,756	242,587	30,731	267,484
Սոլար Ֆարմ ՍՊԸ	ԱՄՆ դոլար	10/20/2034թ.	3,334	37,425	11,279	71,555
Սոլար Ֆարմ ՍՊԸ	ԱՄՆ դոլար	10/20/2034թ.	11,029	123,805	10,483	136,654
Դաս Էնտերիա Զոլարքաֆթվերք» ՓԲԸ	ԱՄՆ դոլար	7/7/2034թ.	8,916	179,796	33,212	187,488
Դաս Էնտերիա Զոլարքաֆթվերք» ՓԲԸ	ԱՄՆ դոլար	7/26/2034թ.	14,821	158,908	29,136	165,614
Մոդուլ-Սան ՍՊԸ	ԱՄՆ դոլար	11/24/2033թ.	4,509	30,939	4,651	36,866
Մոդուլ-Սան ՍՊԸ	ԱՄՆ դոլար	12/16/2033թ.	4,131	28,687	4,262	34,131
Մոդուլ-Սան ՍՊԸ	ԱՄՆ դոլար	3/17/2033թ.	2,358	16,952	2,431	20,083
Մոդուլ-Սան ՍՊԸ	ԱՄՆ դոլար	11/22/2033թ.	6,383	43,802	6,585	52,192
Մոդուլ-Սան ՍՊԸ	ԱՄՆ դոլար	10/21/2033թ.	32,214	218,403	33,235	260,639
Մոդուլ-Սան ՍՊԸ	ԱՄՆ դոլար	3/2/2034թ.	1,696	12,058	1,750	14,303
Սաներջի ՍՊԸ	ԱՄՆ դոլար	9/10/2036թ.	2,518	35,473	1,694	39,447
Սաներջի ՍՊԸ	ԱՄՆ դոլար	9/10/2036թ.	20,504	217,319	14,553	242,566
Սաներջի ՍՊԸ	ԱՄՆ դոլար	9/10/2036թ.	19,732	278,000	9,129	212,550
Սաներջի ՍՊԸ	ՀՀ դրամ	9/10/2036թ.	8,440	139,002	-	-
Մեծ Մասրիկ ՍՊԸ	ԱՄՆ դոլար	3/17/2035թ.	3,146	272,191	-	-
Մեծ Մասրիկ ՍՊԸ	ԱՄՆ դոլար	9/25/2036թ.	15,512	240,351	-	-
Մեծ Մասրիկ ՍՊԸ	ՀՀ դրամ	9/25/2036թ.	5,829	113,470	-	-
Մեծ Մասրիկ ՍՊԸ	ԱՄՆ դոլար	9/25/2036թ.	2,871	44,475	-	-
Ընդամենը			**367,511**	**4,340,661**	**418,056**	**3,785,279**

Բանկային վարկերը ապահովված են Խմբի ընկերությունների բաժնետոմսերի 100%-ով և Խմբի հիմնական միջոցներով (տե՛ս Ծանոթագրություն 10):

12.2 Այլ ֆինանսական գործիքներ

Հետևյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները համարվում են իրական արժեքի ողջամիտ գնահատական.

- առևտրային և այլ դեբիտորական պարտքեր
- դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, և
- առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր:

13 Հետաձգված հարկեր

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	1 հունվարի 2025թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2025թ.
Հարկային վնասի փոխանցում հաջորդ ժամանակաշրջան	81,508	(15,736)	65,772
Հիմնական միջոցներ	(162,552)	(34,844)	(197,396)
Ոչ նյութական ակտիվներ	(55,375)	2,931	(52,444)
Այլ	3,326	1,313	4,639
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ (պարտավորություններ)	**(133,093)**	**(46,336)**	**(179,429)**
Վերագրելի է՝			
Հետաձգված հարկային ակտիվներ՝	1,469	-	1,682
Հետաձգված հարկային պարտավորություններ՝	(134,562)	-	(181,111)

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	1 հունվարի 2024թ.	Դուստր ընկերու-թյունների ձեռքբերում	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2024թ.
Հարկային վնասի փոխանցում հաջորդ ժամանակաշրջան	47,595	472	33,441	81,508
Հիմնական միջոցներ	(70,968)	(46,792)	(44,792)	(162,552)
Ոչ նյութական ակտիվներ	(31,981)	(25,817)	2,423	(55,375)
Այլ	2,973	-	353	3,326
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ (պարտավորություններ)	**(52,381)**	**(72,137)**	**(8,575)**	**(133,093)**
Վերագրելի է՝				
Հետաձգված հարկային ակտիվներ՝	1,218			1,469
Հետաձգված հարկային պարտավորություններ՝	(53,599)			(134,562)

14 Կանխավճարներ և դեբիտորական պարտքեր

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դեբիտորական պարտքերը կազմում են 29,465 հազար ՀՀ դրամ (2024թ.՝ 44,786 հազար ՀՀ դրամ), որն առաջացել է«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին

վաճառված էլեկտրաէներգիայից, «Էկովիլ Էներջի» ՍՊԸ-ից՝ 28,443 հազար դրամ (2024թ.՝ զրո), «Էներջի Սփփլայ» ՍՊԸ-ից՝ 13,706 հազար դրամ (2024թ.՝ զրո):

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ ընթացիկ կանխավճարները ներառում են արևային կայանի կառուցման և ֆոտովոլտային վահանակների ձեռքբերման համար կապալառուներին տրված կանխավճարները՝ 113,996 հազար ՀՀ դրամ-ի չափով (2024թ.՝ 404,777 հազար ՀՀ դրամ):

2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կանխավճարները և դեբիտորական պարտքերը ժամկետանց կամ արժեզրկված չեն համարվում:

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի ողջամիտ գնահատական:

Էլեկտրաէներգիայի վաճառքի միջին վարկային ժամանակահատվածը 30 օր է (2024թ.՝ 30 օր): Առևտրային դեբիտորական պարտքերի համար տոկոսներ չեն գանձվում:

Խմբի բոլոր առևտրային և այլ դեբիտորական պարտքերը համեմատական ժամանակաշրջաններում վերանայվել են արժեզրկման ցուցանիշների համար: Արժեզրկման ցուցանիշներ չեն բացահայտվել:

Վարկային ռիսկի ազդեցությունը ներկայացված է Ծանոթագրություն 20-ում:

15 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները դրամարկղում ու բանկերում և մինչև 3 ամիս մարման ժամկետ ունեցող կարճաժամկետ ներդրումները:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ, դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են՝

	31 դեկտեմբերի 2025թ.	**31 դեկտեմբերի 2024թ.**
Կանխիկ միջոցներ դրամով	475,813	75,721
Ավանդներ դրամով	93,558	27,916
Կանխիկ միջոցներ եվրոյով	957	-
Կանխիկ միջոցներ ԱՄՆ դոլարով	57	230,072
Կանխիկ միջոցներ ռուբլիով	-	126
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**570,385**	**333,835**

16 Սեփական կապիտալ

16.1 Բաժնետիրական կապիտալ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի բաժնետիրական կապիտալը բաղկացած է 1,995,913 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով 1 բաժնետոմսից (2024թ.՝ 1 բաժնետոմս՝ 300,001 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով):

16.2 Էմիսիոն եկամուտ և լրացուցիչ կապիտալ

Ընկերության սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կարգավիճակից փակ բաժնետիրական ընկերության կարգավիճակին անցնելուց հետո, էմիսիոն եկամուտը ներկայացվում է որպես սեփական կապիտալի առանձին բաղադրիչ:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, 1,125,188 հազար դրամի չափով էմիսիոն եկամուտը բաժնետիրոջ ներդրման ավելցուկն է բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամբ (2024թ. դեկտեմբերի 31-ին՝ 1,125,188 հազար դրամ, «Լրացուցիչ կապիտալ» բաժնում):

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ լրացուցիչ կապիտալը ներառում է վճարված, բայց չգրանցված կապիտալ՝ 39,675 հազար դրամի չափով (2024թ. դրությամբ՝ 1,695,912 հազար դրամ):

17 Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրում

Խմբի պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

	Բանկային վարկեր
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	**2,890,677**
Դրամային հոսքերից	
Ստացված գումար	1,032,424
Մարումներ	(426,613)
Վճարված տոկոսներ	(229,819)
Ոչ դրամային հոսքերից	
Դուստ ընկերության ձեռքբերում	762,862
Տոկոսի հաշվեգրում	229,819
Փոխարժեքային տարբերությունից վնաս	(58,709)
Այլ	2,694
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,203,335**
Դրամային հոսքերից	
Ստացված գումար	1,291,429
Մարումներ	(964,711)
Վճարված տոկոսներ	(263,023)
Ոչ դրամային հոսքերից	
Ստացված գումար	276,876
Տոկոսի հաշվեգրում	302,496
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	(102,596)
Այլ	(35,634)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,708,172**

«Այլ» տողը ներառում է բանկային վարկերի տոկոսների և կուտակված, բայց դեռևս չվճարված տոկոսների ազդեցության վերաբերյալ կառավարության սուբսիդիաները:

18 Կապակցված կողմեր

Խմբի կապակցված կողմերը ներառում են մայր ընկերությունը և ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերությունները, ինչպես նաև հիմնական ղեկավար անձնակազմը, ինչպես նկարագրված է ստորև:

18.1 Վերահսկողություն

Խմբի միակ բաժնետերը և վերջնական վերահսկողը ԵՄ-Հայաստան ՓՄՁ հիմնադրամն է:

18.2 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

Գործարքներ

	2025թ.	2024թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ	21,320	25,630

18.3 Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Խմբի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Գործարքներ

	2025թ.	2024թ.
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Ապրանքների վաճառք	24,196	274
Ծառայությունների մատուցում	1,207,351	1,487,790
Հիմնական միջոցների վաճառք	24,000	-
Ծառայությունների ձեռքբերում	230,123	-
	1,485,670	**1,488,064**

Մնացորդներ

	2025թ.	2024թ.
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	3,940	203,134
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	(142,434)	-
	(138,494)	**203,134**

19 Պայմանականություններ

19.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Խումբը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Խմբի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Խումբը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

19.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

19.3 Դատական գործընթացներ

Ղեկավարության կարծիքով, ներկայումս չկան դատական գործընթացներ կամ չլուծված պահանջներ, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության կամ ֆինանսական վիճակի վրա:

19.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարութունը համոզված է, որ Խումբը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Խումբը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանություններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

20 Ֆինանսական գործիքների ռիսկ

Ռիսկի կառավարման քաղաքականությունները և նպատակները

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Խումբը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

20.1 Շուկայական ռիսկի վերլուծություն

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Խումբը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, տոկոսադրույքային ռիսկի և սեփական կապիտալի գների, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժույթի ռիսկ

Խումբը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Խմբի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Խմբի՝ արտերկրյա վաճառքներից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով: Խումբն ունի ԱՄՆ դոլարով վարկեր:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Խմբի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 10% (2024թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2024թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2024թ.՝ 10%):

Դրամի արժևորումն ԱՄՆ դոլարի 10%-ով (2024թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը.

	ԱՄՆ դոլարի ազդեցություն	
	2025թ.	2024թ.
Շահույթ կամ վնաս	397,882	236,412

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Խմբի՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

Տոկոսադրույքային ռիսկ

Հաստատուն տոկոսադրույքով գործիքների իրական արժեքի զգայունության վերլուծություն

Խումբը հաստատուն տոկոսադրույքով որևէ ֆինանսական գործիք չի դասակարգում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով: Հետևաբար, հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների փոփոխությունը որևէ ազդեցություն չի ունենա շահույթի կամ վնասի, ինչպես նաև սեփական կապիտալի վրա:

Փոփոխական տոկոսադրույքով գործիքների դրամական հոսքերի զգայունության վերլուծություն

Հաշվետվու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների 100 բազիսային միավորի ողջամիտ փոփոխությունը կավելացներ (կնվազեցներ) շահույթը կամ վնասը հարկերից զուտ՝ ստորև նշված գումարների չափով: Այս վերլուծությունը ենթադրում է, որ մնացած բոլոր փոփոխականները, մասնավորապես՝ արտարժույթի փոխարժեքները, մնում են անփոփոխ:

	2025թ.	2024թ.
100 բազիսային միավորի աճ	18,740	5,354
100 բազիսային միավորի նվազում	(18,740)	(5,354)

20.2 Իրացվելիության ռիսկի վերլուծություն

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Խումբը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Խմբի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Խումբը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2025թ.	Բանկային վարկեր	Կրեդիտորական պարտքեր	Այլ պարտավորություններ	Ընդամենը
Ըստ պահանջի և մինչև 2 ամից	116,428	6,152	125,427	248,007
2 ամսից մինչև 12 ամիս	589,307	-	-	589,307
12 ամսից մինչև 2 տարի	710,047	-	-	710,047
2 տարուց մինչև 5 տարի	3,497,732	-	-	3,497,732
Ավելի քան 5 տարի	1,686,874	-	-	1,686,874
	6,600,388	**6,152**	**125,427**	**6,731,967**

2024թ.	Բանկային վարկեր	Կրեդիտորական պարտքեր	Այլ պարտավորություններ	Ընդամենը
Ըստ պահանջի և մինչև 2 ամից	91,512	212,916	44,711	349,139
2 ամսից մինչև 12 ամիս	569,407	-	-	569,407
12 ամսից մինչև 2 տարի	577,237	-	-	577,237
2 տարուց մինչև 5 տարի	1,749,383	-	-	1,749,383
Ավելի քան 5 տարի	2,847,261	-	-	2,847,261
	5,834,800	**212,916**	**44,711**	**6,092,427**

Խումբն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Խմբի դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերից դրամական հոսքերը պայմանագրով ենթակա են ստացման 1 ամսվա ընթացքում:

20.3 Պարտքային ռիսկի վերլուծություն

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Խումբը կարող է ֆինանսական կորուստներ կրել:

Դեբիտորական պարտքեր. Խմբի առևտրային դեբիտորական պարտքերի ամենամեծ պայմանագրային գործընկերը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն է, որին Moody's-ի կողմից շնորհել է Ba3 վարկանիշ, որը ամենաբարձրն է Հայաստանում: Ղեկավարությունը գնահատում է, որ Խմբի առջև ծառացած վարկային ռիսկը նվազագույնն է, և Խմբի դեբիտորական պարտքերի համար արժեզրկման պահուստ չի ստեղծվել:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ. Դրամական միջոցները և դրանց համարժեքները պահվում են հայկական բանկերում: Ղեկավարության գնահատմամբ, վարկային ռիսկը նվազագույն է, իսկ Խմբի դրամական միջոցների և դրանց համարժեքների համար արժեզրկման պահուստ չի ստեղծվել:

21 Իրական արժեքի չափում

Խումբը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

21.1 Ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափում

Ղեկավարության կարծիքով, Խմբի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները գրեթե համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները գնահատվում են զեղչված դրամական հոսքերի մեթոդով: Իրական արժեքի գնահատման գործընթացում էական մուտքային տվյալներ չկան: Իրական արժեքի գնահատումը դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի 2 մակարդակում:

21.2 Ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափում

Ոչ նյութական ակտիվները և հիմնական միջոցները գնահատվել են զեղչված դրամական հոսքերի մոդելի հիման վրա, որը վերագրվում է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակին: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Ծանոթագրություն 5:

22 Կապիտալի ռիսկի քաղաքականություն և ընթացակարգեր

Խումբն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և բաժնետերերին բավարար եկամուտ մատակարարի:

Խմբի կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, լրացուցիչ կապիտալը, կուտակված շահույթը, ինչպես նաև փոխառու միջոցները, որոնք ներառում են բանկային վարկերը, որոնք բացահայտված են Ծանոթագրություն 12- ում:

Ղեկավարությունը գնահատում է Խմբի կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի ընդհանուր ֆինանսավորման էֆեկտիվ կառուցվածք՝ խուսափելով չափազանց մեծ լծակավորումից (լեվերիջ): Հաշվի են առնվում Խմբի վարկերի տարբեր դասերի ստորադասության մակարդակները: Խումբը կառավարում է կապիտալի կառուցվածքը և դրանում ճշգրտումներ է կատարում՝ ելնելով տնտեսական պայմանների փոփոխություններից և համապատասխան ակտիվների հետ կապված ռիսկի բնույթից: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ ճշգրտելու նպատակով Խումբը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժնի գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին, թողարկել նոր բաժնետոմսեր կամ վաճառել ակտիվները՝ պարտքը նվազեցնելու համար:

Խումբը վերահսկում է կապիտալը՝ կիրառելով «զուտ պարտքի» և «ճշգրտված սեփական կապիտալի» հարաբերակցությունը.

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Զուտ պարտք		
Վարկեր և փոխառություններ	4,708,172	4,203,335
Հանած՝ ստորադաս վարկ		
Հանած՝ Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(570,385)	(333,835)
	4,137,787	**3,869,500**
Ճշգրտված սեփական կապիտալ		
Ընդհանուր սեփական կապիտալ	3,798,398	3,465,360
Գումարած՝ ստորադաս վարկ		
	3,798,398	**3,465,360**
Զուտ պարտքի և ճշգրտված սեփական կապիտալի հարաբերակցության գործակից	**1.09**	**1.12**

23 Հետհաշվեկշռային իրադարձություններ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվանից հետո՝ 2026թ. փետրվարին, «Սոլիս» ՓԲԸ-ն ձեռք բերեց «Սոլար-5» ՍՊԸ-ի 100% բաժնեմասը, որը շահագործում է 5 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայան ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում:

Մեծ Մասրիկի 5 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային էլեկտրակայանի շինարարությունը նախատեսվում է ավարտել 2026թ. մայիսին, իսկ շահագործման հանձնումը նախատեսվում է նույն ժամանակահատվածում:

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվանից հետո «Սոլիս» ՓԲԸ-ն մեկնարկեց պարտատոմսերի թողարկման գործընթացը, որը նախատեսվում է ավարտել 2026թ. երկրորդ եռամսյակում:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Սոլիս» ՍՊԸ և դուստր ընկերություններ

31 դեկտեմբերի 2024թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	9
Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	10
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես
կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

«Սոլիս» ՍՊԸ-ի բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Սոլիս» ՍՊԸ-ի և նրա դուստր ընկերությունների (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը և դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են Խմբի՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների ու համախմբված դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Խմբի 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվություններն աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որի 2024թ. մարտի 27-ին թվագրված անկախ աուդիտորի եզրակացությամբ արտահայտվել է առանց վերապահման կարծիք՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Grant Thornton

Ի լրումն, ինչպես ներկայացված է Ծանոթագրություն 5-ում, Ընկերության ղեկավարությունը վերաներկայացրել է այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները: Մեր կողմից աուդիտի են ենթարկվել նաև այդ վերաներկայացումները:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Խմբի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Խումբը լուծարելու կամ Խմբի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Խմբի

անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործառնությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի
տնօրեն

Էմիլ Վասիլյան
Աուդիտորական առաջադրանքի պատասխանատու

10 ապրիլի 2025թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2024թ.	2023թ. վերաներ-կայացված (ծանոթ. 5)
Հասույթ	7	487,422	266,100
Աշխատավարձ		(38,724)	(16,196)
Կայանների պահպանման ծախսեր		(34,183)	(15,000)
Արժույթի փոխարկման ծախսեր		(11,056)	(9,366)
Պետական տուրքերի վճարներ		(14,911)	-
Մասնագիտական ծառայությունների գծով ծախսեր		(18,743)	(6,189)
Այլ ծախսեր		(17,063)	(6,733)
Մաշվածություն և ամորտիզացիա	10, 11	(138,133)	(59,650)
Գործառնական գործունեությունից շահույթ		**214,609**	**152,966**
Ֆինանսական եկամուտ	8	2,588	4,835
Ֆինանսական ծախսեր	8	(229,819)	(129,274)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս)		48,028	(29,519)
Շահույթ (վնաս) մինչև հարկերը		**35,406**	**(992)**
Շահութահարկի գծով (ծախս) փոխհատուցում	9	(8,575)	16,564
Տարվա շահույթ		**26,831**	**15,572**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**26,831**	**15,572**

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ. վերաներկայացված (ծանոթ. 5)	1 հունվարի 2023թ. վերաներկայացված (ծանոթ. 5)
Ակտիվներ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	11	6,429,464	3,486,060	1,837,461
Ոչ նյութական ակտիվներ	10	307,635	177,672	-
Գուդվիլ	6	284,442	284,442	-
Տրված կանխավճարներ	14	404,777	392,242	2,159
Հետաձգված հարկային ակտիվներ	13	1,469	1,218	6,269
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**7,427,787**	**4,341,634**	**1,845,889**
Ընթացիկ ակտիվներ				
Դեբիտորական պարտքեր	14	44,786	27,249	11,014
Այլ ակտիվներ		3,036	71	-
Հարկերի գծով դեբիտորական պարտքեր	14	66,374	5,297	176
ԱԱՀ-ի գծով դեբիտորական պարտքեր	14	201,433	64,507	59,533
Ավանդներ բանկերում		-	-	5,603
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	333,835	526,077	47,434
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**649,464**	**623,201**	**123,760**
Ընդամենը ակտիվներ		**8,077,251**	**4,964,835**	**1,969,649**

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ. վերաներկայացված (ծանոթ. 5)	1 հունվարի 2023թ. վերաներկայացված (ծանոթ. 5)
Սեփական կապիտալ և պարտավորություններ				
Սեփական կապիտալ	16			
Կանոնադրական կապիտալ		300,001	300,001	1
Լրացուցիչ կապիտալ		2,821,100	1,337,122	406,954
Կուտակված շահույթ		344,259	317,428	301,856
Ընդամենը սեփական կապիտալ		**3,465,360**	**1,954,551**	**708,811**
Պարտավորություններ				
Ոչ ընթացիկ				
Հետաձգված հարկային պարտավորություններ	13	134,562	53,599	16,718
Պետական դրամաշնորհներ	11	16,367	-	-
Բանկային վարկեր	12	3,785,279	2,705,500	1,130,257
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**3,936,208**	**2,759,099**	**1,146,975**
Ընթացիկ				
Կրեդիտորական պարտքեր		210,951	62,220	1,448
Բանկային վարկեր	12	418,056	185,177	103,146
Ստացված կանխավճարներ		8,857	-	-
Հարկային պարտավորություններ, շահութահարկից բացի		164	-	429
Ընթացիկ հարկային պարտավորություններ		-	-	7,326
ԱԱՀ-ի գծով դեբիտորական պարտքեր		35,409	2,282	951
Արձակուրդի պահուստ		1,965	-	-
Այլ պարտավորություններ		281	1,506	563
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		675,683	251,185	113,863
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		8,077,251	4,964,835	1,969,649

Համախմբված Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025թ.-ի ապրիլի 10-ին

Կարեն Արաբյան — Տնօրեն

Արմեն Ադամյան — Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 41-ը էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Բաժնե-տիրական կապիտալ	Լրացուցիչ կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդ (մինչև վերաներկայացումը)	**1**	**334,763**	**374,047**	**708,811**
Վերաներկայացում (տե՛ս ծանոթագրություն 5)	-	72,191	(72,191)	-
2023թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդ (վերաներկայացումից հետո)	**1**	**406,954**	**301,856**	**708,811**
Կապիտալի համալրում	300,000	930,168	-	1,230,168
Տարվա շահույթ	-	-	15,572	15,572
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	**300,001**	**1,337,122**	**317,428**	**1,954,551**
Կապիտալի համալրում	-	1,483,978	-	1,483,978
Տարվա շահույթ	-	-	26,831	26,831
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**300,001**	**2,821,100**	**344,259**	**3,465,360**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2024թ.	2023թ. վերաներ-կայացված (ծանոթ. 5)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Տարվա շահույթ (վնաս) մինչև հարկումը		35,406	(992)
Ճշգրտումներ՝			
Մաշվածություն և ամորտիզացիա		138,133	59,650
Զուտ ֆինանսական եկամուտ (ծախս)		227,231	124,439
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ) վնաս		(48,028)	29,519
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները		**352,742**	**212,616**
Փոփոխություններ			
ԱԱՀ-ի գծով դեբիտորական պարտքեր		(78,281)	-
Դեբիտորական պարտքեր		17,581	4,457
Այլ ակտիվներ		(114,136)	(1,892)
Կրեդիտորական պարտքեր		130,469	6,118
Այլ պարտավորություններ		26,075	(2,610)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ մինչև հարկումը և տոկոսների վճարումը		**334,450**	**218,689**
Վճարված տոկոսներ		(229,819)	(129,274)
Վճարված շահույթահարկ		-	(7,326)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		**104,631**	**82,089**

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2024թ.	2023թ.
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Հիմնական միջոցների ձեռքբերում		(1,923,638)	(394,380)
Դուստր ձեռնարկությունների ձեռքբերում, զուտ ստացված դրամական միջոցները և դրանց համարժեքները	6	(467,857)	(459,904)
Եկամուտներ բանկային ավանդներից և մնացորդներից		2,583	10,021
Մուտքեր տրված փոխառություններից		-	100,000
Մուտքեր պետական դրամաշնորհներից		14,373	-
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ		**(2,374,539)**	**(744,263)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Կապիտալի համալրում		1,483,978	1,230,168
Մուտքեր բանկային վարկերից	17	1,032,424	-
Բանկային վարկերի մարում	17	(426,613)	(93,855)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		**2,089,789**	**1,136,313**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ (նվազում)		(180,119)	474,139
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա		(12,123)	4,504
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա սկզբում		526,077	47,434
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա վերջում	15	**333,835**	**526,077**

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Սոլիս» ՍՊԸ և դուստր ընկերություններ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական (ՀՀ) դրամով)

1 Գործառնությունների բնույթը

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են «Սոլիս» ՍՊԸ-ի և նրա դուստր ընկերությունների՝ «Դաս Էնտերիա Զոլարքաֆթվերք» ՓԲԸ-ի, «Սոլար Ֆարմ» ՍՊԸ-ի, «Մոդուլ Սան» ՍՊԸ-ի, «Մեծ Մասրիկ» ՍՊԸ-ի և «Սաներջի» ՍՊԸ-ի համար (այսուհետ՝ միասին՝ «Խումբ»):

«Սոլիս» ՍՊԸ-ն շահագործում է ֆոտովոլտային արևային էլեկտրակայան Արագածոտնի մարզի Պարտիզակ համայնքում: Նախագծի հզորությունը 4 ՄՎտ է՝ տարեկան մինչև 7.8 ԳՎտ/ժ կանխատեսվող պլանային արտադրությամբ: Նախագիծը շահագործման է հանձնվել 2021թ. և ունի էլեկտրաէներգիայի գնման 20 տարվա պայմանագիր: 2022թ. հունիսից «Սոլիս» ՍՊԸ-ն հանդիսանում է «Դաս Էնտերիա Զոլարքաֆթվերք» ՓԲԸ-ի 100% բաժնետեր, որը շահագործում է 2 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայան ՀՀ Գեղարքունիքի մարզի Շորժա համայնքում: 2023թ. հոկտեմբերից «Սոլիս» ՍՊԸ-ն հանդիսանում է «Սոլար Ֆարմ» ՍՊԸ-ի 100% բաժնետեր, որը շահագործում է 5 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայան ՀՀ Գեղարքունիքի մարզի Շորժա համայնքում: 2024թ. ընթացքում «Սոլար Ֆարմ» ՍՊԸ-ն սկսել է երկրորդ 5 ՄՎտ հզորությամբ կայանի («Սոլար Ֆարմ 2») շինարարությունը:

2024թ. մայիսից Սոլիսը հանդիսանում է «Մոդուլ Սան» ՍՊԸ-ի և «Մեծ Մասրիկ» ՍՊԸ-ի 100% բաժնետեր: «Մոդուլ Սան» ՍՊԸ-ն 3 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային էլեկտրակայան է Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղում: «Մեծ Մասրիկ» ՍՊԸ-ն հանդիսանում է «Մոդուլ Սան» կայանին հարակից հողամասի սեփականատեր, որն ունի 5 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայան կառուցելու և շահագործելու լիցենզիա:

2024թ. մայիսից Սոլիսը «Սաներջի» ՍՊԸ-ի 100% բաժնետերն է, որը Կոտայքի մարզի Գառնի համայնքում ունի հողամաս և 5 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային կայան կառուցելու և շահագործելու լիցենզիա: Շինարարությունը ընթացքի մեջ է, շահագործման հանձնումը նախատեսված է 2025թ. ապրիլին:

Խմբի միակ բաժնետերը և վերջնական վերահսկողը ԵՄ-Հայաստան ՓՄՁ հիմնադրամն է:

2 Ընդհանուր տեղեկատվություն, ՖՀՄՍ-ներին համապատասխանության հավաստում և անընդհատության ենթադրություն

«Սոլիս»-ը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Պարտիզակ գյուղում:

Իրավաբանական գրանցման և գործունեության իրականացման հասցեն է 10 Վազգեն Սարգսյան, 98 Հայաստանի Հանրապետություն:

Խմբի աշխատակիցների միջին թվաքանակը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 6 մարդ (2023թ.՝ 1 մարդ):

Դուստր ընկերություններ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված են հետևյալ դուստր ընկերությունները.

31 դեկտեմբերի 2024թ. Դուստր ընկերություն	Մասնաբաժին %	Գրանցման երկիր	Գրանցման ամսաթիվ	Գործունեության ոլորտ	Հզորություն (ՄՎտ)	Լիցենզիայի ավարտ	Ձեռքբերման ամսաթիվ
«Դաս Էնտերիա Զոլարքաֆթվերք» ՓԲԸ	100	Հայաստան	12 դեկտեմբեր 2017թ.	ֆոտովոլտային արևային էլեկտրական	2	26 հոկտեմբեր 2042թ.	1 հունիս 2022թ.
«Սոլար Ֆարմ» ՍՊԸ	100	Հայաստան	11 մարտ 2019թ.	ֆոտովոլտային արևային էլեկտրական	10	15 օգոստոս 2041թ. և 29 մարտ 2046թ.	4 հոկտեմբեր 2023թ.
«Մոդուլ Սան» ՍՊԸ	100	Հայաստան	12 սեպտեմբեր 2017թ.	ֆոտովոլտային արևային էլեկտրական	3	28 փետրվար 2042թ.	23 մայիս 2024թ.
«Մեծ Մասրիկ» ՍՊԸ	100	Հայաստան	19 ապրիլ 2019թ.	ֆոտովոլտային արևային էլեկտրական	5	20 հուլիս 2045թ.	23 մայիս 2024թ.
«Սաներջի» ՍՊԸ	100	Հայաստան	22 հունիս 2019թ.	ֆոտովոլտային արևային էլեկտրական	5	13 ապրիլ 2045թ.	1 մայիս 2024թ.
31 դեկտեմբերի 2024թ. Դուստր ընկերություն	Մասնաբաժին %	Գրանցման երկիր	Գրանցման ամսաթիվ	Գործունեության ոլորտ	Հզորություն (ՄՎտ)	Լիցենզիայի ավարտ	Ձեռքբերման ամսաթիվ
«Դաս Էնտերիա Զոլարքաֆթվերք» ՓԲԸ	100	Հայաստան	12 դեկտեմբեր 2017թ.	ֆոտովոլտային արևային էլեկտրական	2	26 հոկտեմբեր 2042թ.	1 հունիս 2022թ.
«Սոլար Ֆարմ» ՍՊԸ	100	Հայաստան	11 մարտ 2019թ.	ֆոտովոլտային արևային էլեկտրական	10	15 օգոստոս 2041թ. և 29 մարտ 2046թ.	4 հոկտեմբեր 2023թ.

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքներով, քանի որ ղեկավարությունը կարծում է, որ Խումբն ունի համապատասխան ռեսուրսներ տեսանելի ապագայում անընդհատ գործունեություն իրականացնելու համար: Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել տեղեկատվության լայն շրջանակ, ներառյալ շահութաբերության կանխատեսումը, ֆինանսավորման կարիքները: Գնահատումը ներառում է նաև ողջամտորեն հնարավոր անկումային տնտեսական սցենարների և դրանց հնարավոր ազդեցությունների դիտարկումը Խմբի շահութաբերության, կապիտալի և իրացվելիության վրա:

Գործարար միջավայր

Հայաստանի գործարար միջավայրը բախվում է մարտահրավերների՝ կապված աշխարհաքաղաքական լարվածության, մասնավորապես՝ Ադրբեջանի կողմից շարունակվող ագրեսիայի և տարածաշրջանային անկայունության հետ: Ուկրաինայի պատերազմն էլ ավելի է բարդացրել իրավիճակը՝ առաջացնելով առևտրի խափանումներ, Ռուսաստանի դեմ պատժամիջոցներ և համաշխարհային գնաճ: Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից թուլացել է՝ ազդելով առևտրի, դրամական փոխանցումների և անվտանգության երաշխիքների վրա՝ դրդելով Հայաստանին դիվերսիֆիկացնել իր տնտեսական հարաբերությունները, թեև դա էլ իր ռիսկերն է պարունակում:

Հայկական դրամը սպասվածից ավելի ուժեղ գտնվեց՝ զսպելով գնաճը, բայց դժվարություններ ստեղծելով արտահանողների և արտարժութային պարտավորություններ ունեցող ձեռնարկությունների համար: Համաշխարհային գնաճը և էներգայի աճող գները ճնշում են գործադրում Հայաստանի տնտեսության վրա՝ հատկապես ներմուծումից կախվածության պատճառով:

Չնայած այս մարտահրավերներին՝ ձեռնարկությունները դիվերսիֆիկացնում են մատակարարման շղթաները և ուսումնասիրում նոր շուկաներ, իսկ կառավարության՝ բարեփոխումներին ուղղած ջանքերը երկարաժամկետ կայունության ուղի են ապահովում: Այնուամենայնիվ, Հայաստանի հաջողությունը կախված կլինի իր ձեռնարկատիրության՝ այդ ռիսկերը արդյունավետորեն նավարկելու կարողությունից:

Տվյալ համախմբված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Խմբի գործունեության վրա՝ Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Խմբի ղեկավարությունը շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Խմբի գործունեության վրա կարող են տարբերվել Խմբի ղեկավարության ներկա սպասումներից:

3 Նոր և վերանայված ստանդարտներ կամ մեկնաբանություններ

3.1 2024թ. հունվարի 1-ի դրությամբ ընդունված նոր ստանդարտներ

Ընթացիկ տարում Խումբն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2024թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2024թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *«Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ»* (ՀՀՄՍ 1 փոփոխություններ),
- *«Վարձակալության գծով պարտավորությունը վաճառք և հետադարձ վարձակալությամբ գործարքներում»* (ՖՀՄՍ 16 փոփոխություններ),
- *«Մատակարարման շղթայի ֆինանսավորման մեխանիզմներ»* (ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ),
- *«Կովենանտով ոչ ընթացիկ պարտավորություններ»* (ՀՀՄՍ 1 փոփոխություններ)

3.2 Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

- *«Փոխանակելիության բացակայություն»* (ՀՀՄՍ 21 փոփոխություն)
- *«Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ»* (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)
- ՖՀՄՍ 18 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»*
- ՖՀՄՍ 19 *«Դուստր ձեռնարկություններ առանց հանրային հաշվետվողականության. բացահայտումներ»*

4 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Պատրաստման հիմքերը

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով, բացառությամբ ոչ նյութական ակտիվների, որոնք ներկայացված են իրական արժեքով:

4.2 Համախմբման հիմքեր

Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունները համախմբում են Մայր Ընկերության և իր բոլոր դուստր ընկերությունների՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունները: Բոլոր դուստր ընկերությունների հաշվետու ամսաթիվը դեկտեմբերի 31-ն է:

Համախմբման ժամանակ Խմբի ընկերությունների միջև բոլոր գործարքները և մնացորդները բացառվում են, ներառյալ Խմբի ընկերությունների միջև գործարքների արդյունքում չվաստակած օգուտները և չկրած վնասները: Երբ ակտիվի ներխմբային վաճառքից առաջացող չկրած վնասը համախմբման ժամանակ հակադարձվում է, հիմքում ընկած ակտիվը նաև ենթարկվում է արժեզրկվածության գծով ստուգման՝ Խմբի տեսանկյունից: Դուստր ընկերությունների համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարները անհրաժեշտության դեպքում ճշգրտվել են՝ Խմբի կողմից ընդունված հաշվապահական քաղաքականության հետ համապատասխանությունն ապահովելու համար:

Տարվա ընթացքում ձեռք բերած կամ օտարած դուստր ընկերությունների շահույթը կամ վնասը և այլ համապարփակ արդյունքը ճանաչվում են ձեռքբերման ամսաթվից կամ մինչև օտարման ամսաթիվը, որը կիրառելի է:

Խումբը դուստր ընկերությունների ընդհանուր համախառն եկամուտը կամ վնասը բաշխում է Մայր Ընկերության սեփականատերերի և չվերահսկող բաժնեմասերի միջև՝ առաջնորդվելով սեփականության համապատասխան բաժնեմասով:

4.3 Կլիմային առնչվող հարցեր

Խումբը ճանաչում է կլիմայի առաջացրած ռիսկերն ու հնարավորությունները իր բիզնեսի և հաճախորդների համար: Այս ռիսկերը ներառում են ֆինանսական կորստի սպառնալիքը և անբարենպաստ ոչ ֆինանսական ազդեցությունները, որոնք ներառում են կլիմայի փոփոխության քաղաքական, տնտեսական և բնապահպանական արձագանքները: Խումբը հանձնառու է կառավարել այս ռիսկերը՝ միաժամանակ աջակցելով վերականգնվող էներգիայի համաշխարհային անցմանը:

Խումբը բացահայտել է կլիմայական ռիսկերի երկու հիմնական կատեգորիա՝ ֆիզիկական և անցումային:

Ֆիզիկական ռիսկերն առաջանում են եղանակային կտրուկ փոփոխությունների հետևանքով, ինչպիսիք են փոթորիկները, կարկուտները և անտառային հրդեհները, որոնք կարող են վնասել արևային ենթակառուցվածքները, խանգարել վերջիններիս գործունությանը կամ ավելացնել ապահովագրական ծախսերը, ինչպես նաև կլիմայական պայմանների երկարաժամկետ փոփոխությունների հետևանքով, ինչպիսիք են կայուն բարձր ջերմաստիճանը և երաշտը, որոնք կարող են ազդել արևային վահանակների արդյունավետության վրա:

Անցումային ռիսկերը կարող են առաջանալ զրոյական արտանետումներով տնտեսության անցնելու հետևանքով, ինչպիսիք են կառավարության առաջարկած փոփոխությունները (կանաչ հարկաչափը, պետական սուբսիդավորումները) կամ ավելի խիստ բնապահպանական կարգավորումների հետևանքով, որոնք կարող են ազդել ծրագրերի վրա: Մրցակցող վերականգնվող տեխնոլոգիաների (օրինակ՝ քամու էներգիա, մարտկոցային կուտակիչ) արագ զարգացումը կամ ներդրողների/սպառողների նախասիրությունների փոփոխությունները կարող են փոխել արևային լուծումների պահանջարկը: Բացի այդ, արևային կայանների արագ զարգացումը ամբողջ երկրի տարածքում, ներառյալ ինքնասպառման համար ապակենտրոնացված համակարգերը, կարող է հանգեցնել ազատ շուկայում գերմատակարարման, ինչը կնվազեցնի էլեկտրաէներգիայի գները և խոշոր մասշտաբի արևային նախագծերի շահույթաբերությունը: Այն կարող է նվազեցնել նոր արևային ներդրումների կամ գործող էլեկտրաէներգիայի գնման պայմանագրերի (PPA) տնտեսական կենսունակությունը, մասնավորապես այն տարածաշրջաններում, որտեղ արևային էներգիայի ներթափանցումը բարձր է, իսկ ցանցն ունի սահմանափակ հնարավորություններ:

Խումբը հետևողականորեն աշխատում է կլիմայական ռիսկերի կառավարման մեթոդների կատարելագործման ուղղությամբ: Խումբն ունի բարելավված բիզնես մոդելի վերլուծություն՝ ավելի լավ կանխատեսելու, թե ինչպես կարող են կլիմայական ռիսկերը, ինչպիսիք են ծայրահեղ եղանակային պայմանները կամ կարգավորիչ փոփոխությունները, ազդել Խմբի գործունեության և հաճախորդների վրա: Խումբը գտնվում է ռիսկերի մոտեցման պաշտոնականացման գործընթացում՝ սահմանելով ռիսկերի նկատմամբ հանդուրժողականության մակարդակներ և ստեղծելով Կլիմայական ռիսկերի կոմիտե, որը պատասխանատու է քաղաքականության ու վերահսկողության համար: Խումբը նաև պլանավորում է արդիականացնել տվյալների համակարգերը՝ կլիմայական ռիսկերն ավելի արդյունավետորեն հետևելու և գնահատելու համար, ապահովելով, որ այն մնա հնարավոր մարտահրավերներից առաջ:

Խումբը գիտակցում է, որ կլիմայական ռիսկերը շարունակելու են զարգանալ և հանձնառու է հարմարեցնել իր ռազմավարությունները՝ փոփոխվող միջավայրում բիզնեսը պաշտպանելու և իր հաճախորդներին աջակցելու համար:

4.4 Բիզնեսի միավորումներ

Բիզնես միավորումների հաշվառման ժամանակ Խումբը կիրառում է գնման մեթոդը: Դուստր ընկերության նկատմամբ վերահսկողություն ձեռք բերելու համար փոխանցված հատուցումը հաշվառվում է որպես փոխանցված ակտիվների, առաջացած պարտավորությունների և Խմբի թողարկած սեփական կապիտալի բաժնեմասերի՝ ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրական արժեքների հանրագումար, որը ներառում է պայմանական հատուցման համաձայնությունից առաջացող ցանկացած ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը: Ձեռք բերման ծախսերը ծախսագրվում են տեղի ունենալուն զուգընթաց:

Ձեռք բերված ակտիվները և ստանձնած պարտավորությունները սովորաբար չափվում են ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրենց իրական արժեքով:

4.5 Արտարժույթ

Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (ՀՀ դրամ), որն էլ հանդիսանում է Խմբի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել կիրառելի է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: ՀՀ դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

Արտարժույթով գործարքներ

Համախմբված Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները

վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը.

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	396.56	404.79

Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող օգուտը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում: Նման ոչ դրամային հոդվածների դեպքում օգուտի կամ վնասի ցանկացած փոխարժեքային բաղադրիչ նույնպես ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում:

4.6 Հասույթ

Հաճախորդների հետ կնքված պայմանագրերին վերաբերող Խմբի հաշվապահական քաղաքականության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 7-ում:

4.7 Ոչ նյութական ակտիվներ

Բիզնեսի միավորման արդյունքում ձեռք բերված ոչ նյութական ակտիվների արժեքը ձեռքբերման օրվա դրությամբ ներկայացված են իրական արժեքով: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները ներկայացվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Բիզնեսի միավորման արդյունքում ձեռք բերված ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետը գնահատվել է ձեռքբերման պահին և հիմնված է լիցենզիայի ժամկետի վրա (տե՛ս Ծանոթագրություն 2), որը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ միջինում կազմում է 19 տարի:

4.8 Հիմնական միջոցներ

Խմբի հողերը, շենքերը և շինությունները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկման կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Արևային կայաններ (ֆոտովոլտային վահանակներ)	-	35 տարի
Սարքավորումներ, տնտեսական գույք	-	5 տարի
Շենքեր	-	20 տարի:

Քանի որ հողի համար հնարավոր չէ որոշել վերջավոր օգտակար ծառայության ժամկետ, համապատասխան հաշվեկշռային արժեքը չի ամորտիզացվում:

4.9 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Խմբի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որն արտացոլված է այլ ծախսերում: Խմբի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են Ծանոթագրություն 12-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,

- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունն աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Խմբի դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Ֆինանսական ակտիվներ՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են «հավաքագրման համար պահվող» կամ «հավաքագրման և վաճառքի համար պահվող» բիզնես մոդելներից տարբեր մոդելի շրջանակներում, դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Հետագայում, անկախ բիզնես մոդելից, բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց պայմանագրային դրամական հոսքերը չեն հանդիսանում միայն մայր գումարի և հաշվարկված տոկոսի մարում, հաշվառվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները դասակարգվում են այս կատեգորիայում, բացառությամբ հեջավորման գործիքների, որոնց համար գործում են հեջավորման հաշվառմանը ներկայացվող պահանջները:

Այս կատեգորիայում դասակարգված ակտիվները չափվում են իրական արժեքով՝ օգուտը կամ կորուստները ճանաչելով շահույթում կամ վնասում: Այս կատեգորիայում դասակարգված ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշվում է գործող շուկայի գործարքներին հղում կատարելով կամ, այն պարագայում, երբ առկա չէ գործող շուկա՝ կիրառելով գնահատման մեթոդ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված վարկերը և փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով առևտրային դեբիտորական պարտքերը, պայմանագրային ակտիվները որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն և վարկային պարտավորությունները և որոշ ֆինանսական երաշխավորության պայմանագրերը (թողարկողի համար), որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթում կամ վնասի միջոցով:

Պարտքային կորուստների ճանաչումն այլևս կախված չէ Խմբի՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Խումբը դիտարկում է ավելի ընդլայնված տեղեկատվություն ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Ապագայամետ գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ն ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար:

Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Խումբը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը՝ օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Խումբն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Խումբը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից: ՖՀՄՍ 9-ի՝ արժեզրկմանը ներկայացվող պահանջների կիրառման մանրամասն վերլուծությունն արտացոլված է Ծանոթագրություն 19-ում:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Խմբի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են Ծանոթագրություն 12-ում:

Բանկային վարկեր

Բանկային վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ հանած փոխառության հետ կապված գործարքային ծախսերը: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառությունը ստացվել է սեփականատերերից: Այս դեպքում իրական և նոմինալ արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

4.10 Շահութահարկ

Ընթացիկ հարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը

գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են դուստր ընկերություններում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների ու համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, որտեղ Խումբն ի վիճակի է վերահսկելու ժամանակավոր տարբերության հակադարձումը, և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում: Նմանատիպ ներդրումների և մասնակցությունների հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերություններից առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է հարկվող շահույթի առկա լինելը, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը, և որը կմարվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Խումբը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Խումբը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Խումբը մտադիր է զուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

4.11 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Խումբը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

4.12 Սեփական կապիտալ և պահուստներ

Խմբի կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Բաժնետիրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի նոմինալ արժեքը:

Լրացուցիչ կապիտալը ներառում է բաժնետերերի ներդրումների ավելցուկը թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքի և վճարված, բայց չգրանցված կապիտալի նկատմամբ:

Կուտակված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

4.13 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարության կատարած նշանակալի դատողություններ և գնահատման անորոշություն

ՖՀՄՍ-ներին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

Խումբն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

Բիզնես միավորումների միջոցով ձեռք բերված ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը

Ձեռքբերման պահին, դուստր ընկերության ակտիվները, պարտավորությունները և պայմանական պարտավորությունները չափվում են ձեռքբերման օրվա դրությամբ իրենց իրական արժեքներով: Ձեռք բերված ակտիվների և ստանձնած պարտավորությունների իրական արժեքի որոշումը պահանջում է մասնագիտական դատողություն, ինչի համար ղեկավարությունը կարող է ներգրավել անկախ գնահատող փորձագետների: Լրացուցիչ տեղեկատվության համար տե՛ս Ծանոթագրություն 6:

4.14 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված կարևոր դատողություններ

Ստորև ներկայացված են ղեկավարության՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված դատողությունները, որոնք ամենաէական ազդեցությունն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը

Այն չափը, որով կարող է ճանաչվել հետաձգված հարկային ակտիվ, կախված է այն հավանականության գնահատումից, թե արդյո՞ք ապագայում հասանելի կլինի եկամուտ, որի դիմաց կիրացվեն նվազեցման ենթակա ժամանակավոր տարբերությունները և նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասը: Ի լրումն, անհրաժեշտ է էական դատողություն հարկային միջավայրում իրավական և տնտեսական սահմանափակումների և անորոշությունների գնահատման ժամանակ:

5 Ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

Խումբը կիրառում է հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները և իրականացնում է նախորդ տարիների սխալների ուղղումը հետընթաց՝ դրանց հայտնաբերումից հետո թողարկման համար հայտարարված ֆինանսական հաշվետվությունների առաջին փաթեթում՝ վերահաշվարկելով ներկայացված նախորդող ժամանակաշրջանների համեմատելի այն գումարները,

որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ եթե սխալը տեղի է ունեցել նախքան ամենավաղ ներկայացված ժամանակաշրջանը, այդ դեպքում՝ վերահաշվարկելով ներկայացված ամենավաղ նախորդող ժամանակաշրջանի համար ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները: Ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ նախորդ տարիների համադրելի տեղեկատվությունը, ներկայացված են այնպես, կարծես ուղղումը կատարվել է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում առաջացել է դրա կատարման անհրաժեշտությունը: Հետևաբար, յուրաքանչյուր ներկայացված ժամանակաշրջանին վերաբերող ուղղման գումարը վերագրվում է այդ տարվա ֆինանսական տեղեկատվությանը:

Վերաներկայացումները ներկայացված են ստորև.

Բիզնես միավորում

2022թ.-ին բիզնես միավորման ժամանակ Խումբը ճանաչել է հիմնական միջոցների իրական արժեքը դրանց հաշվեկշռային արժեքից բարձր արժեքով, սակայն դրանցից առաջացող հետաձգված հարկային պարտավորությունը չի ճանաչվել: 2023թ.-ին Խումբը չի ճանաչել ոչ նյութական ակտիվները և գուդվիլը, ինչպես նաև դուստր ձեռնարկությունների ձեռքբերումներից առաջացած հետաձգված հարկային պարտավորությունները: 2023թ.-ի ընթացքում Խումբը վերահաշվարկել է համախմբված ֆինանսական հաշվետվությունները՝ 2023թ. հունվարի 1-ի և 2023թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ: Ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Ծանոթագրություն 6-ում:

Լրացուցիչ կապիտալ

2021, 2022 և 2023 թթ.-ի ընթացքում «Սոլիս» ՍՊԸ-ի կապիտալը համալրվել է իր գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով: Խումբը պատշաճ կերպով բացառել է կապիտալի համալրման հետ կապված փոխարժեքային տարբերությունից ստացված օգուտը (վնասը) և կապիտալի համալրումը արտացոլել է դրամական միջոցներում և դրանց համարժեքներում՝ հանած սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված փոխարժեքային տարբերությունից ստացված օգուտը (վնասը): Այնուամենայնիվ, վերաներկայացման արդյունքում փոխարժեքային տարբերությունից ստացված օգուտը (վնասը) սխալմամբ դասակարգվել է որպես չբաշխված շահույթ: 2023թ. ընթացքում Խումբը վերաներկայացրել է 2023թ. հունվարի 1-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական հաշվետվությունները:

Համախմբված համեմատական ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

2023թ. հունվարի 1-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության վերաներկայացումները բերված են ստորև.

	Ներկայացված	Վերա-ներկայացում	Վերա-ներկայացված 1 հունվարի 2023թ.
Հիմնական միջոցներ	1,823,888	13,573	1,837,461
Հետաձգված հարկային պարտավորություններ	(3,145)	(13,573)	(16,718)
Լրացուցիչ կապիտալ	(334,763)	(72,191)	(406,954)
Կուտակված շահույթ	(374,047)	72,191	(301,856)

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության վերաներկայացումները բերված են ստորև.

	Ներկայացված	Վերա-ներկայացում	Վերա-ներկայացված 31 դեկտեմբերի 2023թ.
Հիմնական միջոցներ	3,903,938	(417,878)	3,486,060
Ոչ նյութական ակտիվներ	-	177,672	177,672
Գուդվիլ	-	284,442	284,442
Լրացուցիչ կապիտալ	(1,273,938)	(63,184)	(1,337,122)
Կուտակված շահույթ	(381,932)	64,504	(317,428)
Հետաձգված հարկային պարտավորություններ	(2,798)	(50,801)	(53,599)

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված ֆինանսական հաշվետվության վերաներկայացումները բերված են ստորև.

	Ներկայացված	Վերա-ներկայացում	Վերա-ներկայացված 31 դեկտեմբերի 2023թ. ավարտված տարի
Մաշվածություն և ամորտիզացիա	(58,042)	(1,608)	(59,650)
Շահութահարկի գծով փոխհատուցում	16,276	288	16,564

6 Դուստր ընկերությունների ձեռքբերում

Ձեռքբերված դուստր ընկերություններ	Հիմնական գործունեություն	Ձեռքբերման ամսաթիվ	Ձեռքբերված բաժնեմաս	Ձեռքբերման ծախսեր
2024թ.				
«Սաներջի» ՍՊԸ	ֆոտովոլտային արևային էլեկտրակայան	1 մայիս	100.0%	204,538
«Մոդուլ Սան» ՍՊԸ	ֆոտովոլտային արևային էլեկտրակայան	23 մայիս	100.0%	308,863
Ընդամենը				**513,401**
2023թ.				
«Սոլար Ֆարմ» ՍՊԸ	ֆոտովոլտային արևային էլեկտրակայան	4 հոկտեմբեր	100.0%	463,964
Ընդամենը				**463,964**

Ձեռքբերված դուստր ընկերություններ	Հիմնական գործունեություն	Ձեռքբերման ամսաթիվ	Ձեռքբերված բաժնեմաս	Ձեռքբերման ծախսեր
2022թ.				
«Դաս Էնտերիա Ջոլարքաֆթվերք» ՓԲԸ	ֆոտովոլտային արևային էլեկտրակայան	10 հունիս	100.0%	77,002
Ընդամենը				**77,002**

Ձեռքբերման օրվա դրությամբ ճանաչելի ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ու իրական արժեքները բերված են ստորև.

	«Սաներջի» ՍՊԸ		«Մոդուլ Սան» ՍՊԸ և «Մեծ Մասրիկ» ՍՊԸ		Ընդհանուր իրական արժեքը ձեռքբերման պահին 2024թ.
	Հաշվեկշռային արժեք	Ձեռքբերման իրական արժեք	Հաշվեկշռային արժեք	Ձեռքբերման իրական արժեք	
Ակտիվներ	**75,856**	**232,785**	**1,010,886**	**1,154,311**	**1,387,096**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	17,448	17,448	28,096	28,096	
Առևտրային և դեբիտորական պարտքեր	-	-	35,113	35,113	
Հետաձգված հարկային ակտիվներ	-	-	76	76	
Հիմնական միջոցներ	58,408	215,337	935,351	935,351	
Ոչ նյութական ակտիվներ	-	-	-	143,425	
Այլ	-	-	12,250	12,250	
Պարտավորություններ	**-**	**28,247**	**819,631**	**845,448**	**873,695**
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	-	-	21,214	21,214	
Այլ	-	-	2,744	2,744	
Ստացված կանխավճարներ	-	-	14,662	14,662	
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	28,247	18,149	43,966	
Բանկային վարկեր	-	-	762,862	762,862	
Ընդամենը, զուտ	**75,856**	**204,538**	**191,255**	**308,863**	**513,401**
Ձեռքբերումից առաջացած գուդվիլ	-	-	-	-	-
Ձեռքբերման գին		**204,538**		**308,863**	

	«Սոլար Ֆարմ» ՍՊԸ		«Դաս Էնտերիա Զոլարքաֆթվերք» ՓԲԸ		Ընդհանուր իրական արժեքը ձեռքբերման պահին 2023թ.	Ընդհանուր իրական արժեքը ձեռքբերման պահին 2022թ.
	Հաշվեկշռային արժեք	Ձեռքբերման իրական արժեք	Հաշվեկշռային արժեք	Ձեռքբերման իրական արժեք		
Ակտիվներ	**1,775,184**	**1,954,464**	**15,900**	**91,300**	**1,954,464**	**91,300**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4,060	4,060	1,074	1,074		
Ավանդներ բանկերում	-	-	5,000	5,000		
Առևտրային և դեբիտորական պարտքեր	20,690	20,690	-	-		
Հետաձգված հարկային Ակտիվներ	-	-	3,985	3,985		
Հիմնական միջոցներ	1,650,165	1,650,165	4,216	79,616		
Ոչ նյութական ակտիվներ	-	179,280	-	-		
Փոխառություններ	100,000	100,000	-	-		
Այլ	269	269	1,625	1,625		
Պարտավորություններ	**1,742,673**	**1,774,942**	**727**	**14,298**	**1,774,942**	**14,298**
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	438	438	200	200		
Այլ	4,075	4,075	527	527		
Հետաձգված հարկային պարտավորություններ	20,982	53,251	-	13,571		
Բանկային վարկեր	1,717,178	1,717,178	-	-		
Ընդամենը, զուտ	**32,511**	**179,522**	**15,173**	**77,002**	**179,522**	**77,002**
Ձեռքբերումից առաջացած գուդվիլ	-	284,442	-	-	284,442	
Ձեռքբերման գին		**463,964**		**77,002**		

Մինչև ձեռքբերումը գործող դուստր ձեռնարկությունների համար («Սոլար Ֆարմ» ՍՊԸ, «Մոդուլ Սան» ՍՊԸ և «Մեծ Մասրիկ» ՍՊԸ), լիցենզիայի իրական արժեքը որոշվել է զեղչված դրամական հոսքի (DCF) մոդելի կիրառմամբ: Ակտիվների իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում (տե՛ս Ծանոթագրություն 21): Զուտ ակտիվների իրական արժեքի և ձեռքբերման գնի միջև դրական տարբերությունը վերագրվում է գուդվիլին:

Ձեռքբերման պահին չգործող դուստր ձեռնարկությունների համար («Դաս Էնտերիա Զոլարքաֆթվերք» ՓԲԸ, «Սաներջի» ՍՊԸ), DCF մոդելի արդյունքում ստացված դրական տարբերությունը վերագրվել է հիմնական միջոցների՝ հողի, սկզբնական արժեքին: Ակտիվների իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում (տե՛ս Ծանոթագրություն 21):

Դեբիտորական պարտքերի իրական արժեքը հավասար էր դրանց հաշվեկշռային արժեքին, քանի որ դեբիտորական պարտքերից ոչ մեկը չի արժեզրկվել, և ակնկալվում է, որ պայմանագրով նախատեսված գումարները կհավաքագրվեն:

Հետաձգված հարկային պարտավորությունը հիմնականում ներառում է նյութական և ոչ նյութական ակտիվների մաշվածության և ամորտիզացիայի հարկային ազդեցությունը:

Հետաձգված հարկային ակտիվը հիմնականում բաղկացած է հաջորդ տարում փոխանցվող հարկային վնասների չմարված գումարից:

Ձեռքբերումից առաջացած զուտ դրամական հոսքը ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

	2024թ.	2023թ.
Դրամական միջոցներով և դրանց համարժեքներով կատարված Հատուցում	(513,401)	(463,964)
Ձեռք բերված դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	45,544	4,060
Ընդամենը դրամական հոսք	**(467,857)**	**(459,904)**

Ղեկավարության գնահատմամբ, 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գուդվիլում արժեզրկման որևէ նշաններ առկա չեն (տե՛ս Ծանոթագրություն 6):

7 Հասույթ

	2024թ.			2023թ.		
	Արտադրություն ՄՎտժ	Հասույթ	Միջինում 1 կՎտժ	Արտադրություն ՄՎտժ	Հասույթ	Միջինում 1 կՎտժ
Սոլիս ՍՊԸ	7,342	152,967	20.8	7,243	156,271	21.6
Դաս Էնտերիա Զոլարքաֆթվերք ՓԲԸ	3,295	68,668	20.8	3,218	71,282	22.2
Սոլար Ֆարմ ՍՊԸ *	9,220	192,058	20.8	1,839	38,547	21.0
Մոդուլ Սան ՍՊԸ*	3,538	73,729	20.8	-	-	-
Ընդամենը	**23,395**	**487,422**	**20.8**	**12,300**	**266,100**	**21.6**

*Արտադրության ծավալը և հասույթը ներկայացված են ձեռքբերման օրվանից մինչև դեկտեմբերի 31-ը:

Հասույթը չափվում է հաշվի առնելով հաճախորդների հետ կնքված պայմանագրում նշված հատուցման գինը: Հաշվետու ժամանակաշրջանում Խումբն ունեցել է 1 հաճախորդ՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն:

Խումբը ճանաչում է հասույթ այն պահին, երբ ապրանքի կամ ծառայության նկատմամբ վերահսկողությունը փոխանցվում է հաճախորդին: Հետևյալ աղյուսակում ներկայացված է հաճախորդների հետ կնքված պայմանագրերով կատարողական պարտավորությունների կատարման բնույթը և ժամկետները, ներառյալ վճարման էական պայմանները և հասույթի ճանաչման քաղաքականությունները:

Ապրանքի/ծառայության տեսակ	Կատարողական պարտավորությունների կատարման բնույթը և ժամկետները, ներառյալ վճարման էական պայմանները	Հասույթի ճանաչումը համաձայն ՖՀՄՍ 15-ի
Էլեկտրաէներգիայի վաճառք	Էլեկտրաէներգիայի վաճառքի պայմանագրից ստացված հասույթը ճանաչվում է էլեկտրաէներգիան հաճախորդին մատակարարելու պահին: Մատակարարված էլեկտրաէներգիայի հաշիվ-ապրանքագրերը տրամադրվում են ամսական կտրվածքով և սովորաբար ենթակա են վճարման 30 օրվա ընթացքում:	Հաճախորդները միաժամանակ ստանում և սպառում են էլեկտրաէներգիան տրամադրվելու պահին: Խումբը ժամանակի ընթացքում փոխանցում է ծառայության վերահսկողությունը, հետևաբար բավարարում է կատարողական պարտավորությունը և ճանաչում հասույթը ժամանակի ընթացքում: Փոփոխական հատուցումը, որը ներկայացնում է սպառված էլեկտրաէներգիան բազմապատկած գործող սակագներով, չափվում է յուրաքանչյուր օրացուցային ամսվա վերջում հաշվիչ սարքերից վերցված տվյալների հիման վրա:

8 Ֆինանսական եկամուտ և ծախսեր

	2024թ.	2023թ.
Բանկային վարկերից տոկոսային ծախսեր	(229,819)	(129,274)
Ընդամենը ֆինանսական ծախսեր	**(229,819)**	**(129,274)**
Կարճաժամկետ բանկային վարկերից տոկոսային եկամուտ	1,956	1,654
Բանկային հաշիվներից տոկոսային եկամուտ	632	3,181
Ընդամենը ֆինանսական եկամուտ	**2,588**	**4,835**
Զուտ ֆինանսական ծախսեր	**(227,231)**	**(124,439)**

9 Շահութահարկի գծով (ծախս) փոխհատուցում

	2024թ.	2023թ.
Հետաձգված հարկ (տե՛ս Ծանոթագրություն 13)	(8,575)	16,564
Ընդամենը շահութահարկի գծով (ծախս) փոխհատուցում	**(8,575)**	**16,564**

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

	2024թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2023թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ (վնաս) մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ)	35,406		(992)	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2023թ.՝ 18%)	(6,373)	(18.0)	179	(18.0)
Կուտակված հարկային վնասի ավելացում	33,441	94.5	27,957	(2,818)
Չնվազեցվող ծախսեր, զուտ	(36,326)	(102.6)	(29,404)	2,964
Ընթացիկ տարում ճանաչված՝ նախորդ տարիների ընթացիկ հարկին վերաբերող ճշգրտումներ	(7,962)	(22.5)	23,145	(2,333.4)
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ (վնաս)	8,645	24.4	(5,313)	535.6
Շահութահարկի գծով (ծախս) փոխհատուցում	**(8,575)**	(24.2)	**16,564**	(1,670.0)

10 Ոչ նյութական ակտիվներ

	Լիցենզիաներ	Ընդամենը
Սկզբնական արժեք		
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-
Դուստր ձեռնարկությունների ձեռքբերումից ստացված ավելացում	179,280	**179,280**
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**179,280**	**179,280**
Դուստր ձեռնարկությունների ձեռքբերումից ստացված ավելացում	143,425	**143,425**
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**322,705**	**322,705**
Կուտակված ամորտիզացիա		
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-
Տարվա հաշվարկ	(1,608)	**(1,608)**
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(1,608)**	**(1,608)**
Տարվա հաշվարկ	(13,462)	**(13,462)**
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(15,070)**	**(15,070)**
Հաշվեկշռային արժեք		
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**177,672**	**177,672**
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**307,635**	**307,635**

Ոչ նյութական ակտիվները ներառում են բիզնես միավորման արդյունքում ձեռք բերված լիցենզիաները, որոնք ճանաչվել են «Ոչ նյութական ակտիվներ» ՀՀՄՍ 38-ի համաձայն: Լիցենզիաների իրական արժեքը որոշվել է զեղչված դրամական հոսքերի մոդելի հիման վրա և ճանաչվել է 143,425 հազար ՀՀ դրամ (2023թ.՝ 179,280 հազար ՀՀ դրամ) (տե՛ս Ծանոթագրություն 6):

13,462 հազար ՀՀ դրամ (2023թ.՝ 1,608 հազար ՀՀ դրամ) ամորտիզացիան ներկայացված է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում:

11 Հիմնական միջոցներ

	Հող	Կայան	Կահույք և պարագաներ	Անավարտ շինարա-ություն	Ընդամենը
Սկզբնական արժեք					
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	**85,676**	**1,788,052**	-	-	**1,873,728**
Ավելացում	42,000	-	1,749	12,727	56,476
Դուստր ձեռնարկությունների ձեռքբերումից ստացված ավելացում	212,969	1,382,106	55,090	-	1,650,165
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	**340,645**	**3,170,158**	**56,839**	**12,727**	**3,580,369**
Ավելացում	3,650	348,254	3,499	1,561,984	1,917,387
Դուստր ձեռնարկությունների ձեռքբերումից ստացված ավելացում	227,991	922,697	-	-	1,150,688
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**572,286**	**4,441,109**	**60,338**	**1,574,711**	**6,648,444**
Կուտակված մաշվածություն և արժեզրկում					
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	**(36,267)**	-	-	**(36,267)**
Տարվա հաշվարկ	-	(56,251)	(1,791)	-	(58,042)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	**(92,518)**	**(1,791)**	-	**(94,309)**
Տարվա հաշվարկ	-	(116,694)	(7,977)	-	(124,671)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	**(209,212)**	**(9,768)**	-	**(218,980)**
Հաշվեկշռային արժեք					
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	**340,645**	**3,077,640**	**55,048**	**12,727**	**3,486,060**

	Հող	Կայան	Կահույք և պարագաներ	Անավարտ շինարա-ություն	Ընդամենը
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**572,286**	**4,231,897**	**50,570**	**1,574,711**	**6,429,464**

Բանկային վարկերը ապահովելու նպատակով Խումբը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրավադրել է 6,429,464 հազար ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3,486,060 հազար ՀՀ դրամ) հաշվեկշռային արժեք ունեցող հիմնական միջոցներ:

2024թ. ընթացքում անավարտ շինարարության համար կապիտալացվել է 2,715 հազար ՀՀ դրամ վարկային ծախսեր և 16,367 հազար ՀՀ դրամ պետական դրամաշնորհներ (տե՛ս Ծանոթագրություն 12), որոնք կապված են բանկերից ստացված սուբսիդավորված վարկերի հետ:

12 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

12.1 Բանկային վարկեր

	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ապահովված բանկային վարկեր	418,056	185,177	3,785,279	2,705,500
Ընդամենը բանկային վարկեր	**418,056**	**185,177**	**3,785,279**	**2,705,500**

Այս ծանոթագրությունը տեղեկատվություն է տրամադրում բանկերից ստացված տոկոսային ժամկետային վարկերի պայմանագրերով սահմված պայմանների մասին, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով: Խմբի տոկոսադրույքի, արտարժույթի և իրացվելիության ռիսկի նկատմամբ ազդեցությունը ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Ծանոթագրություն 20-ում:

Խումբ			2024		2023	
	Արժույթ	Ժամկետ	Ընթացիկ մաս	Ոչ ընթացիկ մաս	Ընթացիկ մաս	Ոչ ընթացիկ մաս
Սոլիս ՍՊԸ	ԱՄՆ դոլար	4/8/2033	3,109	312,201	23,553	323,715
Սոլիս ՍՊԸ	ԱՄՆ դոլար	2/8/2033	38,511	279,573	39,733	324,307
Սոլիս ՍՊԸ	ԱՄՆ դոլար	5/6/2033	25,939		3,208	26,446
Սոլիս Ֆարմ ՍՊԸ	ԱՄՆ դոլար	12/20/2039	20,238	604,105	23,256	623,745
Սոլիս Ֆարմ ՍՊԸ	ԱՄՆ դոլար	12/15/2034	137,128	847,828	66,530	984,012
Սոլիս Ֆարմ ՍՊԸ	ԱՄՆ դոլար	4/18/2034	30,731	267,484	-	-
Սոլիս Ֆարմ ՍՊԸ	ԱՄՆ դոլար	10/20/2034	11,279	71,555	-	-
Սոլիս Ֆարմ ՍՊԸ	ԱՄՆ դոլար	10/20/2034	10,483	136,654	-	-

Դաս Էնտերիա Զոլարքաֆթվերք» ՓԲԸ	ԱՄՆ դոլար	7/7/2034	33,212	187,488	13,458	227,016
Դաս Էնտերիա Զոլարքաֆթվերք» ՓԲԸ	ԱՄՆ դոլար	7/26/2034	29,136	165,614	15,439	196,592
Մոդուլ Սան ՍՊԸ	ԱՄՆ դոլար	11/24/2033	4,651	36,866	-	-
Մոդուլ Սան ՍՊԸ	ԱՄՆ դոլար	12/16/2033	4,262	34,131	-	-
Մոդուլ Սան ՍՊԸ	ԱՄՆ դոլար	3/17/2033	2,431	20,083	-	-
Մոդուլ Սան ՍՊԸ	ԱՄՆ դոլար	11/22/2033	6,585	52,192	-	-
Մոդուլ Սան ՍՊԸ	ԱՄՆ դոլար	10/21/2033	33,235	260,639	-	-
Մոդուլ Սան ՍՊԸ	ԱՄՆ դոլար	3/2/2034	1,750	14,303	-	-
Սաներջի ՍՊԸ	ԱՄՆ դոլար	2/28/2037	1,694	39,447	-	-
Սաներջի ՍՊԸ	ԱՄՆ դոլար	2/28/2037	14,553	242,566	-	-
Սաներջի ՍՊԸ	ԱՄՆ դոլար	2/28/2037	9,129	212,550	-	-
Ընդամենը			**418,056**	**3,785,279**	**185,177**	**2,705,500**

Բանկային վարկերը ապահովված են Խմբի ընկերությունների բաժնետոմսերի 100%-ով և Խմբի հիմնական միջոցներով (տե՛ս Ծանոթագրություն 11):

12.2 Այլ ֆինանսական գործիքներ

Հետևյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները համարվում են իրական արժեքի ողջամիտ գնահատական.

- առևտրային և այլ դեբիտորական պարտքեր
- դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, և
- առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր:

13 Հետաձգված հարկեր

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	1 հունվարի 2024թ.	Դուստր ընկերությունների ձեռքբերում	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2024թ.
Հարկային վնասի փոխանցում հաջորդ ժամանակաշրջան	47,595	472	33,441	81,508
Հիմնական միջոցներ	(70,968)	(46,792)	(44,792)	(162,552)
Ոչ նյութական ակտիվներ	(31,981)	(25,817)	2,423	(55,375)
Այլ	2,973	-	353	3,326

	1 հունվարի 2024թ.	Դուստր ընկերութ-յունների ձեռքբերում	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2024թ.
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ (պարտավորություններ)	**(52,381)**	**(72,137)**	**(8,575)**	**(133,093)**
Վերագրելի է՝				
Հետաձգված հարկային ակտիվներ՝	1,218			1,469
Հետաձգված հարկային պարտավորություններ՝	(53,599)			(134,562)

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	1 հունվարի 2023թ.	Դուստր ընկերութ-յունների ձեռքբերում	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2023թ.
Հարկային վնասի փոխանցում հաջորդ ժամանակաշրջանում	5,827	13,812	27,957	47,596
Հիմնական միջոցներ	(16,781)	(37,260)	(16,927)	(70,968)
Ոչ նյութական ակտիվներ	-	(32,271)	289	(31,982)
Այլ	505	2,468	-	2,973
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ (պարտավորություններ)	**(10,449)**	**(53,251)**	**11,319**	**(52,381)**
Վերագրելի է՝				
Հետաձգված հարկային ակտիվներ՝	6,269			1,218
Հետաձգված հարկային պարտավորություններ՝	(16,718)			(53,599)

Խմբի մակարդակով հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն հաշվանցվել, քանի որ ղեկավարությունը որևէ մտադրություն չունի ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները մարել զուտ հիմունքով կամ միաժամանակ, ինչպես պահանջվում է ՀՀՄՍ 12՝ «Շահութահարկեր» ստանդարտով:

14 Կանխավճարներ և դեբիտորական պարտքեր

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դեբիտորական պարտքերը կազմում է 44,786 հազար ՀՀ դրամ (2023թ.՝ 27,249 հազար ՀՀ դրամ), որն առաջացել է«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին վաճառված էլեկտրաէներգիայից:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ ընթացիկ կանխավճարները ներառում են արևային կայանի կառուցման և ֆոտովոլտային վահանակների ձեռքբերման համար կապալառուներին տրված կանխավճարները՝ 404,777 հազար ՀՀ դրամ-ի չափով (2023թ.՝ 392,242 հազար ՀՀ դրամ):

2024 և 2023թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կանխավճարները և դեբիտորական պարտքերը ժամկետանց կամ արժեզրկված չեն համարվում:

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի ողջամիտ գնահատական:

Էլեկտրաէներգիայի վաճառքի միջին վարկային ժամանակահատվածը 30 օր է (2023թ.՝ 30 օր): Առևտրային դեբիտորական պարտքերի համար տոկոսներ չեն գանձվում:

Ղեկավարությունը կարծում է, որ պետական բյուջեից ԱԱՀ և հարկային գծով դեբիտորական պարտքերը ամբողջովին փոխհատուցելի են:

Խմբի բոլոր առևտրային և այլ դեբիտորական պարտքերը համեմատական ժամանակաշրջաններում վերանայվել են արժեզրկման ցուցանիշների համար: Արժեզրկման ցուցանիշներ չեն բացահայտվել:

Վարկային ռիսկի ազդեցությունը և ակնկալվող պարտքային ռիսկի մասին վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 20-ում: Ընթացիկ և համեմատական արժեզրկման պահուստները կիրառում են ՖՀՄՍ 9-ի ակնկալվող վնասի մոդելը:

15 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Կանխիկ միջոցներ դրամով	75,721	43,294
Ավանդներ դրամով	27,916	-
Կանխիկ միջոցներ ԱՄՆ դոլարով	230,072	482,783
Կանխիկ միջոցներ ռուբլիով	126	-
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**333,835**	**526,077**

16 Սեփական կապիտալ

16.1 Կանոնադրական կապիտալ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի կանոնադրական կապիտալը բաղկացած է 300 001 000 ՀՀ դրամ անվանական արժեքով 1 բաժնետոմսից (2023թ.՝ 1 բաժնետոմս՝ 300 001 000 ՀՀ դրամ անվանական արժեքով):

16.2 Լրացուցիչ կապիտալ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ լրացուցիչ կապիտալը ներառում է 1,125,188 հազար ՀՀ դրամ (2023թ.՝ 1,125,188 հազար ՀՀ դրամ) բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամբ բաժնետերերի ներդրման ավելցուկ և 1,695,912 հազար ՀՀ դրամ վճարված, բայց չգրանցված կապիտալ (2023թ.՝ 211,934 հազար ՀՀ դրամ):

17 Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրում

Խմբի պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	**1,233,403**
Դրամային հոսքերից	
Ստացված գումար	-

	Ընդամենը
Մարումներ	(93,855)
Վճարված տոկոսներ	(129,274)
Ոչ դրամային հոսքերից	
Դուստ ընկերության ձեռքբերում	1,717,178
Տոկոսի հաշվեգրում	129,274
Փոխարժեքային տարբերությունից վնաս	33,951
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,890,677**
Դրամային հոսքերից	
Ստացված գումար	1,032,424
Մարումներ	(426,613)
Վճարված տոկոսներ	(232,534)
Ոչ դրամային հոսքերից	
Դուստ ընկերության ձեռքբերում	762,862
Տոկոսի հաշվեգրում	248,900
Սուբսիդավորված տոկոս	(16,366)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	(58,709)
Այլ	2,694
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,203,335**

18 Կապակցված կողմեր

18.1 Վերահսկողություն

Խմբի միակ բաժնետերը և վերջնական վերահսկողը ԵՄ-Հայաստան ՓՄՁ հիմնադրամն է:

18.2 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

Գործարքներ

	2024թ.	2023թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ (մեկ անձի հաշվով)	25,630	11,281

18.3 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Խմբի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Գործարքներ

	2024թ.	2023թ.
Մայր ընկերություն		
Ստացված փոխառություններ	48,000	-
Ծառայությունների ձեռքբերում	9,360	17,132
Փոխառությունների տրամադրում	3,000	-
	60,360	**17,132**
Դուստր ընկերություններ		

Գործարքներ

	2024թ.	2023թ.
Ստացված փոխառություններ	15,545	-
Ապրանքների և հումքի ձեռքբերում	274	39,012
Ծառայությունների ձեռքբերում	1,478,430	328,200
Փոխառությունների մարում	60,545	-
	1,554,795	**367,212**
Ասոցիացված ընկերություններ		
Ապրանքների վաճառք	274	39,012
Ծառայությունների մատուցում	1,487,790	345,332
	1,488,065	**384,344**

Մնացորդներ

	2024թ.	2023թ.
Մայր ընկերություն		
Տրամադրված փոխառություններ	4,551	51,566
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	(780)	(6,067)
	3,771	**45,499**
Դուստր ընկերություններ		
Տրամադրված փոխառություններ	(4,551)	(51,566)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	(202,354)	(12,212)
	(206,905)	**(63,778)**
Ասոցիացված ընկերություններ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	203,134	18,279
	203,134	**18,279**

19 Պայմանականություններ

19.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Խումբը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Խմբի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Խումբը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

19.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

19.3 Դատական գործընթացներ

Ղեկավարության կարծիքով, ներկայումս չկան դատական գործընթացներ կամ չլուծված պահանջներ, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության կամ ֆինանսական վիճակի վրա:

19.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարութունը համոզված է, որ Խումբը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Խումբը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանություններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

20 Ֆինանսական գործիքների ռիսկ

Ռիսկի կառավարման քաղաքականությունները և նպատակները

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Խումբը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

20.1 Շուկայական ռիսկի վերլուծություն

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Խումբը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, տոկոսադրույքային ռիսկի և սեփական կապիտալի գների, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժույթի ռիսկ

Խումբը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Խմբի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Խմբի՝ արտերկրյա վաճառքներից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով: Խումբն ունի ԱՄՆ դոլարով վարկեր:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Խմբի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 10% (2023թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2023թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2023թ.՝ 10%):

Դրամի արժևորումն ԱՄՆ դոլարի 10%-ով (2023թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը.

	ԱՄՆ դոլարի ազդեցություն	
	2024թ.	2023թ.
Շահույթ կամ վնաս	236,412	71,068

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Խմբի՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

Տոկոսադրույքային ռիսկ

Հաստատուն տոկոսադրույքով գործիքների իրական արժեքի զգայունության վերլուծություն

Խումբը հաստատուն տոկոսադրույքով որևէ ֆինանսական գործիք չի դասակարգում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով: Հետևաբար, հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների փոփոխությունը որևէ ազդեցություն չի ունենա շահույթի կամ վնասի, ինչպես նաև սեփական կապիտալի վրա:

Փոփոխական տոկոսադրույքով գործիքների դրամական հոսքերի զգայունության վերլուծություն

Հաշվետվու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների 100 բազիսային միավորի ողջամիտ փոփոխությունը կավելացներ (կնվազեցներ) շահույթը կամ վնասը հարկերից զուտ՝ ստորև նշված գումարների չափով: Այս վերլուծությունը ենթադրում է, որ մնացած բոլոր փոփոխականները, մասնավորապես՝ արտարժույթի փոխարժեքները, մնում են անփոփոխ:

	2024թ.	2023թ.
100 բազիսային միավորի աճ	5,354	5,871
100 բազիսային միավորի նվազում	(5,354)	(5,871)

20.2 Իրացվելիության ռիսկի վերլուծություն

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Խումբը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Խմբի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Խումբը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2024թ.	Բանկային վարկեր	Կրեդիտորական պարտքեր	Այլ պարտավորություններ	Ընդամենը
Ըստ պահանջի և մինչև 2 ամից	91,512	212,916	44,711	349,139
2 ամսից մինչև 12 ամիս	569,407	-	-	569,407
12 ամսից մինչև 2 տարի	577,237	-	-	577,237
2 տարուց մինչև 5 տարի	1,749,383	-	-	1,749,383
Ավելի քան 5 տարի	2,847,261	-	-	2,847,261
	5,834,800	**212,916**	**44,711**	**6,092,427**

2024թ.	Բանկային վարկեր	Կրեդիտորական պարտքեր	Այլ պարտավորություններ	Ընդամենը
Ըստ պահանջի և մինչև 2 ամից	66,409	62,220	3,788	132,417
2 ամսից մինչև 12 ամիս	363,927	-	-	363,927
12 ամսից մինչև 2 տարի	397,794	-	-	397,794
2 տարուց մինչև 5 տարի	1,169,789	-	-	1,169,789
Ավելի քան 5 տարի	2,337,218	-	-	2,337,218
	4,335,137	**62,220**	**3,788**	**4,401,145**

Խումբն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Խմբի դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերից դրամական հոսքերը պայմանագրով ենթակա են ստացման 1 ամսվա ընթացքում:

20.3 Պարտքային ռիսկի վերլուծություն

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Խումբը կարող է ֆինանսական կորուստներ կրել:

Դեբիտորական պարտքեր. Խմբի առևտրային դեբիտորական պարտքերի միակ պայմանագրային գործընկերը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն է, որին Moody's-ի կողմից շնորհել է Ba2 վարկանիշ, որը ամենաբարձրն է Հայաստանում: Ղեկավարությունը գնահատում է, որ Խմբի առջև ծառացած վարկային ռիսկը նվազագույնն է, և Խմբի դեբիտորական պարտքերի համար արժեզրկման պահուստ չի ստեղծվել:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ. Դրամական միջոցները և դրանց համարժեքները պահվում են հայկական բանկերում: Ղեկավարության գնահատմամբ, վարկային ռիսկը նվազագույն է, իսկ Խմբի դրամական միջոցների և դրանց համարժեքների համար արժեզրկման պահուստ չի ստեղծվել:

21 Իրական արժեքի չափում

Խումբը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

21.1 Ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափում

Ղեկավարության կարծիքով, Խմբի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները գրեթե համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները գնահատվում են զեղչված դրամական հոսքերի մեթոդով: Իրական արժեքի գնահատման գործընթացում էական մուտքային տվյալներ չկան: Իրական արժեքի գնահատումը դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի 2 մակարդակում:

21.2 Ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափում

Ոչ նյութական ակտիվների և հիմնական միջոցների իրական արժեքը որոշվել է ձեռքբերման գործընթացի շրջանակներում: Այս գնահատումը դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի 3 մակարդակում: Գործարքը կնքվել է անկախ կողմերի միջև և համարվում է շուկայական գործարք: Ոչ ֆինանսական ակտիվների, ինչպիսիք են հիմնական միջոցները, ինչպես նաև ոչ նյութական ակտիվները, իրական արժեքի չափումը հաշվի է առել այնպիսի գործոններ, ինչպիսիք են հողօգտագործման նպատակը, անհրաժեշտ տեխնիկական պայմանների առկայությունը և գործող լիցենզիաները: Ոչ նյութական ակտիվները գնահատվել են հաշվի առնելով այն որ նմանատիպ լիցենզիաներ այլևս չեն տրամադրվում կառավարության կողմից: Ձեռքբերման գնի և ձեռք բերված զուտ ակտիվների իրական արժեքի միջև եղած տարբերությունը Խմբի կողմից ճանաչվել է որպես գուդվիլ: Ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Ծանոթագրություն 6-ում:

22 Հետհաշվեկշռային իրադարձություններ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվանից հետո՝ 2025թ. մարտին, որպես կանոնադրական կապիտալ գրանցվել է 1,695,912 հազար ՀՀ դրամ լրացուցիչ կապիտալ:

«Սոլար Ֆարմ-2»-ին պատկանող 5 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային կայանի կառուցումն ավարտվել է և շահագործման է հանձնվել 2025թ. հունվարին: Կայանը սկսել է էլեկտրաէներգիայի վաճառքը 2025թ. մարտի 26-ից:

2025թ. մարտին ավարտվել է «Սաներջի» 5 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային կայանի կառուցումը, իսկ շահագործման հանձնումը նախատեսվում է 2025թ. ապրիլին:

«Մեծ Մասրիկ»-ին պատկանող 5 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային կայանի համար դրական բնապահպանական գնահատական է ստացվել 2025թ. փետրվարին, իսկ կայանի շինարարությունը սկսվել է 2025թ. մարտին: